ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Քաղաքականության վերլուծություն

Սույն հրապարակումը պատրաստվել է Միջազգային հանրապետական ինստիտուտի (ՄՀԻ) և Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի (ԹԻՀԿ) կողմից՝ Արցախից բռնի տեղահանված անձանց հիմնած «Խաչեն» և «Քաղաքացիական հաբ» հասարակական կազմակերպությունների հետ համատեղ իրականացված հետազոտության արդյունքում:

Հետազոտությունը հնարավոր է դարձել Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) և Ժողովրդավարության ազգային հիմնադրամի միջոցով:

Բովանդակության համար պատասխանատու են հեղինակները, և պարտադիր չէ, որ այն արտահայտի դրամաշնորհատուների տեսակետները:

.

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ.

քաղաքականության վերլուծություն

---

www.transparency.am
Երևան 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 2
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 3
ՆԱԽԱԲԱՆ 4
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 7
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 8
Ա. Բռնի տեղահանված անձանց իրավական կարգավիճակը 9
Բ. Բռնի տեղահանված անձանց ֆինանսական աջակցությունը 17
Գ. Բռնի տեղահանված անձանց բնակարանային ապահովման ծրագիրը 26
Դ. Բռնի տեղահանված անձանց համար առողջապահական համակարգի հասանելիությունը 32
Ե. Բռնի տեղահանված անձանց համար կրթական համակարգի հասանելիությունը և մշակութային ժառանգության պահպանությունը 36
Զ. Բռնի տեղահանված անձանց զբաղվածությունը 43
Է. Բռնի տեղահանված անձանց համար հասանելի տնտեսական զարգացման ծրագրերը . 55
Ը. Բռնի տեղահանված անձանց աջակցության ընդհանուր կառավարումը 62

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԱՏՄ	Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին
ԱՍՀՆ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ԱՀ	Արցախի Հանրապետություն
ԹԻՀԿ	Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ԼՂ	Լեռնային Ղարաբաղ
ԿԳՄՍՆ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ՄՍԾ	Միասնական սոցիալական ծառայություն
ՄՀԻ	Միջազգային հանրապետական ինստիտուտ
ՆԳՆ	Ներքին գործերի նախարարություն
ՇՄԶ	Շարունակական մասնագիտական զարգացում
ՍԷԿՏ	Սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգ

ՆԱԽԱԲԱՆ

Սույն վերլուծությունն ամփոփում է Ադրբեջանի սանձազերծած ռազմական ագրեսիայի հետևանքով Լեռնային Ղարաբաղից (ԼՂ կամ Արցախ) տեղահանված և Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) ապաստանած բնակչությանը տրամադրվող պետական աջակցության վերաբերյալ հետազոտության արդյունքները:

Հետազոտության նպատակն է՝ աջակցել ՀՀ կառավարությանը՝ գնահատելու իր կողմից իրականացվող ծրագրերի արդյունավետությունը, վերհանելու մարտահրավերները և ժամանակին, հասցեական ու բավարար չափով արձագանքելու վերհանված խնդիրներին: Այն կարող է օգտակար լինել նաև դոնոր համայնքի (պետական գործակալությունների, հիմնադրամների, հասարակական կազմակերպությունների) համար՝ առաջնահերթությունները սահմանելու, տեղահանված արցախցիներին տրամադրվող աջակցությունն ուղղորդելու և կազմակերպելու առումով:

Հետազոտության արդյունքում մշակվել են քաղաքականության համառոտագրեր՝ Հայաստանում Արցախից տեղահանված անձանց բարօրությանն ու ինտեգրմանն առնչվող հիմնական հարցերի շուրջ, որոնք ներառում են իրավական կարգավիճակը, ֆինանսական աջակցությունը, բնակարանային ապահովումը, առողջապահական ծառայությունը, կրթական համակարգի հասանելիությունը, զբաղվածության ապահովումը և տնտեսական զարգացումը, ինչպես նաև ընդհանուր բնույթի համակարգային հարցեր:

Բռնի տեղահանված արցախցիների խնդիրների շուտափույթ և համապարփակ լուծումը ծայրահեղ կարևոր է, քանի որ կարող է նպաստել տեղահանումից տուժած և ծանր վիճակում գտնվող անձանց հիմնական կարիքների ապահովմանը, հոգեբանական ապաքինմանը, արժանապատվության վերականգնմանը, ապահովության զգացողությանը, հետագա զարգացմանը, սեփականության ձեռքբերմանը և, ի վերջո, Հայաստանի Հանրապետությունում նրանց ամրապնդմանը:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղում (Արցախ) Ադրբեջանի կողմից սանձազերծված ռազմական ագրեսիայի հետևանքով ավելի քան 100,000 անձ բռնի տեղահանվեց Հայաստանի Հանրապետություն:[1] Տեղահանվածների զանգվածային ներհոսքը լուրջ մարտահրավեր էր ՀՀ իշխանությունների համար, ինչին կառավարությունն արձագանքեց արտակարգ միջոցառումներով՝ առաջնային նպատակ ունենալով կազմակերպելու արցախցիների գրանցումն ու ժամանակավոր աջակցության տրամադրումը: Կառավարության հաջորդ քայլը տեղահանվածների կենսագործունեության և ինտեգրման համար երկարաժամկետ լուծումների որոնումն էր, այդ թվում՝ կարգավիճակով պայմանավորված իրավական պաշտպանությունը, սոցիալական և տնտեսական իրավունքների ապահովումը:

2023 թվականի սեպտեմբերին ՀՀ կառավարության արտակարգ մոբիլիզացիան և բռնի տեղահանված անձանց առաջին օգնության արագ կազմակերպումը հանրության կողմից

[1] ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ, *Հայաստանում փախստականների կարիքներին արձագանքման ծրագիր*, հոկտեմբեր 2023 - մարտ 2024, https://shorturl.at/hXjE6, դիտված՝ 08.11.2024 թ.:

դրական արձագանք ստացան, սակայն նրանց տրամադրվող հետագա աջակցության միջոցառումներն ուղեկցվեցին բազմաթիվ խնդիրներով ու մարտահրավերներով, որոնցից շատերը դեռևս պատշաճ լուծում չեն ստացել: Այսօր՝ Հայաստան մուտք գործելուց ավելի քան մեկ տարի անց, տեղահանված անձանց մեծամասնությունն ապրում է անորոշության մեջ՝ իրավական կարգավիճակի, կացարանի, ֆինանսական աջակցության, աշխատանքի, տնտեսական հեռանկարի առումով: Սրան գումարվում են 2020 թվականի արցախյան պատերազմի հետևանքով իրենց բնակավայրերը կորցրած և Հայաստանում ապաստանած մոտ 30 հազար անձանց[2] դեռևս չլուծված մի շարք խնդիրներ:

Վերջին մեկ տարում մի շարք կազմակերպությունների կողմից իրականացվել են տարբեր ուսումնասիրություններ՝ գնահատելու ՀՀ քաղաքացիների և բռնի տեղահանված անձանց ընկալումները ՀՀ կառավարության ջանքերի արդյունավետության վերաբերյալ:

Միջազգային հանրապետական ինստիտուտի (ՄՀԻ) կողմից իրականացվող պարբերական ուսումնասիրությունների շրջանակում երկու ժամանակահատվածում՝ 2023 թ. դեկտեմբերին և 2024 թ. սեպտեմբերին, Հայաստանի տնային տնտեսություններին հարցեր են ուղղվել տեղահանման ճգնաժամի հետևանքները ՀՀ կառավարության կողմից կառավարելու արդյունավետության վերաբերյալ: 2024 թ. սեպտեմբերին իրականացված հետազոտության տվյալներով, Արցախից բռնի տեղահանված անձանց ճգնաժամի կառավարումից հանրային գոհունակությունը («շատ գոհ» և «ավելի շուտ՝ գոհ») 2023 թ. դեկտեմբերի ցուցանիշների համեմատ նվազել է 9%-ով՝ 73%-ից հասնելով 66%-ի:[3] Որպես դժգոհության առավել կարևոր պատճառներ հարցվողները նշել են տեղահանված բնակչությանը բնակարանով ապահովելու հարցում ձախողումները (30%), աշխատանքով ապահովելու խնդիրը (15%), աջակցության անհավասար բաշխումը (14%), խտրականության դրսևորումները (14%) և փաստաթղթային հարցերի կարգավորման անկարողությունը (11%):[4] Պետական ծառայություններ մատուցողների կողմից արցախցիների նկատմամբ խտրական դրսևորումների վերաբերյալ հանրային ընկալումը կտրուկ աճել է՝ նախորդ տարվա 4% ցուցանիշի համեմատ:[5]

2023 թ. դեկտեմբերին Պարենի համաշխարհային ծրագրի իրականացրած հետազոտությունն ի հայտ է բերել մի շարք կարևոր խնդիրներ՝ պայմանավորված իրավական կարգավիճակի անորոշությամբ, անհրաժեշտ փաստաթղթերի թերի լինելով և (կամ) բացակայությամբ, որոնք, իրենց հերթին, անդրադառնում են սոցիալական աջակցության և զբաղվածության ապահովման վրա: Ընդգծվել են տղամարդկանց զինվորական ծառայությունում ներգրավելու հետ կապված խոչընդոտները: Հետազոտության արդյունքների համաձայն, տեղահանվածները բախվում են բարդ վարչարարական գործընթացների, տեղյակ չեն կամ դժվարանում են օգտվել աջակցության պետական ծրագրերի առցանց գործիքներից ու համակարգերից, իսկ խնդիրների լուծման

[2] Ազատություն ռադիոկայան, *Ավելի քան 100 հազար բռնի տեղահանված անձ Արցախից ժամանել է Հայաստան,* 30.09.2023 թ., https://www.azatutyun.am/a/32617179.html, դիտված՝ 08.11.2024 թ.:
[3] ՄՀԻ, *Հանրային կարծիքի ուսումնասիրություն. Հայաստանի առկա բնակչություն,* սեպտեմբեր 2024, https://www.iri.org/resources/public-opinion-survey-residents-of-armenia, դիտված՝ 08.11.2024 թ.:
[4] Նույն տեղում:
[5] ՄՀԻ, *Հանրային կարծիքի ուսումնասիրություն. Հայաստանի առկա բնակչություն*, դեկտեմբեր 2023, https://www.iri.org/resources/public-opinion-survey-residents-of-armenia-december-2023/ , դիտված՝ 08.11.2024 թ.:

ձգձգումը խորացնում է նրանց դժգոհությունը՝ հանգեցնելով խաբված և անտեսված լինելու զգացողության և կառավարության ու երկրի նկատմամբ անվստահության:[6]

2024 թ. հունվար-փետրվարին «Մարդը կարիքի մեջ» բարեգործական կազմակերպության իրականացրած կարիքների գնահատման արդյունքներով, հարցվածների գերակշիռ մասը՝ 74.20%-ը, նշել է, որ իրենք կամ իրենց ընտանիքի անդամները տեղահանվելուց հետո չեն կարողացել աշխատանք գտնել: Նշանակալի տոկոսը՝ 18.88%-ը, կարողացել է տեղահանվելուց հետո գտնել լրիվ դրույքով աշխատանք, իսկ ավելի փոքր մասը՝ 6.91%-ը, հայտնել է, որ գտել է կես դրույքով աշխատանք:[7]

2024 թ. փետրվար և մայիս ամիսներին հայաստանյան ԷյՓիԱր Գրուփ (APR Group) կազմակերպության կողմից երկու փուլով իրականացված ուսումնասիրության արդյունքներով,[8] 1,200 հարցվածների ավելի քան 90.5%-ը գտնում էր, որ Արցախից եկած անձանց համար Հայաստանում աշխատանք գտնելը դժվար է, և որ իրենց շրջապատում քչերն են գործ գտել: Արցախում աշխատանք ունեցող էր հարցվողների 84.7%-ը, մինչդեռ Հայաստանում աշխատանքի տեղավորվել է 42.9%-ը: Հարցվածների ավելի քան 4/5-ը պետության կողմից իրականացվող՝ զբաղվածության հետ կապված ծրագրերից/ծառայություններից առհասարակ չէր օգտվել: Աշխատող 534 անձանց զգալի մասը՝ 45.7%-ը, աշխատանք էր գտել ծանոթի, բարեկամի, հարևանի միջոցով: Ընդամենը 5.6%-ն էր աշխատանք գտել Միասնական սոցիալական ծառայությունների (ՄՍԾ) տարածքային կենտրոնների, ևս 1.9%-ը՝ համայնքային կամ մարզային կառույցների միջոցով:

«Պրիզմա» ընկերության կողմից 2024 թ. հոկտեմբերին հրապարակված ուսումնասիրությունը՝[9] տեղացի և տեղահանված անձանց կողմից սոցիալական արդարության և պետական աջակցության ծրագրերի ընկալումների վերաբերյալ, վեր է հանել արցախցիների իրավական կարգավիճակին առնչվող մտահոգությունները, երկարաժամկետ անորոշությունները, տեղացիների և բռնի տեղահանվածների իրազեկության և պատկերացումների տարբերությունը և դրա արդյունքում հնարավոր լարվածության ռիսկերը: Սույն վերլուծությունում ընդգծվել են բռնի տեղահանված անձանց տրամադրվող ֆինանսական աջակցությունը շարունակելու, զբաղվածության ծրագրերը հասցեական դարձնելու, ձեռնարկատիրական գործունեությանն օգնելու անհրաժեշտությունը և այլ հարցեր: Կարևորվել է նաև տեղահանվածներին տրամադրվող դոնորական աջակցության կառավարման թափանցիկության ու հաշվետվականության ապահովումը:

Վերոնշյալ հետազոտությունները ցույց են տալիս, որ չնայած ՀՀ կառավարության կողմից ներդրվող ծավալուն ջանքերին, տեղահանված արցախցիներն ունեն բազմաթիվ դժգոհություններ՝ իրականացվող ծրագրերից, ինչը վկայում է այն մասին, որ իրականացվող

---

[6] Պարենի համաշխարհային ծրագիր, *Հայաստանում բռնի տեղահանված բնակչության և ընդունող համայնքների սոցիալ-տնտեսական ինտեգրման խոչընդոտների վերլուծություն*, փետրվար 2024, https://www.wfp.org/publications/barrier-analysis-social-economic-integration-refugee-population-and-host-communities, դիտված՝ 17.10.2024 թ.:

[7] «Մարդը կարիքի մեջ» բարեգործական ՀԿ, *Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված բնակչության մարտահրավերների և կարիքների բազմաոլորտային գնահատման զեկույց*, մարտ 2024, https://armenia.peopleinneed.net/media/publications/2257/file/pin-need-assessment-report_2024.pdf, դիտված՝ 18.10.2024 թ.:

[8] ԷյՓիԱր Գրուփ, *Հայաստանում աշխատողների աշխատանքային իրավունքների պաշտպանվածության վիճակի ուսումնասիրության արդյունքներ,* 2024 թ., https://aprgroup.org/images/Library/Artsakh_Q.pdf, դիտված՝ 01.09.2024 թ.:

[9] Պրիզմա, *Ուսումնասիրելով սոցիալական արդարության և պետական աջակցության ծրագրերը. տեղահանված և ընդունող հասարակությունների տեսակետները,* հոկտեմբեր 2024, դիտված՝ 30.11.2024 թ.:

ծրագրերը կամ ճիշտ չեն մշակվել, կամ դրանց իրականացվումը արդյունավետ չէ, և երկու դեպքում էլ դրանք լրջագույն վերանայման կարիք ունեն:

Բռնի տեղահանված անձանց աջակցության արդյունավետության մակարդակի անուղղակի, բայց, թերևս, կարևորագույն ցուցիչ է արցախցիների արտագաղթը Հայաստանից: Այս ցուցանիշն աճում է և նոյեմբերի 1-ի դրությամբ հասել է 11,600-ի:[10] Սա մտահոգիչ է մարդկային կապիտալի կորստի և դրա հավանական անդառնալիության առումով: Այն նաև նվազեցնում է ՀՀ ժողովրդագրության ռազմավարությամբ նախատեսված՝ Հայաստանում արցախցիների վերաբնակեցումից ակնկալվող դրական ազդեցությունը,[11] մինչդեռ ժողովրդագրությունը համարվում է Հայաստանի Հանրապետության առաջանցիկ զարգացման և անվտանգության ապահովման առանցքային բաղադրիչ:[12] Արտագաղթող արցախցիների թիվը կարող է ավելի աճել, եթե ՀՀ կառավարությունը շուտափույթ և առավել հասցեական միջոցներ չձեռնարկի, որպեսզի տեղահանված անձինք իրապես ցանկություն ունենան իրենց ապագան կառուցելու Հայաստանում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտությունն իրականացվել է 2024 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին: Տվյալների հավաքագրման և մարտահրավերների վերհանման համար օգտագործվել են որակական մեթոդներ, ներառյալ՝

- խմբային 4 քննարկում Արցախում համայնքային ղեկավար պաշտոն զբաղեցրած 106 անձանց, այդ թվում՝ Ասկերանի, Մարտակերտի, Մարտունու, Հադրութի, Շուշիի, Քաշաթաղի և Քարվաճառի շրջանների նախկին ղեկավարների մասնակցությամբ, որոնք ներկայացնում էին Արցախի 242 համայնքներից 67-ը, և որոնք շարունակում են կապ պահպանել իրենց նախկին համայնքների բազմաթիվ ներկայացուցիչների հետ.

- խորքային 9 հարցազրույց ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց համար ՀՀ կառավարության կողմից իրականացվող աջակցության ծրագրերի, առկա խնդիրների մասին քաջատեղյակ հանրային գործիչների (փորձագետների) հետ, որոնք ինչպես Արցախում, այնպես էլ Հայաստանում առավել ներգրավված են արցախցիների իրավունքների պաշտպանության և սոցիալական հարցերի հնարավոր լուծման աշխատանքներում.

- ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց աջակցության նպատակով ՀՀ կառավարության կողմից տարբեր ոլորտներում մշակված և իրականացվող քաղաքականության (ծրագրերի և միջոցառումների) վերլուծություն.

- միջազգային և տեղական կազմակերպությունների կողմից իրականացված որակական և քանակական հետազոտություններն ամփոփող զեկույցների ուսումնասիրություն:

[10] Սիվիլնեթ, *Նոյեմբերի 1-ի դրությամբ Հայաստանից հեռացել է 11,600 արցախցի*, նոյեմբեր 2024 թ., https://www.civilnet.am/news/804983 , դիտված՝ 08.11.2024 թ.:
[11] «Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2024-2040 թվականների ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N1641-Լ որոշում, 17.10.2024 թ., https://www.e-gov.am/gov-decrees/item/43542, դիտված՝ 08.11.2024 թ.:
[12] ՀՀ ազգային անվտանգության խորհուրդ, «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն», 10.07.2020 թ., https://www.sns.am/public/uploads/files/file-75elLZlT6j.pdf, դիտված՝ 08.11.2024 թ.:

Վերհանված խնդիրների լուծմանն ուղղված առաջարկները ներկայացվել են հետազոտության մասնակիցների և փորձագետների, ինչպես նաև սույն քաղաքականության վերլուծության հեղինակների կողմից:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Սույն հետազոտությամբ մասնակցային գործընթացների միջոցով վեր են հանվել ՀՀ կառավարության կողմից մշակված ծրագրերի արդյունավետ իրականացմանը և Հայաստանում արցախցիների ինտեգրմանը խոչընդոտող մի շարք խնդիրներ և ներկայացվել են առաջարկություններ դրանց լուծման ուղղությամբ:

Մատնանշված խնդիրների զգալի մասը վեր էր հանվել դեռևս 2024 թվականի մարտին՝ քաղհասարակության տարբեր գործիչների կողմից, և, այնուհետ, գրավոր ու բանավոր քննարկումների միջոցով փոխանցվել ՀՀ կառավարությանը: Սակայն մինչ օրս, առնվազն գործընթացի վերաբերյալ բավարար իրազեկման և որոշումների ընդունման ներառականության մասով, պատշաճ ընթացք չստանալու բերումով խնդիրները արմատավորվել, որոշ դեպքերում ավելացել են՝ խորացնելով բռնի տեղահանված անձանց մի ստվար մասի հիասթափությունը: Առաջարկվում է համապարփակ մոտեցմամբ և սեղմ ժամկետներում անդրադառնալ նշված խնդիրներին, որոնց լուծումն առանցքային է՝ տուն, սեփականություն, հայրենիք, հարազատ մարդկանց և սոցիալական միջավայր կորցրած, նոր կյանք սկսող արցախցիներին աջակցելու համար:

Հետազոտությամբ վերհանվել են նաև այնպիսի խնդիրներ, որոնք վերաբերում են ոչ միայն բռնի տեղահանված անձանց, այլև ընդհանուր են (օրինակ՝ սոցիալապես անապահով ընտանիքների կացարաններ, անբարենպաստ կրթական միջավայր, դրամահավաք դպրոցներում, մարզային բնակավայրերի գրավչության բացակայություն, հեռավոր բնակավայրերի հետ տրանսպորտային վատ հաղորդակցություն և այլն), սակայն արցախցիների պարագայում դրանք առաջացնում են լրացուցիչ խոցելիություն: Առաջարկվում է այս խնդիրներին ևս անդրադարձ կատարել համապատասխան ոլորտային քաղաքականություններում և մշակվող ռազմավարություններում, ծրագրերում ու միջոցառումներում:

Ա. Բռնի տեղահանված անձանց իրավական կարգավիճակը

քաղաքականության համառոտագիր

Ամփոփում

ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց իրավական կարգավիճակն առանցքային է նրանց պաշտպանության, սոցիալական աջակցության ծրագրերից օգտվելու, քաղաքական ու քաղաքացիական իրավունքներն իրացնելու տեսանկյունից: ՀՀ կառավարության գործադրած ջանքերը՝ ուղղված բռնի տեղահանվածների կողմից ՀՀ քաղաքացիություն ստանալուն և հայաստանյան միջավայրում ինտեգրվելուն, էական հաջողություն չեն արձանագրել, քանի որ լրջագույն որոշ խնդիրներ մինչ օրս չեն ստացել իրենց վերջնական լուծումը ՀՀ կառավարության կողմից:

Անհրաժեշտ է վերանայել այն մոտեցումը, երբ արցախցիներն ստիպված են ինչ-ինչ միջոցառումներից օգտվելու նպատակով ՀՀ քաղաքացիություն ստանալ, և դրա փոխարեն ավելացնել ջանքերը առկա խնդիրները վերհանելու և լուծելու ուղղությամբ, ինչն ինքնըստինքյան կխթանի ՀՀ քաղաքացի դառնալու մղումը:

Առաջարկվում է մշակել արցախցիների իրավունքների ու շահերի երկարաժամկետ պաշտպանության մոտեցում՝ անկախ ՀՀ քաղաքացիություն ստանալու հանգամանքից, երաշխավորել նրանց արդյունավետ իրազեկումը ժամանակավոր պաշտպանության և ՀՀ քաղաքացիությունից բխող կարգավիճակների բովանդակության վերաբերյալ, արագացնել և դյուրացնել կարգավիճակ տրամադրող պետական կառույցների վարչարարությունը: Միաժամանակ, անհրաժեշտ է աջակցել Արցախ վերադառնալու՝ տեղահանված անձանց իրավունքը միջազգային ատյաններում պաշտպանելու գործին:

Հիմնախնդիր

2023 թ. սեպտեմբերի վերջին ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց պաշտպանությունն ապահովելու նպատակով ՀՀ կառավարությունը Հայաստանում ապաստանած անձանց տրամադրեց ժամանակավոր պաշտպանություն մեկ տարի ժամկետով՝ երկարաձգման հնարավորությամբ:[13] Միաժամանակ, արցախցիներին առաջարկվեց դիմել և ստանալ ՀՀ քաղաքացիություն՝ իրավունքներից լիարժեք օգտվելու համար: Քաղաքացիության գործոնը սահմանվեց որպես աջակցության որոշ ծրագրերի շահառու դառնալու նախապայման:

Այս քայլերը, սակայն, չհանգեցրին ՀՀ քաղաքացիություն ստանալու դիմումների թվի զգալի աճի: Նախքան բռնի տեղահանումը ԼՂ-ում բնակվող անձինք ունեին ՀՀ անձնագիր, և նրանց մեծ մասը դա ընկալել էր որպես ՀՀ քաղաքացիություն, ուստի, նրանց ժամանակավոր պաշտպանության կարգավիճակ տրամադրելու վերաբերյալ ՀՀ կառավարության որոշումը շփոթության պատճառ դարձավ:

Տարբեր կարգավիճակների հետ կապված անհստակությունը, դրանից բխող տարակուսանքն ու անհարմարությունները, պետության կողմից խնդիրների կարճաժամկետ ու ոչ համակողմանի լուծումները և երկարաժամկետ հեռանկարի բացակայությունը, առկա

[13] «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց ժամանակավոր պաշտպանության տակ վերցնելու, ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականի անձը հաստատող փաստաթղթի նկարագիրը ու դրա տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 1864-Ն որոշում, 26.10.2023 թ., https://www.arlis.am/documentView.aspx?docid=184503, դիտված՝ 14.10.2024 թ.:

խնդիրների մասին բարձրաձայնելու և դրանք լուծելու անհնարինությունը արցախցիների զգալի հատվածի մոտ առաջացրել են անկայունության և անապահովության, չհասկացվածության և օտարության զգացողություններ,[14] ինչը նրանց երբեմն դրդում է խնդիրների լուծումները փնտրել Հայաստանից դուրս: Այս խնդիրներին գումարվում են նաև Ադրբեջանի պատերազմական հանցագործությունների և Արցախի էթնիկ զտմանն առնչվող միջազգային դատական գործընթացների և տեղահանվածների վերադարձի իրավունքի պաշտպանության առումով ՀՀ կառավարության դիրքորոշման փոփոխականությունը և անորոշությունը, ինչը խորացնում է անվստահությունը:

Առկա ծրագրեր և կարգավորումներ

Ժամանակավոր պաշտպանության կարգավիճակի տրամադրումը

2023 թ. սեպտեմբերի վերջին ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց իրավական կարգավիճակ տրամադրելու և նրանց պաշտպանությունն ապահովելու նպատակով ՀՀ կառավարությունը 2023 թ. հոկտեմբերի 26-ին ընդունեց որոշում՝ ԼՂ-ից տեղահանված անձանց ժամանակավոր պաշտպանություն տրամադրելու վերաբերյալ (որը համարժեք է փախստականի կարգավիճակին)՝ նախնական մեկ տարի ժամկետով և երկարաձգման հնարավորությամբ:[15] Ժամանակավոր պաշտպանության տակ վերցվեցին 1) ԼՂ-ի բնակչության ռեգիստրի հաշվառումներով անցնող անձինք, 2) ՀՀ տարածքում կամ ՀՀ-ից դուրս գտնվող այն անձինք, որոնց վերջին հաշվառման հասցեն եղել է ԼՂ-ում, և 3) այն անձինք, որոնք ԼՂ-ի բնակչության ռեգիստրում հաշվառում չեն ունեցել, սակայն բնակվել են ԼՂ-ում և 2023 թվականի սեպտեմբերի 19-ից Ադրբեջանի կողմից ԼՂ-ի դեմ սանձազերծած ռազմական գործողությունների հետևանքով բռնի տեղահանվելուց հետո հաշվառվել են ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից:

Ժամանակավոր պաշտպանության կարգավիճակ ինքնաբերաբար տրամադրվեց ԼՂ բնակչության ռեգիստրում հաշվառված մոտ 150,000[16] անձի՝ նրանց համար նախատեսելով այդ կարգավիճակը հավաստող նույնականացման քարտ, որը արցախցիները կարող էին ստանալ՝ բնակության վայրը ցանկացած անձնագրային բաժանմունքում փաստացի հաշվառելուց հետո: Այս ընթացակարգի կիրարկումն անհրաժեշտ էր թե՛ որպես պետության սոցիալական աջակցությանը դիմելու հիմնական նախապայման, այնպես էլ ՀՀ սահմաններից դուրս տեղաշարժվելու նպատակով:

Այս կարգավիճակի տրամադրումը ՀՀ կառավարությունը հիմնավորեց նրանով, որ թեև բռնի տեղահանված անձինք ունեցել են ՀՀ կապույտ անձնագրեր՝ 070 հատուկ ծածկագրով, այնուամենայնիվ, դրանք չեն վկայում քաղաքացիության մասին: Դրանք տրվել են ՀՀ և ԼՂ Հանրապետության միջև 1999 թ. փետրվարի 24-ին կնքված համաձայնագրի հիման վրա՝ զուտ որպես ճամփորդական փաստաթուղթ: Այսպես, ըստ Համաձայնագրի 1-ին հոդվածի, «Կողմերը համաձայն են, որ իրենց քաղաքացիներն իրավունք ունեն ազատ տեղաշարժվելու և բնակվելու յուրաքանչյուր կողմի տարածքում: Ըստ այս Համաձայնագրի, մինչև ԼՂ Հանրապետության միջազգային ճանաչումը, ԼՂ Հանրապետության այն քաղաքացիները, որոնք ցանկանում են լքել ԼՂ Հանրապետությունը կամ Հայաստանի Հանրապետությունը,

[14] Այս և նման այլ դեպքերը, զգացողությունները ներկայացվել են հետազոտության մասնակիցների կողմից:
[15] ՀՀ կառավարության N 1864-Ն որոշում, 26.10.2023 թ.:
[16] Իրավաբան.նեթ, *Փախստականի կարգավիճակ ունեցող անձը չի կարող եվրոպական որևէ երկրում մշտական և օրինական բնակություն հաստատել, դա միֆ է. Նելլի Դավթյան,* 27.09.2024 թ., https://iravaban.net/494578.html, դիտված՝ 09.11.2024 թ.:

կարող են դիմել և ստանալ ՀՀ անձնագիր: Կողմերը նաև համաձայն են, որ ՀՀ անձնագիր ստանալը ԼՂ Հանրապետության քաղաքացիներին չի օժտում ՀՀ քաղաքացիությամբ: Այս անձնագրերն ուժի մեջ են միայն ՀՀ և ԼՂՀ տարածքներից դուրս միջազգային ուղևորությունների համար և չեն կարող օգտագործվել որպես նույնականացման փաստաթուղթ՝ ներքին նպատակներով»:[17]

Ըստ կառավարության ներկայացուցիչների բացատրությունների, «ժամանակավոր պաշտպանության» կարգավիճակը նպատակ ունի ապահովելու ԼՂ-ից տեղահանված բնակչության պաշտպանությունը ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում, քանի որ այն հնարավորություն է տալիս տեղահանված անձանց՝ օգտվելու միջազգային պաշտպանության մեխանիզմներից՝ համաձայն 1951 թ. Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիայի:[18]

Ժամանակավոր պաշտպանության կարգավիճակի իրավական հիմքը

Ժամանակավոր պաշտպանության իրավական հիմքը սահմանվում է «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածով, որը թույլ է տալիս այս կարգավիճակը տրամադրել այն խմբերին, որոնք փախչում են համատարած բռնություններից, արտաքին հարձակումից կամ հասարակական կարգի այլ ծանր խախտումներից: Ժամանակավոր պաշտպանության գաղափարը միջազգային իրավունքում ձևավորվել է Հարավսլավիայում տեղի ունեցած պատերազմներից հետո և պաշտոնապես ամրագրվել է 2001 թ. ԵՄ ուղեցույցով: Երկրները կարող են ինքնուրույն որոշել ժամանակավոր պաշտպանության տևողությունն ու տրամադրվող աջակցության մակարդակը:

Ժամանակավոր պաշտպանության կարգավիճակին առնչվող իրավունքները և պարտականությունները

Հայաստանում ժամանակավոր պաշտպանությունը տրամադրվում է նախնական մեկ տարի ժամկետով՝ երկարաձգման հնարավորությամբ:[19]

«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն, ժամանակավոր պաշտպանության կարգավիճակ ունեցող անձինք ունեն նույն իրավունքներն ու պարտականությունները, ինչ անհատական կարգով Հայաստանում ապաստան ստացած փախստականները: Իսկ Օրենքի 23-րդ հոդվածի համաձայն, ՀՀ տարածքում ապաստան ստացած փախստականներն իրավունք ունեն օգտվելու քաղաքացիների համար նախատեսված սոցիալական ծառայություններից, ստանալու պետական նպաստներ և այլ ֆինանսական աջակցություն, ներառյալ ժամանակավոր անաշխատունակության, աշխատանքի հետ կապված վնասվածքների, դժբախտ պատահարների և մասնագիտական հիվանդությունների համար նախատեսված վճարումները: Նրանք նաև ունեն իրավունք՝ ստանալու պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնություն և ծառայություններ, ինչպես նաև թոշակ և սոցիալական պաշտպանություն՝ գործազրկության դեպքում:

[17] Մարդու իրավունքների եվրոպական դատարան, *Չիրագովը և մյուսներն ընդդեմ Հայաստանի* (դիմում N 13216/05), պարբ. 83, 16.06.2015 թ., https://hudoc.echr.coe.int/fre#{%22itemid%22:[%22001-155353%22]}, դիտված՝ 14.10.2024 թ.:
[18] ՀՀ կառավարություն, *Նոյեմբեր և դեկտեմբերի ամիսներին լրացուցիչ 50,000 ՀՀ դրամ կտրամադրվի նվազագույն սպառողական կարիքները բավարարելու համար*, 27.10.2023 թ., https://www.gov.am/en/news/item/10416/, դիտված՝ 14.10.2024 թ.:
[19] ՀՀ կառավարության N1864-Ն որոշում, 26.10.2023 թ.:

Հայաստանում ժամանակավոր պաշտպանության կարգավիճակ ունեցող տեղահանված անձինք օրինական բնակության, ինչպես նաև շարժական և անշարժ գույքի սեփականության իրավունք ունեն, թեև հողատարածքի սեփականությունը հնարավոր է միայն ՀՀ քաղաքացիների համար:[20] Բացի այդ, ժամանակավոր պաշտպանություն ստացած անձինք ունեն աշխատելու հնարավորություն, այսինքն՝ առանց լրացուցիչ թույլտվության կարող են ներգրավվել աշխատանքային շուկայում, սակայն չեն կարող զբաղեցնել հանրային ծառայության պաշտոններ պետական կառավարման մարմիններում:[21]

Փախստականները և ժամանակավոր պաշտպանության կարգավիճակ ունեցողները խորհրդարանական ընտրություններին մասնակցելու, քաղաքական պաշտոններ զբաղեցնելու կամ քաղաքական կուսակցություններին անդամակցելու իրավունք չունեն:[22] Միաժամանակ, ի տարբերություն ՀՀ քաղաքացիների, նրանք ազատված են պարտադիր զինվորական ծառայությունից:[23]

ՀՀ քաղաքացիություն ստանալու հնարավորությունը

Ժամանակավոր պաշտպանության հետ կապված սահմանափակումները լուծելու և բռնի տեղահանված անձանց լիարժեք քաղաքացիական իրավունքներով օժտելու նպատակով ՀՀ կառավարությունը ԼՂ-ից տեղահանված անձանց առաջարկել է քաղաքացիություն ստանալու արագացված կարգ, որն ավելի արագ է, քան սովորական դիմումների մշակման 90-օրյա ժամկետը:

Կարգը գործում է 2023 թ. նոյեմբերի 6-ից, և այս կարգով ստացած անձնագրերով տեղահանված անձինք ձեռք են բերում լիարժեք քաղաքացիական իրավունքներ: Այս գործընթացը պահանջում է նվազագույն փաստաթղթեր՝ ծննդյան վկայական, ժամանակավոր պաշտպանության կարգավիճակի հաստատում և, առկայության դեպքում, ամուսնության վկայական, ինչպես նաև վեց անձնագրային լուսանկար և 1,000 ՀՀ դրամ պետական տուրքի վճարման անդորրագիր:

Չնայած պարզեցված կարգին, տեղահանված բազմաթիվ անձինք դեռևս հապաղում են դիմել քաղաքացիություն ստանալու համար՝ կապված իրենց կարգավիճակի շուրջ առկա իրավական անորոշությունների և դրանից բխող և (կամ) հարակից մի շարք այլ խնդիրների հետ: Այս հանգամանքները հաշվի առնելով, ՀՀ կառավարությունը 2024 թ. հոկտեմբերի 17-ին որոշել է ժամանակավոր պաշտպանության կարգավիճակը երկարաձգել մինչև 2025 թ. դեկտեմբերի 31-ը:[24]

[20] ՀՀ հողային օրենսգիրք, 02.05.2001 թ., հոդված 4, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172330 , դիտված՝ 14.10.2024 թ.:

[21] «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, 23.03.2018 թ., https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=194977, դիտված՝ 15.06.2024 թ., «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք, 23.03.2018 թ., https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=193796, դիտված՝ 14.10.2024 թ.:

[22] ՀՀ ներքին գործերի նախարարության ֆեյսբուքյան էջ, *Հաճախ տրվող հարցեր Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց կարգավիճակի վերաբերյալ, Որո՞նք են փախստական և քաղաքացի կարգավիճակների տարբերությունները,* 07.12.2023 թ., https://shorturl.at/kgyoV, դիտված՝ 14.10.2024 թ.:

[23] Նույն տեղում:

[24] «ՀՀ կառավարության 2023 թ. հոկտեմբերի 26-ի N 1864-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության N1649-Ն որոշում, 17.10.2024 թ., https://www.e-gov.am/gov-decrees/item/43533, դիտված՝ 14.10.2024 թ.:

Մարտահրավերներ

Հետազոտության արդյունքում վերհանվել են հետևյալ խնդիրները.

Իրավական կարգավիճակներին առնչվող անորոշություններ

Ժամանակավոր պաշտպանության կարգավիճակի կարճ ժամկետ. Ժամանակավոր պաշտպանության քարտի վավերականությունը սահմանված է մինչև 2024 թվականի տարեվերջ, իսկ մեկ տարով դրա երկարաձգման հնարավորությունը մտահոգություն է առաջացնում տեղահանված անձանց մոտ՝ կրկին հերթագրվելու և միևնույն գործընթացով անցնելու անհրաժեշտության առումով:

Ճանապարհորդելու դժվարություններ. ԼՂ-ից տեղահանված անձինք բախվում են դժվարությունների՝ տարբեր երկրներ ճանապարհորդելիս: Մասնավորապես, ՀՀ-ում Շենգենյան տարածքի երկրների դեսպանատների զգալի մասը մերժում է վիզայի դիմումները 070 ծածկագրով անձնագրերի համար, ինչը սահմանափակում է տեղահանված անձանց շարժունակությունը՝ այդ թվում զրկելով հիվանդներին՝ բուժվելու, երիտասարդներին՝ ուսումնական և փոխանակման ծրագրերին մասնակցելու հնարավորություններից:

Քաղաքացիության պարտադրանքի ընկալում. ՀՀ քաղաքացիության ձեռքբերումը հաճախ ընկալվում է որպես պարտադրանք, քանի որ որոշ ծրագրերում ներգրավելու համար բռնի տեղահանված անձանցից պահանջվում է ՀՀ քաղաքացիություն, ինչը կարող է հուսահատեցնել հոգեբանական ծանր իրավիճակում հայտնված անձանց:

Իրավական կարգավիճակի անհամապատասխանություններ. Կան ընտանիքներ, որտեղ մեկ անդամը դիմել և ստացել է փախստականի կարգավիճակ, իսկ մյուսը՝ ոչ, չնայած համանման նախապատմություններին ու հանգամանքներին: Այս անհամապատասխանությունը ստեղծում է անորոշություն, ինչպես նաև անհավասար հնարավորություններ՝ աջակցության ծրագրերից օգտվելու առումով:

Քաղաքացիության ստացումը՝ որպես ԼՂ վերադարձի իրավունքը սահմանափակող գործոն. Բռնի տեղահանված անձանցից շատերին անհանգստացնում է, որ ՀՀ քաղաքացիություն ստանալը և (կամ) անձնագիր փոխելը կարող է բացառել ապագայում ԼՂ վերադառնալու իրավունքը և, առհասարակ, նման պահանջի առաջադրումը, ինչը նրանց հետ է պահում ՀՀ քաղաքացիություն ստանալուն ուղղված գործողություններից:

Պարտադիր զինվորական ծառայության և վարժանքների մասնակցության պահանջ. Քաղաքացիության ստացումը ենթադրում է նաև զինակոչային տարիքի տղամարդկանց պարտադիր զինվորական ծառայություն, իսկ զինվորական ծառայություն անցածների համար՝ մասնակցություն զինվորական վարժանքների: Ընդ որում, դեպք է գրանցվել, երբ քաղաքացիություն ստանալուց հետո անձին անմիջապես կանչել են զինվորական վարժանքների: Այս պահանջը լրացուցիչ խնդիր է ստեղծում մոտիվացիայի տեսանկյունից: Արցախցիները ոչ վաղ անցյալում անցել են պատերազմի միջով, և Հայաստանի ներկայիս անվտանգային իրավիճակում ունեն կյանքից զրկվելու կամ ընտանիքի անդամին կորցնելու հետ կապված վախեր:

Իրավական կարգավիճակներ ստանալու գործընթացների խոչընդոտներ

Հաշվառման և ժամանակավոր պաշտպանության կարգավիճակ ստանալու բարդ գործընթաց. Ժամանակավոր պաշտպանության քարտի համար դիմելու և ժամանակավոր կացություն գրանցելու գործընթացը խրթին է: ՄՍԾ տարածքային ստորաբաժանումները ծանրաբեռնված են, հերթերը երկար են, սպասարկման որակը բավարար չէ: Եթե առկա խնդիրները չլուծվեն, քաղաքացիություն ստանալու դիմումների դեպքում ևս կստեղծվեն նման խոչընդոտներ:

ՀՀ քաղաքացիություն ստանալու դժվարություններ. ՀՀ քաղաքացիություն ստանալու գործընթացը նույնպես ձգձգված է ու երկարատև, թեև արցախցիների համար այն պետք է արագացված լինի: Էական խոչընդոտներից է ծննդյան վկայականի, զինվորական (լիարժեք կամ ընդհատված) ծառայությունը հավաստող վկայականի և այլ կարևոր փաստաթղթերի վերականգնումը, որոնք կորել են տեղահանման ժամանակ, և այս գործընթացը հաճախ հանգեցնում է դատական քաշքշուկների: Լինում են դեպքեր, երբ ՀՀ-ում ծնված, ՀՀ քաղաքացի ծնողներ ունեցող անձինք ինքնըստինքյան չեն ստանում քաղաքացիություն: Նման անձանցից պահանջել են ներկայացնել փաստաթղթեր, օրինակ՝ տրված ԼՂ Քաշաթաղի զինկոմիսարիատի կողմից, որը ներկայումս գոյություն չունի: Այս պարագայում շատ հաճախ դժվարություններ են առաջանում նույնիսկ արխիվից փաստաթղթերի վերականգնման առումով, քանի որ ոչ բոլոր տեղեկատվական բազաներն են պահպանվել կամ ԼՂ-ից Հայաստան փոխադրվել, և ոչ բոլոր անձանց ծննդյան վկայականների ու զինվորական ծառայության կամ աշխարհազորում ծառայելու հետ կապված փաստերի մասին տեղեկատվություն կարելի է գտնել ՀՀ բազաներում, այդ թվում՝ Ազգային արխիվում:

Սպասարկող աշխատուժի անբավարարություն. ՄՍԾ տարածքային կենտրոնների մեծ մասում միայն մեկ աշխատակից է ծառայություններ մատուցում ԼՂ-ից տեղահանված անձանց, ինչի հետևանքով հերթեր են գոյանում: Այս հարցերով զբաղվող աշխատակիցները հաճախ չեն տիրապետում իրավական հարցերին, բավարար չափով տեղեկացված և պատրաստված չեն տեղահանված անձանց բազմաթիվ հարցերին պատասխանելու համար:

Անբավարար իրազեկում

Անբավարար իրազեկման հետ կապված շփոթություն. Ժամանակավոր պաշտպանության կարգավիճակի մասով տեղահանված բնակչության շրջանում առաջացել են թյուրընկալումներ և դժգոհություն, քանի որ տասնյակ տարիներ շարունակ նրանք ունեցել են ՀՀ անձնագիր, և շատերը դա ընկալել են որպես ՀՀ քաղաքացիություն: Փախստականի և քաղաքացիության կարգավիճակների հետ կապված իրավունքներն ու պարտականությունները, առավելություններն ու հնարավոր իրավական հետևանքները պարզ և հստակ չեն բացատրվում, ինչը, հատկապես հանրամատչելի տեղեկատվական նյութերի բացակայության պարագայում, հանգեցնում է իրավական կարգավիճակների վերաբերյալ թյուրընկալման և ավելորդ մտահոգությունների: Քաղաքացիություն ստանալու պարագայում առավել հաճախ արտահայտված մտահոգությունը կապված է Արցախ վերադարձի հնարավորության և գույքային պահանջների դադարեցման ռիսկերի հետ, որի մասին արցախցիները տարբեր մեկնաբանություններ են լսում իրավաբաններից:

Առաջարկություններ[25]

Նշված մարտահրավերների հիման վրա առաջարկվում են հետևյալ միջոցառումները.

Իրավունքների պաշտպանության ապահովում

Ժամանակավոր պաշտպանության երկարաձգում. Ժամանակավոր պաշտպանության քարտի վավերականության ժամկետը երկարաձգել մեկ տարուց ավելի տևողությամբ՝ հնարավորության դեպքում կիրառելով երկարաձգման դյուրացված, օրինակ՝ առցանց մեխանիզմ՝ վարչական ծանրաբեռնվածությունը և տեղահանված անձանց համար ավելորդ բյուրոկրատական քաշքշուկը նվազեցնելու համար: Ժամկետը կարող է երկարաձգվել, օրինակ՝ մինչև 3 տարի տևողությամբ, որքան օրենքը սահմանում է մինչև 16 տարեկան փախստականին տրվող նույնականացման քարտի վավերականության դեպքում:[26]

Տեղաշարժման ազատության ապահովմանն ուղղված գործողություններ. Դիվանագիտական քննարկումներ վարել ԵՄ անդամ երկրների դեսպանատների և այլ միջազգային կառույցների հետ՝ 070 ծածկագրով անձնագրեր ունեցող անձանց բացառիկ հանգամանքները ճանաչելու և այդ անձանց վիզայի դիմումները հաշվի առնելու համար:

Վերադարձի իրավունքի պաշտպանությանն ուղղված գործողություններ. Նախաձեռնել և իրականացնել իրավական ու քաղաքական գործընթացներ՝ միջազգային ատյաններում ներկայացնելով Ադրբեջանի պատերազմական հանցագործությունները և Արցախի հայաթափումը, առաջ մղելով ԼՂ վերադառնալու՝ արցախցիների իրավունքը և անվտանգ ու արժանապատիվ պայմանների երաշխավորման անհրաժեշտությունը, ինչպես նաև իրավական աջակցություն տրամադրել արցախցիներին կամ այլ կերպ աջակցել նրանց՝ իրավական գործընթացներում, ինչն առավել համոզիչ կդարձնի ՀՀ կողմից նրանց իրավունքների, այդ թվում՝ վերադարձի իրավունքի պաշտպանության հանձնառությունը՝ անկախ քաղաքացիություն ստանալու փաստից:

Վարչարարության արդյունավետության ապահովում

Իրավական կարգավիճակ ձեռք բերելու ընթացակարգերի պարզեցում և արագացում. Վերանայել ու կատարելագործել փախստականի կարգավիճակ և ՀՀ քաղաքացիություն ստանալու ընթացակարգերը և ապահովել դրանց արդյունավետությունը:

Աշխատակիցների թվի ավելացում. Ավելացնել տարածքային անձնագրային ծառայությունների աշխատակիցների թիվը, հատկապես բարձր պահանջարկ ունեցող վայրերում, ինչպիսիք են՝ Նոր Նորքը, Արաբկիրը և Նորք Մարաշը՝ կրճատելով սպասարկման ժամանակահատվածը:

Աշխատակիցների վերապատրաստում. Զարգացնել ՄՍԾ տարածքային կենտրոնների համապատասխան աշխատակիցների իրավական գիտելիքները և կարողությունները, որպեսզի նրանք լիովին տիրապետեն տարբեր իրավական կարգավիճակների

[25] Այս և հաջորդիվ ներկայացված բոլոր առաջարկությունները մշակվել են տեղահանված և շահագրգիռ այլ անձանց հետ խորհրդակցությունների արդյունքում և բոլոր դեպքերում չէ, որ արտացոլում են հետազոտությունում ներգրավված բոլոր կողմերի տեսակետները:

[26] «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենք, 27.11.2008 թ., https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=193804, դիտված՝ 10.11.2024 թ.:

(փախստական, քաղաքացի և այլն) առանձնահատկություններին և կարողանան ճշգրիտ բացատրել դրանք տեղահանված անձանց:

Առցանց գործընթացների հարմարեցում. Առցանց դիմումների համակարգում (https://migration.e-gov.am/hy/) ավելացնել էլեկտրոնային դիմումների և գրանցման հատուկ բաժին ԼՂ-ից տեղահանված անձանց համար՝ նվազեցնելով ֆիզիկական հերթերը և սպասարկման ժամանակահատվածները ինչպես ժամանակավոր պաշտպանության քարտ, այնպես էլ ՀՀ քաղաքացիություն ստանալու դիմումների համար: Դիտարկել «մեկ պատուհանի» սկզբունքով նաև սոցիալական ծառայությունների մատուցումն ապահովելու հնարավորությունը:

Փաստաթղթերի պահանջների վերանայում. Հատուկ դրույթներ սահմանել այն անձանց համար, ովքեր կորցրել են իրենց ծննդյան վկայականը, զինվորական գրքույկը կամ այլ կարևոր փաստաթղթեր՝ այդ թվում դիտարկելով այլընտրանքային կամ ոչ ամբողջական նույնականացման մեթոդների կիրառումը՝ առանց դատական գործընթացի անհրաժեշտության: Կարելի է դիտարկել հատուկ հանձնաժողովի կամ աշխատանքային խմբի ձևավորումը, որը տեղահանված անձանց կաջակցի կորցրած փաստաթղթերը վերականգնելու գործում կամ դրա անհնարինության դեպքում կտրամադրի փոխարինող փաստաթղթեր:

Պատշաճ իրավեկում

Իրավեկում կարգավիճակների բովանդակության վերաբերյալ. Նախաձեռնել տեղեկատվական արշավներ՝ տեղահանված անձանց իրազեկելով ժամանակավոր պաշտպանության և քաղաքացիության կարգավիճակների բովանդակության մասին, հստակեցնելով առնչվող իրավունքները, պարտականությունները, առավելություններն ու հետևանքները՝ կարգավիճակների պարզաբանումը փոխկապակցելով սոցիալական և տնտեսական իրավունքների իրացման և ԼՂ վերադարձի իրավունքի պաշտպանության հնարավորությունների ու անհրաժեշտ քայլերի հետ:

Արդյունավետ ձևաչափերով նյութերի և գործիքների կիրառում. Ստեղծել բազմատեսակ ձևաչափերով պարզ ու հանրամատչելի նյութեր (առցանց ու տպագիր)՝ տարածելով դրանք արդյունավետ և գործածական խողովակներով ու եղանակներով, ինչպես նաև կազմակերպելով հանրային ու համայնքային միջոցառումներ շահագրգիռ կողմերի հետ՝ իրավական կարգավիճակների հնարավորություններն ու խնդիրները ներկայացնելու և քննարկելու նպատակով:

Կենտրոնացված իրավեկում և խորհրդատվություն. Արցախից տեղահանված անձանց արդյունավետ աջակցություն տրամադրելու նպատակով ստեղծել կենտրոնացված առցանց ծառայություն (զանգերի կենտրոն), որտեղ տեղահանված անձինք կարող են ստանալ ճշգրիտ, միասնական և ժամանակին տեղեկատվություն իրենց իրավական կարգավիճակի և առնչվող հարցերի վերաբերյալ:

Բ. Բռնի տեղահանված անձանց ֆինանսական աջակցությունը

քաղաքականության համառոտագիր

Ամփոփում

ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց ֆինանսական աջակցությունը անհրաժեշտ է նրանց նվազագույն պահանջները բավարարելու համար՝ հաշվի առնելով, որ այս անձինք կորցրել են իրենց ողջ ունեցվածքը և, գտնվելով ծանր հոգեբանական վիճակում, փորձում են նոր կյանք սկսել, հոգալ ամենօրյա ապրուստը և ձեռք բերել կենսական անհրաժեշտության իրեր: Այս առումով, տեղահանումից անմիջապես հետո ՀՀ կառավարության տրամադրած ֆինանսական աջակցությունը ծայրահեղ անհրաժեշտ էր:

Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ մեկ տարի տևողությամբ աջակցությունը չի կարող բավարար լինել, քանի դեռ տեղահանված անձինք չունեն սեփական բնակարան, եկամուտ և չեն կարողանում սեփական ուժերով ապահովել իրենց և իրենց ընտանիքների քիչ թե շատ բավարար կենսամակարդակը: Հատուկ աջակցության կարիք ունեն նաև խոցելի և առանձնահատուկ խնդիրներ ունեցող խմբերը:

Առաջարկվում է շարունակել գործող ֆինանսական աջակցության ծրագիրը սեփական բնակարան և (կամ) աշխատանք չունեցող անձանց ու խոցելի խմբերի համար՝ դրսևորելով առավել հասցեական ու ճկուն մոտեցում և աստիճանաբար նվազեցնելով շահառուների շրջանակը՝ հաշվի առնելով նրանց վիճակի ընթացիկ մոնիտորինգի արդյունքները և կենցաղային խնդիրներն ինքնուրույն լուծելու կարողությունը:

Հիմնախնդիր

2023 թ. սեպտեմբերին ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց ներհոսքից անմիջապես հետո ՀՀ կառավարությունը նախաձեռնեց ֆինանսական աջակցության հրատապ ծրագիր, որը սկզբնական շրջանում դրական ընդունվեց հասարակության կողմից, սակայն շահառուները մշտապես ընդգծում էին, որ ծրագիրը կարող է ապահովել միայն հիմնական կարիքների բավարարումը, սակայն չի կարող երաշխավորել երկարատև սոցիալ-տնտեսական կայունություն՝ առանց համապատասխան բնակարանային ապահովման և զբաղվածության:

Նախատեսվում է ծրագիրը շարունակել մինչև 2025 թվականի ապրիլ՝ հետագայում աջակցությունը միայն առանձին խոցելի խմբերի համար պահպանելու հավանականությամբ: Սա առաջացնում է լուրջ մտահոգություններ արցախցիների շրջանում, ինչը սեփական անշարժ գույքի բացակայության, վարձակալության բարձր գների, կայուն զբաղվածություն չունենալու և անորոշ հեռանկարի պարագայում մեծացնում է ՀՀ-ից զանգվածային արտագաղթի ռիսկը:

Առկա ծրագրեր ու կարգավորումներ

Ֆինանսական աջակցության ծրագիրը

2023 թ. սեպտեմբերին՝ բռնի տեղահանված անձանց ներհոսքի առաջին իսկ օրերից, ՀՀ կառավարությունը ձեռնարկեց մի շարք միջոցառումներ՝ տեղահանված անձանց հիմնական կարիքները բավարարելու նպատակով: Նախատեսվում էր միանվագ 100,000[27] և ամսական 50,000 ՀՀ դրամի (ներառում է 40,000 ՀՀ դրամ ֆինանսական աջակցության փաթեթ սեփականություն չունեցող և 10,000 ՀՀ դրամ՝ բոլոր տեղահանված անձանց համար) չափով ֆինանսական աջակցություն:[28] Բացի այդ, ի պատասխան շարունակվող մարտահրավերների, Հայաստանի կառավարությունը նախաձեռնեց ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց ֆինանսական օգնության նոր ծրագիր և, ի հավելումն նախկինում հայտարարված աջակցության, 2023 թվականի նոյեմբերին և դեկտեմբերին տեղահանված անձանց տրամադրեց լրացուցիչ 50,000-ական ՀՀ դրամ՝ անհրաժեշտ ծախսերը հոգալու համար:[29]

ՀՀ կառավարության դրամական աջակցության ծրագրերն, ընդհանուր առմամբ, դրական ընդունվեցին հասարակության կողմից, քանի որ դրանք հնարավորություն տվեցին ժամանակավորապես լուծելու կացարանի ու կեցության նվազագույն պայմանների խնդիրը: Միևնույն ժամանակ, առաջացան ֆինանսական աջակցության հասանելիության հետ կապված զգալի մարտահրավերներ: Մասնավորապես, աջակցության ծրագրի համար դիմելու առցանց գործընթացը խրթին էր, ինչն ի սկզբանե ստեղծում էր խոչընդոտներ հոգեբանական ծանր վիճակում գտնվող տեղահանված անձանց համար: Համակարգման թերացումների, ռեսուրսների ոչ արդյունավետ բաշխման և դիմումների գրանցման հարթակի տեխնիկական խնդիրների պատճառով բազմաթիվ դիմումներ կամ մերժվել են, կամ մնացել են անպատասխան, ինչի հետևանքով շատ անձինք մնացել են առանց ֆինանսական օգնության:

Կար նաև ըմբռնման բացակայություն ֆինանսական օգնության համար իրավասու լինելու չափանիշների վերաբերյալ, ինչն անորոշություն և անհանգստություն էր պատճառում աջակցության դիմող անձանց: Մեկ տարի անց, տեղահանված անձանց բազմաթիվ բողոքներից հետո, փոփոխություն կատարվեց աջակցության ծրագրում,[30] և այժմ 50,000 ՀՀ դրամ պետական աջակցության ծրագրի շահառուների թվում են նաև այն անձինք, որոնք 2024 թ. հուլիսի 1-ի դրությամբ դեռևս նախկին բնակարանային ապահովության ծրագրով հավաստագիր չեն ստացել՝ ոչ բավարար իրազեկության կամ այլ պատճառներով: Ընդ որում, նրանք կրկին պետք է դիմեն ֆինանսական աջակցության ծրագրից օգտվելու համար և անցնեն գրանցման նույն բյուրոկրատական գործընթացներով:

---

[27] «2023 թ. սեպտեմբերի 19-ից Ադրբեջանի կողմից ԼՂ-ի դեմ սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով բռնի տեղահանվածներին միանվագ դրամական սոցիալական աջակցության միջոցառումը և տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 1675-L որոշում, 03.10.2023 թ., https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=198357, դիտված՝ 14.10.2024 թ.:

[28] «ԼՂ-ից տեղահանվածներին կեցության և այլ ծախսերը հոգալու համար սոցիալական աջակցության միջացառումը և տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 1763-L որոշում, 12.10.2023 թ., https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=198356, դիտված՝ 14.10.2024 թ.:

[29] «ԼՂ-ից բռնի տեղահանվածներին առաջնային սպառողական ծախսերը հոգալու համար սոցիալական աջակցության միջացառումը և տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N1957-L որոշում, 09.11.2023 թ., https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=191298, դիտված՝ 18.10.2024 թ.:

[30] «ՀՀ կառավարության 2023 թ. հոկտեմբերի 12-ի N 1763-L և 2023 թ. հոկտեմբերի 3-ի N1675-L որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության N 1608-L որոշում, 10.10.2024 թ., https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=198355, դիտված՝ 18.10.2024 թ.:

Անհանգստություն է առաջացրել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (ԱՍՀՆ) վերջին հայտարարությունն այն մասին, որ 2024 թ. դեկտեմբերից հետո դադարեցվելու է 50,000 ՀՀ դրամի ներկայիս աջակցության ծրագիրը, և դրամական աջակցության տրամադրումը կշարունակվի միայն որոշ խոցելի խմբերի համար:[31] Նույն տագնապն ամենայն հավանականությամբ կառաջանա նոր վերջնաժամկետին՝ 2025 թվականի ապրիլին ընդառաջ: Նման ոչ կայուն քաղաքականությունը և դրա վերաբերյալ իրազեկելու գործող պրակտիկան ապագայի նկատմամբ տագնապ և անորոշություն են հարուցում՝ հաշվի առնելով, որ բռնի տեղահանվածներից քչերն են բնակարան և կայուն աշխատանք ձեռք բերել:

Կենսաթոշակների վճարումը

Կուտակային կենսաթոշակային համակարգը Արցախում ներդրվել էր 2019 թվականին և կարգավորվում էր «Կուտակային կենսաթոշակների մասին» ԼՂՀ օրենքով: Բռնի տեղահանությունից հետո Հայաստան տեղափոխված բնակչության համար ԼՂ կենսաթոշակային ֆոնդում կուտակված միջոցների ապագան դարձավ անորոշ:[32]

2024 թ. հունվարի 16-ին ԼՂ Ազգային ժողովը փոփոխություն կատարեց «Կուտակային կենսաթոշակների մասին» ԱՀ օրենքում՝ սահմանելով, որ արտակարգ իրավիճակներում ֆիզիկական անձը կարող է իր հայեցողությամբ կառավարել կենսաթոշակային ֆոնդի միջոցները:[33] Ըստ այս փոփոխության, ֆիզիկական անձինք պետք է ինը ամսվա ընթացքում դիմում ներկայացնեին՝ առկա միջոցները ԱՀ կենսաթոշակային ֆոնդի իրենց հաշվից այլ կենսաթոշակային ֆոնդի կամ իրենց բանկային հաշվին փոխանցելու համար:[34]

Սակայն, 2024 թ. հունիսի 13-ին ՀՀ Ազգային ժողովը փոփոխություն կատարեց «Կենսաթոշակային համակարգի կուտակային բաղադրիչի մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության լրացուցիչ երաշխիքների մասին» ՀՀ օրենքում,[35] համաձայն որի՝ ԼՂ կենսաթոշակային ֆոնդի խնայողությունները քաղաքացիների դիմումների հիման վրա «կարող են փոխանցվել» ՀՀ կուտակային կենսաթոշակային համակարգին: Օրենքը միաժամանակ սահմանում է, որ եթե անձը կուտակված միջոցների փոխանցման ընթացակարգերի մշակման օրվանից հետո 3 ամսվա ընթացքում դիմում չի ներկայացնում, ապա փոխանցումը կկատարվի ինքնաբերաբար՝ օրենքի ուժով, առանց դիմում ներկայացնելու:[36] 2024 թ. սեպտեմբերի 23-ին ԱՍՀ նախարարի N 125-Ն հրամանով[37] սահմանվել են կենսաթոշակային խնայողությունների տեղափոխման հետ կապված ընթացակարգերը, որոնց համաձայն, եթե անձը վերը նշված ժամկետում դիմում չի ներկայացնում կենսաթոշակային ֆոնդ ընտրելու մասին, ապա պետությունը ինքն է որոշում՝ որ ֆոնդ տեղափոխել ԼՂ-ում կուտակած խնայողությունները:

---

[31] ՀՀ ԱՍՀՆ ֆեյսբուքյան էջ, «Հայտարարություն աջակցության ներկայիս ֆինանսական ծրագրի ժամկետի վերաբերյալ», https://www.facebook.com/reel/975841364370124, դիտված՝ 08.11.2024 թ.:

[32] Փաստերի ստուգման հարթակ, *Տարբերակված մոտեցում ԱՀ օրենսդրությանը. ՀՀ կառավարությունը չի պարպաբանում,* 08.07.2024 թ., https://fip.am/25437, դիտված՝ 18.10.2024 թ.:

[33] Նույն տեղում:

[34] Նույն տեղում:

[35] «Կենսաթոշակային համակարգի կուտակային բաղադրիչի մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության լրացուցիչ երաշխիքների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն, 13.06.2024 թ., https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=194304, դիտված՝ 18.10.2024 թ.:

[36] Նույն տեղում:

[37] «Կենսաթոշակային խնայողությունների տեղափոխման հետ կապված ընթացակարգերը սահմանելու մասին» ԱՍՀ նախարարի N 125-Ն հրաման, 23.09.2024 թ., https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=198060, դիտված՝ 23.11.2024 թ.:

Մարտահրավերներ

Հետազոտության արդյունքում վերհանվել են հետևյալ խնդիրները.

Անբավարար աջակցություն, խոցելի խմբերի և հատուկ կարիքների անտեսում

Ֆինանսական աջակցության հնարավոր կրճատման ռիսկ. Արցախցիների շրջանում լրջագույն մտահոգություն է առաջացնում պետության կողմից տրամադրվող 40,000 + 10,000 ՀՀ դրամ աջակցության հնարավոր նվազեցումը, որը կարող է հանգեցնել նրանց խոցելիության աճի և հնարավոր արտագաղթի:

Պայթյունի հետևանքով տուժածների վիճակի անտեսում. 2023 թվականի սեպտեմբերի 25-ին Արցախում բենզինի պահեստի պայթյունի հետևանքով զոհված կամ տուժած անձանց ընտանիքների կարգավիճակն անորոշ է, որի պատճառով հաշմանդամություն ստացած անձանց և զոհվածների ընտանիքները մնացել են առանց համապատասխան ֆինանսական աջակցության:

Աջակցություն զոհվածների ընտանիքներին. ԼՂ Քաշաթաղի և Քարվաճառի շրջաններում վերաբնակեցված՝ ՀՀ քաղաքացի հանդիսացած և 2020 թվականի պատերազմի ընթացքում զոհված անձանց ընտանիքներին, կախված ընտանիքի կազմից, տրամադրվում էր ԱՀ կառավարության երաշխավորությամբ 20-22 միլիոն ՀՀ դրամի չափով աջակցություն, ՀՀ-ում բնակարան ձեռք բերելու համար՝ ԱՀ կողմից տրամադրվող ամսական հատկացումներով, սակայն ոմանք չեն հասցրել ժամանակին դիմել, և այս ծրագիրը նրանց համար այլևս հասանելի չէ:

Քաղաքացիություն ունենալու հետ կապված վերապահումներ. Այն անձինք, որոնք ունեցել են ՀՀ քաղաքացիություն, սակայն մշտապես բնակվել են ԼՂ-ում, զրկվում են 40,000 + 10,000 դրամ աջակցությունից՝ մնալով առանց անհրաժեշտ ֆինանսական աջակցության:

Քաղաքացիություն չունենալու հետ կապված սահմանափակումներ. ՀՀ քաղաքացիություն չունեցող ԼՂ բնակիչները չեն կարող օգտվել երրորդ կամ հաջորդ երեխաների համար հատկացվող սոցիալական վճարներից:

Ժամանակավոր հաշվառման հետ կապված վերապահումներ. Անհատները, որոնք աշխատանքի բերումով ժամանակավոր հաշվառում են ստացել Հայաստանում, իսկ հետագայում վերադարձել են ԼՂ, դուրս են մնացել աջակցության ծրագրերից:

Երկակի հաշվառման հետ կապված խոչընդոտներ. ԼՂ այն բնակիչները, որոնք հաշվառված են թե՛ Հայաստանում, թե՛ ԼՂ-ում, բախվում են սոցիալական ծրագրերից օգտվելու դժվարությունների, հատկապես եթե նրանք արտակարգ իրավիճակների պատճառով 2023 թ. սեպտեմբերից առաջ, այդ թվում՝ Արցախի շրջափակման ամիսներին, տեղափոխվել են Հայաստան՝ առողջապահական կամ հրատապ այլ պատճառներով:

Հաշվառմանն առնչվող առանձնահատուկ խնդիրներ. Անհատները, որոնք 2020 թ. պատերազմի օրերին տեղափոխվել էին Հայաստան, հետագայում վերադարձել ԼՂ, սակայն նորից տեղահանվել են 2023 թվականին, չեն ճանաչվում որպես ծրագրի շահառու՝ ՀՀ-ում իրենց նախորդ գրանցման պատճառով: Օրինակ, 2020 թ. պատերազմի հետևանքով սահմանամերձ դարձած Մարտակերտի Չարեքթար գյուղի՝ միանման ճակատագիր ունեցող

մի քանի տասնյակ բնակիչներ ներառված չեն ֆինանսական աջակցության ծրագրերում, ընդ որում, նրանք նաև չեն հանդիսանում 2022 թ. բնակարանային ծրագրի շահառու:

Աջակցության անսպասելի դադարեցման հետևանքով ծագած խնդիրներ. 2024 թ. մայիսից որոշ արցախցիներ, ներառյալ 1990-ականներին Ադրբեջանից տեղահանված և ԼՂ-ում բնակություն հաստատած նախկին փախստականները և Քաշաթաղի ու Քարվաճառի շրջաններից 2020 թ. հետո տեղահանվածները, անսպասելի դադարեցին ստանալ ֆինանսական աջակցություն՝ ինքնըստինքյան դասակարգվելով որպես կառավարության 2022 թ. 169-Լ որոշման[38] շահառուներ, որը նախատեսում է կացարանների տրամադրում ԼՂ առանձին շրջաններից տեղահանված ընտանիքներին: Այս հարցը ՀՀ կառավարության կողմից լուծվեց 2024 թվականի հոկտեմբերին՝ փախստականների կողմից բարձրաձայնվելուց հետո: Արդյունքում, վերականգնվեց այն անձանց տրամադրվող աջակցությունը, որոնք մինչև 2024 թ. հուլիսն իրավունք ունեին ստանալու ֆինանսական աջակցություն, բայց հավաստագիր չէին ստացել, կամ ստացել էին, սակայն չէին օգտվել դրանից: Միաժամանակ, որպես լրացուցիչ պայման սահմանվեց ֆինանսական աջակցության համար կրկին դիմելու պահանջ, ինչի վերաբերյալ նախկին շահառուները պատշաճ չեն տեղեկացվել, շատերն էլ չեն վերականգնել ֆինանսական աջակցությունից օգտվելու՝ իրենց իրավունքը:

Անբավարար աջակցություն փոքր ընտանիքներին. Փոքր ընտանիքներին տրամադրվող աջակցությունը հաճախ բավարար չէ, նրանք կանգնում են բազմաթիվ սոցիալական մարտահրավերների առջև, որոնք լուծել ի վիճակի չեն:

Շինարարական պայմանագրերից բխող չվճարված պարտքեր. Տեղահանված որոշ անձինք, որոնք ԼՂ-ում պետական պայմանագրերի շրջանակներում տներ էին կառուցում, շինանյութերի դիմաց պետության կողմից այլևս վճարում չեն ստացել, ինչի պատճառով ունեն ժամկետանց պարտավորություններ տարբեր մատակարարների առջև:

Նախկին հիփոթեքային պարտավորությունների բեռը. Ավելի քան 20 ընտանիք, որ Արցախի կառավարության ծրագրով վերաբնակեցվել էին Քաշաթաղում և օգտվել ԼՂ-ում իրականացված 20 միլիոն դրամի չափով բնակարանաշինության ծրագրից, այժմ հիփոթեքի վճարման հետ կապված ունեն բանկային պարտավորություններ, քանի որ 2023 թ. սեպտեմբերից հետո ԱՀ կողմից կատարվող պետական վճարումները դադարեցվել են:

Գույքի սեփականության հետ կապված բարդություններ. 2023 թ. տեղահանված բնակչության մի մասը հանվել է աջակցության ծրագրերից՝ Հայաստանում սեփականություն ունենալու պատճառով: Չնայած կանոնակարգը սահմանում էր, որ եթե յուրաքանչյուր անձի բնակելի տարածքը չի գերազանցում սկզբնական շրջանում՝ 12, իսկ 2024 թ. փետրվարից սկսած՝ 20 քառակուսի մետրը, շատերն աջակցությունից զրկվել են՝ առանց հաշվի առնելու այս նորմը և այն հանգամանքը, որ իրենց անունով Հայաստանում գրանցված սեփականությունը կարող էր լինել անասնագոմ, ոչ բնակելի տարածք կամ հայրական տունը, որտեղ տվյալ պահին հաշվառված է ավելի քան 10 անձ:

Գույքի համասեփականության հետ կապված խնդիրներ. Այն անձինք, որոնք Հայաստանում գույքի համասեփականատեր են, բախվում են խոչընդոտների: Օրինակ՝ մի կին, որը

[38] «Արցախի Հանրապետության առանձին շրջաններից տեղահանված ընտանիքների համար բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 169-Լ որոշում, 17.02.2022 թ., https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=189788, դիտված՝ 18.10.2024 թ.:

տարիներ առաջ ամուսնացել և տեղափոխվել էր ԼՂ, տեղահանությունից հետո զրկվել է աջակցությունից, քանի որ ծնողական տան համասեփականատեր էր:

Աջակցության դադարեցում՝ երկրից բացակայելու դեպքում. Ներկայումս շահառուները կորցնում են իրենց ֆինանսական աջակցությունը, եթե ամսվա ընթացքում 10 օրից ավելի բացակայում են երկրից: Այդ թվում, դադարեցվում է նրանց անչափահաս երեխաների սոցիալական աջակցությունը: Ընդ որում, հաշվի չի առնվում անձի՝ երկրից բացակայելու նպատակը, օրինակ՝ ընտանեկան արտակարգ իրավիճակ, առողջական խնդիր և այլն: Աջակցությունը վերականգնելու գործընթացը երկարատև ու բարդ է, որը հավելյալ դժվարություններ է առաջացնում արդեն իսկ խոցելի ընտանիքների համար:

Կենսաթոշակներին առնչվող խնդիրներ

Աշխատանքային ստաժը ստուգելու/չճանաչելու խնդիրներ. Տեղահանվածներից շատերը դժվարությունների են հանդիպում կենսաթոշակների ձևակերպման հարցում՝ կապված իրենց աշխատանքային փորձի ստուգման և պահանջվող փաստաթղթերը ներկայացնելու բարդ գործընթացի հետ: Եթե 2014 թվականից ի վեր աշխատանքային ստաժի մասին տեղեկատվությունն արդեն վարվել է էլեկտրոնային համակարգով, ապա մինչև 2014 թ. ձևավորված աշխատանքային ստաժը հաճախ չի ճանաչվում, եթե անգամ աշխատանքային գրքույկում առկա է համապատասխան գրառում, ինչի հետևանքով որոշ անձինք չեն կարողանում ավելի քան մեկ տարի ստանալ իրենց թոշակները: Հակասական է այն, որ ԼՂ բնակիչների աշխատանքից գոյացած կենսաթոշակի գումարները պահվում են կենսաթոշակային ֆոնդերում, սակայն այդ նույն աշխատանքը, որի դիմաց վճարվել են, որպես աշխատանքային ստաժ չի ճանաչվում:

Կենսաթոշակային ֆոնդի հասանելիության խնդիրներ. ՀՀ քաղաքացիություն չունեցող տեղահանված անձինք բախվում են կուտակված կենսաթոշակային միջոցները հետ ստանալու խնդիրների՝ արդյունքում մնալով առանց կենսապահովման ռեսուրսների: Փաստացի, նրանք իրազեկված չեն ԼՂ-ում իրենց կուտակած սոցիալական վճարների ճակատագրի մասին, որոնք տեղափոխվել են ՀՀ կենսաթոշակային ֆոնդեր: Տեղահանված այն անձինք, որոնք չեն աշխատում ՀՀ-ում, հետևաբար չունեն նաև սոցիալական վճարում կատարելու պարտավորություն, կամ եթե նրանք որոշում են տեղափոխվել արտերկիր, կորցնում են ԼՂ կենսաթոշակային ֆոնդի իրենց գումարը: Նույնիսկ եթե տեղահանված անձը ՀՀ-ում ընդունվում է աշխատանքի կամ ստանում է ՀՀ քաղաքացիություն, նա չի կարող տեղեկանալ ԼՂ-ում իր անունով կուտակված սոցիալական վճարների մասին, և հարցականի տակ է կուտակային ֆոնդի հաշվեհամարում ԼՂ-ում իր անունով կուտակված գումարը:

Անհարկի վարչարարություն և ծառայության անբավարար որակ

Սոցիալական աջակցության գերծանրաբեռնված ծառայություններ. Սոցիալական աջակցության ներկայիս ծառայությունները գերծանրաբեռնված են, որի հետևանքով հայտերի մշակումը ժամանակատար է: Տեղահանված անձինք հաճախ բախվում են դժվարությունների, հատկապես երբ անհրաժեշտ են անհատականացված մոտեցումներ կամ լուծումներ, որոնք, սակայն, չեն առաջարկվում: ՄՍԾ զանգերի կենտրոնը ևս ծանրաբեռնված է, հաճախ հնարավոր չի լինում միանալ, իսկ միանալու դեպքում տեղահանվածները ոչ միշտ են սպառիչ պատասխան ստանում իրենց խնդիրների վերաբերյալ, թեև, ըստ փորձագետների, աշխատակիցների տեղեկացվածության մակարդակը վերջին տարվա ընթացքում որոշ չափով բարելավվել է:

Պահանջվող փաստաթղթերի մեծ քանակ. Բյուրոկրատական պահանջները չափազանց մեծ են, քանի որ ՄՄԾ տարածքային կենտրոնները պահանջում են բազմաթիվ փաստաթղթեր, ներառյալ ծնողների մահվան վկայականները՝ տարեց դիմորդների համար: Սա բարդացնում է դիմումների գործընթացը և խոչընդոտում անհրաժեշտ աջակցություն ստանալը: Արցախցիները նշում են, որ հաճախ անհրաժեշտություն է լինում բազմիցս այցելելու վարչական մարմիններ, ընդ որում, պատահում է, որ յուրաքանչյուր հաջորդ այցին նոր փաստաթղթեր են պահանջում:

Փաստաթղթերի հասանելիության խնդիրներ. Արխիվային փաստաթղթերի բացակայությունը պահանջում է, որ տեղահանված համայնքների բնակիչները երկար ճանապարհ անցնեն, գտնեն իրենց նախկին համայնքի ղեկավարին և տեղեկանք վերցնեն՝ այս կամ այն տվյալը հավաստելու համար:

Փաստաթղթերի փոփոխման վտանգներ. Անձինք կարող են աջակցությունից զրկվել անձնագրերը փոխելու կամ վերաթողարկելու փաստի հիմքով, օրինակ՝ անձնագրի ժամկետը լրանալու պատճառով:

Տվյալների գրանցման խոչընդոտներ. Այն անձինք, որոնց տվյալները գրանցված չեն եղել 2020 թվականի արցախյան պատերազմի ընթացքում ՀՀ-ում ձևավորված ԼՂ օպերատիվ շտաբի տվյալների բազայում, չեն կարողանում օգտվել աջակցությունից, քանի որ ԱՍՀՆ-ն պատճառաբանում է, որ դրամական աջակցության շահառուների ցանկը ձևավորելիս հիմք են հանդիսացել օպերատիվ շտաբի կողմից փոխանցված ցուցակները: Անուններում կամ ազգանուններում առկա սխալները նույնպես խոչընդոտում են աջակցություն ստանալուն, քանի որ դրանք հնարավոր չէ շտկել առանց ԼՂ օպերատիվ շտաբի աջակցության: 2024 թ. հունվարին այս շտաբը դադարել է գործել, և շատերը չգիտեն՝ ուր դիմել, երբ առաջանում են խնդիրներ, իսկ ոմանք շարունակում են զանգահարել *դե յուրե* գոյություն չունեցող օպերատիվ շտաբի հեռախոսահամարով:

Սոցիալական աջակցության վճարումների անկանոնություն. 40,000 + 10,000 ՀՀ դրամ սոցիալական աջակցության վճարները տրամադրելու հետ կապված խնդիրները հիմնականում լուծվել են, սակայն եղել են դեպքեր, երբ առաջացել են խնդիրներ՝ կապված սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգի հետ, որը գրանցել է ելքը, բայց ոչ մուտքը, ինչի պատճառով շահառուները սահմանված կարգով չեն ստացել գումարը: Առողջական կամ ընտանեկան պատճառներով Հայաստանից կարճատև բացակայությունը ևս կարող է դառնալ տվյալ ամսվա աջակցությունից զրկվելու հիմք:

Անբավարար իրազեկվածություն

Իրազեկվածության և հասանելիության խնդիրներ. Առկա է աջակցության ծրագրերի վերաբերյալ իրազեկվածության զգալի պակաս, ինչը հանգեցնում է նրան, որ ԼՂ-ից տեղահանված բազմաթիվ անձինք անտեղյակ են այն հնարավոր աջակցության մասին, որից կարող են օգտվել: Ծրագրերի մասին տեղեկատվությունը հաճախ սակավ է և հիմնականում տարածվում է բանավոր, որի հետևանքով տեղեկատվությունը է թերի է և/կամ աղավաղված:

ԼՂ և ՀՀ սոցիալական արտոնությունների համակարգերի տարբերությանն առնչվող խնդիրներ. Տեղահանվածներից շատերը ԼՂ-ում տարբեր նպաստներ էին ստանում, որոնք ՀՀ սոցիալական համակարգում սահմանված չեն, օրինակ՝ անչափահասների, բազմազավակ ընտանիքի, միայնակ մայրերի նպաստ, էլեկտրաէներգիայի փոխհատուցումներ՝

հաշմանդամություն ունեցող անձանց համար և այլն: Ուստի, այս տեսակի նպաստների դադարեցումը լրացուցիչ խնդիր է դարձել այն ընտանիքների համար, որոնք կարողանում էին առօրյա հոգսերը հոգալ այս գումարի հաշվին, մասնավորապես՝ բազմազավակ ընտանիքների դեպքում, իսկ ՀՀ-ում տրամադրվող արտոնությունների մասին հստակ տեղեկատվության բացակայությունը հանգեցրել է չարդարացված ակնկալիքների ու բողոքների:

Առաջարկություններ

Նշված մարտահրավերների առնչությամբ առաջարկվում են հետևյալ միջոցառումները.

Խոցելի խմբերի կարիքների բավարարում

Ֆինանսական աջակցության երկարաձգում. Շարունակել տրամադրել բնակարանային և կոմունալ ծառայությունների համար տրամադրվող 40,000 + 10,000 ՀՀ դրամ աջակցությունը՝ մինչև տեղահանված ընտանիքները ձեռք բերեն սեփական կամ պետության աջակցությամբ հատկացված բնակարան և ունենան եկամուտ ստանալու հնարավորություն՝ դրանով իսկ աստիճանաբար նվազեցնելով շահառուների շրջանակը՝ հաշվի առնելով նրանց վիճակի ընթացիկ մոնիտորինգի արդյունքները:

Հատուկ պայմանների սահմանում խոցելի խմբերի համար. Մինչև երեք անձից բաղկացած ընտանիքների, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց համար սահմանել հատուկ դրույթներ՝ հաշվի առնելով տրամադրվող ֆինանսական աջակցության անբավարարությունը:

Պայթյունի կոների կարգավիճակի ճանաչում. ԼՂ-ում լցակայանի պայթյունի հետևանքով մահացած անձանց, այդ թվում՝ կերակրողին կորցրած ընտանիքներին տալ հատուկ կարգավիճակ և տրամադրել համապատասխան ֆինանսական աջակցություն:

Երկրից բացակայելու դեպքում ճկուն մոտեցում. Առողջական կամ ընտանեկան արտակարգ իրավիճակների բերումով երկրից հարկադրված բացակայելու դեպքում անել բացառություն և/կամ երկարաձգել աջակցությունը դադարեցնելու ժամկետը և/կամ չպահանջել՝ վերադարձից հետո կրկնակի անցնել դիմումների ներկայացման ամբողջ գործընթացը:

Ձևավորված վարկային բեռի թեթևացում. Վարել բանակցություններ մասնավոր բանկերի հետ՝ ԱՀ-ում անշարժ գույքի ձեռքբերման նպատակով առաջացած հիփոթեքային և այլ վարկային պարտավորությունները ներելու վերաբերյալ՝ ռազմական գործողություններով պայմանավորված անհաղթահարելի ուժի առաջացման հիմքով:

Վարչարարության արդյունավետության ապահովում

Աշխատանքային ստաժը ճանաչելու գործընթաց. Ապահովել սոցիալական աջակցության հայտերի մշակումը ողջամիտ ժամկետներում, ցուցաբերել անհատականացված մոտեցում և լուծումներ: Դիտարկել աշխատանքային ստաժի ապացուցման համար պահանջվող փաստաթղթերի ցանկը վերանայելու և/կամ կրճատելու հնարավորությունը:

Կենսաթոշակների վճարում

Կենսաթոշակի հաշվարկման հանձնաժողովի ստեղծում. Դիտարկել ԱՍՀՆ կից հատուկ հանձնաժողովի կամ աշխատանքային խմբի ստեղծման հնարավորությունը՝ ԼՂ-ից տեղահանված անձանց կենսաթոշակների հաշվարկի և աշխատանքային ստաժի խնդիրները լուծելու նպատակով:

Կուտակային կենսաթոշակային ֆոնդերի հասանելիության ապահովում. ՀՀ քաղաքացիություն չստացած տեղահանված անձանց տրամադրել հասանելիություն իրենց կուտակած կենսաթոշակային ֆոնդերին՝ թույլ տալով նրանց ինքնուրույն կառավարել իրենց ֆինանսական ռեսուրսները, իսկ ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու դեպքում ԼՂ-ում կուտակած սոցիալական վճարները կապակցել ՀՀ կենսաթոշակային ֆոնդին:

Պատշաճ իրավակում

Իրավակում ֆինանսական աջակցություն ստանալու վերաբերյալ. Նախաձեռնել իրազեկման արշավներ, որոնք կհստակեցնեն ֆինանսական աջակցության համար դիմելու գործընթացները, մանրամասն կնկարագրեն անհրաժեշտ քայլերը՝ օգնելով տեղահանված անձանց՝ կողմնորոշվել և հասկանալ աջակցության հետ կապված իրենց իրավունքները:

Հետագա ֆինանսական աջակցության և դրա դադարեցման մասին իրավակում. Արդյունավետ միջոցներով բռնի տեղահանվածներին իրազեկել ֆինանսական աջակցության ծրագրի փոփոխությունների մասին՝ այդ թվում բացատրելով և հիմնավորելով նոր մոտեցումները, դրանց անհրաժեշտությունը, չափանիշները և նրանց հետ քննարկելով չափանիշներին չհամապատասխանող անձանց և ընտանիքների՝ Հայաստանում հետագա գոյատևման հնարավոր ուղիները և, ըստ անհրաժեշտության, ցուցաբերելով անհրաժեշտ աջակցություն:

Գ. Բռնի տեղահանված անձանց բնակարանային ապահովման ծրագիրը

քաղաքականության համառոտագիր

Ամփոփում

Բռնի տեղահանված և տունն ու հարազատ միջավայրը կորցրած արցախցիներին աջակցելու համար առանցքային նշանակություն ունի հնարավորինս սեղմ ժամկետներում նրանց բնակարանով ապահովելը: Դատելով բնակարանային ծրագրին դիմած անձանց փոքր թվից՝ երևում է, որ մեծ չէ հետաքրքրությունը՝ օգտվելու ընձեռնված հնարավորությունից, նույնիսկ եթե հավաստագրման գործընթացի դանդաղ ընթացքը պայմանավորված է տեխնիկական խնդիրներով: Միաժամանակ ակնհայտ է, որ մարդիկ ոչ թե կարիք չունեն բնակարաններ ձեռք բերելու հարցում պետական աջակցության, այլ վստահ չեն, որ առաջարկվող ծրագիրը բավարարում է իրենց բնակապահովման կարիքը և բարենպաստ պայմաններ է ստեղծում իրենց ու իրենց երեխաների ապագան կառուցելու համար: Շատերը նաև չեն կողմնորոշվում բնակավայրի ընտրության հարցում, քանի որ կառավարության բնակարանային ծրագիրը չի ուղեկցվում զբաղվածության ապահովմանը միտված միջոցառումներով:

Առաջարկվում է բնակարանային ծրագիրը դիտարկել առավել ընդգրկուն համատեքստում, և, քաղաքացիություն ստանալը որպես տարբեր միջոցառումներից ու ծրագրերից օգտվելու նախապայման սահմանելու փոխարեն մշակել գրավիչ ծրագիր՝ մարզերում ստեղծելով ինչպես զբաղվածության, այնպես էլ պատշաճ ու ցանկալի կենսամիջավայր ապահովելու հնարավորություններ: Անհրաժեշտ է նաև առավել արդյունավետ դարձնել ծրագրի վարչարարությունը՝ հետաքրքրված անձանց պատշաճ ժամկետներում ապահովելով բնակարաններով:

Հիմնախնդիր

ՀՀ կառավարության բնակարանային ծրագիրն ընդունվել է 2024 թ. մայիսի 16-ին, սակայն 2024 թ. նոյեմբերի 21-ի դրությամբ իրացվել է ընդամենը մեկ հավաստագիր,[39] այն էլ հավելյալ հիփոթեքային վարկ ստանալու շնորհիվ: Ավելին, հոկտեմբերի 31-ի դրությամբ ծրագրին դիմել է ընդամենը 1,260 անձ, որից միայն 30-ի դիմումն է հաստատվել:[40] Այս ցուցանիշը, մի կողմից, վկայում է ծրագրի վարչարարության խիստ սահմանափակ արդյունավետության մասին, ինչը կարող է նույնիսկ հանգեցնել հետաքրքրված անձանց հիասթափության, մյուս կողմից, այն խոսում է ծրագրի մշակման փուլում թերացումների մասին, որում, ըստ երևույթին, հաշվի չեն առնվել հնարավոր շահառուների կարիքները:

Բնակարանային ծրագրից լիարժեք օգտվելու համար ՀՀ քաղաքացիություն ստանալու պահանջը նշանակալի արգելք է, քանի որ տեղահանվածների փոքր մասն է հետաքրքրված քաղաքացիություն ստանալու հարցում՝ տվյալ կարգավիճակի հետ կապված բազմաթիվ անորոշությունների պատճառով: Նման իրավիճակում խոցելի տեղահանված անձանց բնակարանային ծրագրին մասնակից դարձնելը ՀՀ քաղաքացի դառնալու նախապայմանով՝

[39] «Ազատություն» ռադիոկայանի ֆեյսբուքյան էջ, «Արցախցիները արտագաղթում են՝ չնայելով իրենց օգնության ծրագրերը բարձր գնահատող հարցումներին», https://www.facebook.com/azatutyun/videos/1747480632673481, դիտված՝ 08.11.2024:
[40] Նույն տեղում:

նման է վերջնագրի, որը խորացնում է առանց այդ էլ առկա անվստահությունը և սեփական ապագայի անորոշությունը:

Առկա ծրագրեր ու կարգավորումներ

ՀՀ կառավարության բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրի նպատակն է՝ ապահովել տեղահանված ընտանիքների սոցիալական և տնտեսական ներառումը՝ Հայաստանում բնակարանային երկարաժամկետ լուծումներ տրամադրելու միջոցով: Ծրագիրն ընդունվել է 2023 թ. մայիսի 16-ին,[41] իսկ դրա իրականացման կարգը սահմանվել է հունիսի 14-ին:[42] Ծրագիրն իրականացվելու է 5 տարի ժամկետով (2024-2029 թթ.)՝ երեք փուլով. առաջինն սկսել է 2024 թ. հունիսի 15-ին, իսկ երկրորդ և երրորդ փուլերը կմեկնարկեն, համապատասխանաբար, 2026 և 2027 թվականներին:

Ծրագիրն առաջարկում է աջակցության մի շարք մեթոդներ.

- *Բնակարանի ձեռքբերման հավաստագրերի տրամադրում.* Շահառուները կարող են ստանալ հավաստագրեր՝ բնակարան կամ առանձնատուն գնելու կամ կառուցելու համար, ինչպես նաև կիսակառույց շենքերում բնակարաններ ձեռք բերելու հնարավորություն:

- *Տների կառուցում.* Ընտանիքները կարող են ստանալ հավաստագրեր առանձնատուն կառուցելու համար՝ տիպային նախագծերի կամ հաստատված անհատական նախագծերի հիման վրա:

- *Հիփոթեքային վարկի աջակցություն.* Ծրագիրը նաև օգնում է ընտանիքներին՝ առկա հիփոթեքային վարկերը պետական աջակցությամբ մարելու գործում:

Ծրագրի համաձայն, ձեռք բերվող բնակարանների մակերեսը պետք է պակաս չլինի 12 քմ-ից՝ ընտանիքի մեկ անդամի համար: Ձեռք բերվելիք գույքի առավելագույն արժեքը սահմանված է 55 միլիոն ՀՀ դրամ: Հիփոթեքային վարկերը տրամադրվում են զրոյական կանխավճարով և պետք է մարվեն առավելագույնը 10 տարվա ընթացքում՝ սուբսիդավորված տոկոսադրույքներով: Համաձայն բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրի կարգի, հիփոթեքային վարկի գործողության ընթացքում բնակարանը կամ կառուցվող շենքից բնակարան գնելու իրավունքը կամ անհատական բնակելի տունն օտարելու դեպքում պետական աջակցության գումարը շահառուի կողմից ենթակա է վերադարձման պետությանը՝ փոխհամաձայնեցված եղանակով կամ դատական կարգով, իսկ դրա ձեռքբերման նախապատվության իրավունքը պատկանում է պետությանը: Ավելին, ըստ այդ նույն կարգի՝ ծրագրի աջակցության դադարեցման դեպքում կառուցվող կամ ձեռք բերված գույքը անցնում է պետությանը:[43]

[41] «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագիրը և Հայաստանի Հանրապետության առանձին բնակավայրերի ցանկերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 710-Լ որոշում, 16.05.2024 թ., https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=197920, դիտված՝ 31.10.2024 թ.:

[42] «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրի իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 898-Լ որոշում, 14.06.2024 թ., https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=197921, դիտված՝ 08.11.2024 թ.:

[43] Նույն տեղում:

Ծրագրի երեք փուլերն են՝

- *Առաջին փուլ (2024-2026 թթ.).* Նախապատվությունը տրվում է 3 և ավելի անչափահաս երեխա ունեցող ընտանիքներին՝ բնակարանի կամ կառուցվող շենքից բնակարան գնելու իրավունքի կամ անհատական բնակելի տան ձեռքբերման դեպքում, 2 և ավելի անչափահաս երեխա ունեցող ընտանիքներին՝ անհատական բնակելի տան կառուցման դեպքում. զոհվածի, կերակրողին կորցրածի կամ ֆունկցիոնալության ծանր կամ խորը աստիճանի սահմանափակում ունեցող անդամով ընտանիքներին, ցանկացած այլ կազմով ընտանիքներին, որոնց անդամները ֆինանսական կազմակերպության կողմից կհամարվեն վարկունակ և ի լրումն ծրագրով նախատեսված հավաստագրի՝ դրա արժեքի առնվազն 50 տոկոսի չափով հավելյալ հիփոթեքային վարկ կստանան ծրագրի ցանկացած բաղադրիչով և 2024 թվականի մայիսի 16-ի դրությամբ գործող և սույն հավելվածի 10-րդ կետով սահմանված պայմաններին՝ ծրագրին դիմելու օրվա դրությամբ բավարարող հիփոթեքային վարկ ունեցող ընտանիքները:

- *Երկրորդ փուլ (ոչ ուշ, քան 2026 թ. հունվարի 1-ից).* Նախապատվությունը տրվում է 2 և ավելի երեխա ունեցող ընտանիքներին, ինչպես նաև, առնվազն մեկ անչափահաս երեխա ունեցող ընտանիքները՝ անհատական բնակելի տան կառուցման դեպքում:

- *Երրորդ փուլ (ոչ ուշ, քան 2027 թ. հունվարի 1-ից).* Մնացած բոլոր տեղահանված ընտանիքները կդառնան ծրագրի շահառուներ:

Ծրագիրը նախատեսված է տարբեր կազմ ունեցող ընտանիքների համար, ներառյալ միայնակ անձինք և բազմազավակ ընտանիքները: Այն ընդգրկում է նաև այն ընտանիքները, որոնք ստիպված են եղել տեղափոխվել 2020 թվականի 44-օրյա պատերազմից հետո և 2022 թ. մեկնարկած բնակարանային ապահովման ծրագրերի շահառու չեն:[44]

Մարտահրավերներ

Հետազոտության արդյունքում վերհանվել են հետևյալ խնդիրները.

Ֆինանսական խնդիրներ

Բարձր տոկոսադրույքներ. Թեև ծրագիրը նախատեսում է պետության կողմից երաշխավորված հիփոթեքներ՝ առանց կանխավճարի, այնուամենայնիվ, ֆինանսական կազմակերպությունները կարող են սահմանել վճարունակության չափանիշներ, որոնք անապահով ընտանիքների համար անհասանելի են՝ ի հավելումն ծրագրի համաձայն վճարվելիք շատ բարձր տոկոսադրույքների (11-14%):

Պատշաճ անշարժ գույքի ձեռքբերման անհնարինություն. Շատ տեղահանված ընտանիքներ գործազուրկ են կամ չունեն կայուն եկամուտ, ինչի հետևանքով չեն կարող նույնիսկ սուբսիդավորվող հիփոթեքային վճարումներ կատարել: Հետևաբար, եթե անշարժ գույքի արժեքը գերազանցում է ընտանիքի բոլոր անդամների հաշվով առաջարկվող ֆինանսական աջակցության գումարը (իսկ բավականին հաճախ պետության տրամադրած գումարը բավարար չէ շուկայական արժեքով սեփականություն ձեռք բերելու համար), ընտանիքը,

[44] ՀՀ կառավարության N 169-Լ որոշում, 17.02.2022 թ.:

բանկից հավելյալ հիփոթեքային վարկ ստանալու համար, պետք է ապացուցի իր վճարունակությունը, ինչը 50%-ից ավելի գործազրկության պարագայում գրեթե անհնար է:

Ներկա և երկարաժամկետ վճարունակության ռիսկեր. Հիփոթեքային վարկեր վերցնելը առաջացնում է ֆինանսական կայունության ռիսկեր, հատկապես, երբ տեղահանվածների մեծ մասը գործազուրկ է և չունի կայուն եկամուտ, և պետության կողմից տրամադրվող աջակցության սպառման պարագայում չի կարողանալու կատարել հիփոթեքային վարկի մնացյալ գումարի հետ կապված պարտավորությունները՝ նույնիսկ տարիներ անց: Ավելին, հիփոթեքային վարկի տրամադրման օրվանից 37 ամիս անց՝ լողացող տոկոսադրույքների պարագայում, տոկոսադրույքը կարող է ավելանալ՝ ըստ բանկերի հայեցողության:

Հավելյալ ծախսեր կառուցապատման ընթացքում. Տներ կառուցող ընտանիքները ստիպված են համագործակցել կառուցապատող ընկերությունների հետ, ինչը կարող է 20-30%-ով բարձրացնել շինարարության ծախսերը:

Խոչընդոտներ ծրագրին մասնակցելու համար

Բյուրոկրատական և տեխնիկական խոչընդոտներ. Փաստաթղթային պահանջները, ինչպես նաև դիմումի ավտոմատացումը, խոչընդոտ են դառնում նրանց համար, ովքեր չունեն թվային հմտություններ և/կամ փաստաթղթեր (օրինակ՝ ծննդյան վկայականներ), որոնք անհրաժեշտ են քաղաքացիություն ստանալու համար:

Նախկին շահառուների բացառում. Ծրագրից դուրս են մնում այն ընտանիքները, որոնք տեղահանվել են 2020 և 2022 թվականներին և նախկինում ստացել, սակայն չեն օգտագործել բնակարանային հավաստագրերը:

Սեփականության իրավունքի սահմանափակումներ. Պատշաճ գույք ձեռք բերելու համար ընտանիքները, հավանական է, որ վճարեն պետության կողմից տրամադրված գումարից ավելի, սակայն այդ դեպքում և.ս, 10 տարի շարունակ իրավական սահմանափակումներ են ունենալու սեփական գույքի նկատմամբ: Հստակ չէ նաև, թե ընտանիքի որ անդամներն են լինելու սեփականատեր, թե ինչպես է որոշվելու սեփականության իրավունքը, եթե վարկը հաշվարկվում է ընտանիքի անդամների, այդ թվում՝ երեխաների թվով:

Փոքր կազմով ընտանիքների խնդիրներ. Փոքր ընտանիքները չեն ընդգրկվում ծրագրի առաջին երկու փուլերում: Բացի այդ, սահմանված գումարը տրամադրվում է ըստ ընտանիքի անդամների թվի, իսկ փոքր կազմով ընտանիքների դեպքում գումարը չի կարող բավարարել որևէ բնակարան գնելու համար:

Արտագնա աշխատանքով պայմանավորված ռիսկեր. Տեղահանված բազմաթիվ ընտանիքների որոշ անդամներ ստիպված են արտագնա աշխատանքի մեկնել՝ տեղում աշխատանքի հնարավորությունների պակասի պատճառով, սակայն, ըստ ծրագրի, 183 օրից ավելի բացակայությունը հանգեցնում է սեփականության իրավունքից զրկվելու ռիսկի: Թեև ծրագրի փոփոխություններով թույլատրվում է մինչև երկու անդամի բացակայություն, սակայն, այս պարագայում էլ, արտագնա աշխատանքից բացի, անձնական կամ բժշկական պատճառներով կես տարվա բացակայությունը կարող է հանգեցնել ընտանիքի գույքի լիակատար կորստի:

Սահմանամերձ համայնքներում բնակության խնդիրներ

Ենթակառուցվածքների և աշխատանքի խնդիր. Ծրագիրը խրախուսում է բնակության հաստատումը սահմանամերձ համայնքներում, սակայն հաշվի չի առնում այդ վայրերում ենթակառուցվածքների, աշխատանքի հնարավորությունների ու զբաղմունքների բացակայությունը:

Անվտանգության խնդիր. Սահմանամերձ վայրերում անվտանգության խնդիրները ռիսկային են ընկալվում հատկապես երեխա ունեցող ընտանիքների համար, ինչը նվազեցնում է բնակություն հաստատելու ցանկությունը:

Մարզային բնակչության տեղաշարժ դեպի Երևան. Արցախցիների բնակարանային ապահովության ծրագրի շրջանակում մարզային բնակիչների կողմից իրենց բնակարանների վաճառքի պարագայում առկա է ռիսկ, որ տեղահանված անձինք կզբաղեցնեն նրանց բնակարանները, իսկ մարզերի բնակիչները կտեղափոխվեն մայրաքաղաք, մինչդեռ պետությունը միաժամանակ նպատակ ունի ապահովելու համաչափ բնակեցումը, այն է՝ Երևանի բեռնաթափումը և մարզային բնակչության ավելացումը:

Առաջարկություններ

Նշված մարտահրավերների հիման վրա առաջարկվում են հետևյալ միջոցառումները.

Առավել մատչելի պայմանների առաջարկ

Հիփոթեքային վարկավորման պայմաններ. Տրամադրել վճարման ավելի մեղմ ու ճկուն պայմաններ կամ էականորեն նվազեցնել տոկոսադրույքները, օրինակ՝ դարձնել 2%՝ հիմք ընդունելով իրատեսական վճարունակությունը:

Շինարարության հնարավորություն. Ընտանիքներին թույլատրել սեփական ուժերով կառավարել շինարարությունը՝ նվազեցնելով կախվածությունը կառուցապատողներից: Որպես հնարավոր տարբերակ դիտարկել մինչև 300 քմ մակերեսով տների կառուցապատման իրավունք տալու հնարավորությունը՝ առանց կառուցապատող ընկերության, որի հնարավորությունն ունեն ՀՀ քաղաքացիները:[45] Հակառակ պարագայում, կառուցապատող ընկերության աշխատանքների գումարը չհաշվարկել արցախցիներին տրամադրվող աջակցության գումարի մեջ: Ընկերության կողմից կառուցապատում իրականացնելու պարագայում ապահովել նաև խիստ պետական վերահսկողություն, երաշխավորել կառուցապատման ընթացքը, ժամկետն ու որակը: Խրախուսել էկոլոգիապես մաքուր մոդուլային տների կառուցումը, որի արդյունքում տրամադրվող գումարը կբավարարի տան ամբողջական կառուցապատման համար:

Շահառուների շրջանակի ընդլայնում

Նախկին ծրագրերի շահառուների ներգրավում. Նախկինում բնակարանային աջակցման ծրագրերի հավաստագիր ստացած, սակայն չօգտագործած ընտանիքներին տալ ծրագրից օգտվելու հնարավորություն՝ ապահովելով, որ նրանք փոփոխվող պայմանների,

[45] «Քաղաքաշինության բնագավառում լիցենզիա չպահանջող աշխատանքների և ծառայությունների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N1615-Ն որոշում, 22.09.2023 թ., https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=182906, դիտված՝ 20.11.2024 թ.:

գործընթացների բարդության, իրազեկման պակասի կամ այլ պատճառներով չզրկվեն աջակցությունից:

Խոցելի ընտանիքների բնակարանային ապահովում. Դիտարկել ցածր եկամուտ ունեցող ընտանիքներին անմիջապես բնակարան տրամադրելու հնարավորությունը՝ նվազեցնելով հիփոթեքային կախվածությունը, ինչը կաջակցի ցածր կամ անկայուն եկամուտ ունեցող ընտանիքներին և կապահովի երկարաժամկետ կայունություն:

Սոցիալական բնակարանների տրամադրում. Մշակել և իրականացնել սոցիալական բնակֆոնդի զարգացման ծրագիր՝ հաշվի առնելով միջազգային հաջողված փորձը: Այդ թվում, դիտարկել կառուցապատողների կողմից յուրաքանչյուր շենքում պետությանը մի քանի բնակարան հատկացնելու հնարավորությունը, որոնք որոշակի չափորոշիչների հիման վրա կտրամադրվեն առավել կարիքավոր ընտանիքներին՝ մշտական բնակության կամ սեփականության իրավունքով: Այս միջոցառումն ընդհանուր բնույթի է, և որպես մոդել կարող է ծառայել Հայաստանում սոցիալապես անապահով և անտուն անձանց խնդիրը լուծելու համար:

Փոքր ընտանիքներին աջակցություն. Մինչև 3 անձից բաղկացած ընտանիքների համար նախատեսել ֆիքսված նվազագույն/ելակետային աջակցություն՝ բնակարանային կարիքների համար:

Զբաղվածության և տնտեսական զարգացման ծրագրերի հետ փոխկապակցում

Աջակցություն զբաղվածությանը և տնտեսական զարգացմանը. Անհրաժեշտ է բնակարանային աջակցությունը զուգորդել զբաղվածության ապահովման ծրագրով՝ օգնելով, որ տեղահանված անձինք կայուն աշխատանք գտնեն, որպեսզի կարողանան կատարել իրենց հիփոթեքային պարտավորությունները և հասնեն ֆինանսական կայունության:

Պայմանների ճկունություն. Երկարաձգել դիմումների ժամկետները՝ ընտանիքներին տալով սահմանված պահանջները կատարելու հնարավորություն, այդ թվում՝ ՀՀ քաղաքացիության ձեռքբերման մասով: Տեղահանված անձանց հնարավորություն տալ օգտվելու աջակցությունից՝ առանց քաղաքացիությունը որպես պահանջ սահմանելու (օրինակ, քաղաքացիության պահանջը ներառել հետագա փուլերում՝ որպես սեփականության իրավունքի վկայականն ստանալու նախապայման):

Մարզերում բնակեցման խթանում

Գյուղական բնակեցման և գյուղատնտեսական հնարավորությունների խթանում. Աջակցել գյուղական վայրերում բնակեցմանը՝ դա խթանելով գյուղատնտեսության զարգացման ծրագրերով, այդ թվում՝ հնարավորություն տալ ձեռք բերելու հողամաս, կենդանիներ կամ գյուղատնտեսական տեխնիկա: Սահմանամերձ գյուղական համայնքներում տուն ձեռք բերելու դեպքում դիտարկել էապես ավելի բարենպաստ լրացուցիչ պայմաններ:

Բնակեցում մշակութային համատեղելիության հիման վրա. Աջակցել մշակութային կայունությանը՝ առավել հավաք բնակեցման հնարավորություններ ընձեռելու միջոցով: Մարզային բնակավայրերում պետական սուբսիդիաներով հատուկ տեղահանված ընտանիքների համար կառուցել բնակելի համալիրներ, որը ցանկալի է բարբառի, մշակութային այլ առանձնահատկությունների պահպանման, միմյանց հետ հաղորդակցության, փոխաջակցության տեսանկյունից:

Դ. Բռնի տեղահանված անձանց համար առողջապահական համակարգի հասանելիությունը

քաղաքականության համառոտագիր

Ամփոփում

2023 թվականի սեպտեմբերին ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց պատշաճ առողջապահական ծառայությունների մատուցումը կարևոր է ոչ միայն այդ անձանց հետագա առողջական բարվոք վիճակը ապահովելու, այլև ավելի քան ինն ամիս տևած շրջափակման, թերսնման ու հոգեկան ապրումների բացասական հետևանքները հնարավորինս մեղմելու առումով:

Առողջապահության ոլորտում պետության կողմից տրամադրված աջակցությունն առավել հաջողվածն է, այդուհանդերձ, անհրաժեշտ են այն բարելավելու լրացուցիչ միջոցառումներ: Այս առումով, անհրաժեշտ է բարելավել ծառայությունների և դեղորայքի հասանելիությունը, մարզերում իրականացնել բուժաշխատողների վերապատրաստումներ և բռնի տեղահանված անձանց ապահովել արդյունավետ իրազեկմամբ:

Հիմնախնդիր

ՀՀ կառավարությունն արագ և արդյունավետ արձագանք է ապահովել՝ բռնի տեղահանված անձանց առողջապահական ծառայություններ ապահովելու առումով: Բուժաշխատողների վերապատրաստման և զբաղվածության ապահովման նախաձեռնությունն առավել հաջողվածն է և կարող է օրինակելի համարվել նաև այլ ոլորտների համար:

Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի Հանրապետության առողջապահական համակարգերը հիմնականում նույնական էին, և ինտեգրացիայի խնդիրները սուր չեն: Այդուհանդերձ, այս ոլորտում ևս առկա են մի շարք խնդիրներ, ինչպես, օրինակ, փաստաթղթային դժվարությունները, հոգեբանական ծառայությունների որակը, անհրաժեշտ բուժման ծախսերը, իրավունքների և ծրագրերի վերաբերյալ իրազեկման բացը, վերապատրաստումների հետ կապված դժվարությունները:

Առկա ծրագրեր և կարգավորումներ

Անվճար օգնություն

Բռնի տեղահանված անձանց, այդ թվում՝ մինչև 18 տարեկան երեխաների բժշկական օգնությունն ու սպասարկումն իրականացվում է պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով, որոնք սահմանված են ՀՀ կառավարության որոշմամբ:[46] Արցախցիները սահմանված կարգով հաշվառվում են առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) ծառայություններ մատուցող բժշկական հաստատություններում (պոլիկլինիկաներ), որտեղ ստանում են համապատասխան ծառայությունները:

Բացի այդ, ԼՂ-ից բռնի տեղահանված անձինք օգտվում են պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով ստոմատոլոգիական բժշկական

[46] «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ կառավարության N 318-Ն որոշում, 04.03.2004 թ., https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=149385, դիտված՝ 08.11.2024 թ.:

օգնության ու սպասարկման ծառայություններից: Նրանց անհրաժեշտ դեղամիջոցները, որոնք ներառված են ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված ցանկում, հատկացվում են արժեքի լրիվ փոխհատուցմամբ: Տեղահանված անձինք օգտվում են նաև Առողջապահության նախարարության անունով ստացված և բաշխված մարդասիրական օգնության, ինչպես նաև անմիջապես առողջապահական կազմակերպությունների անունով այլ մարդասիրական խողովակներով ստացված դեղերն անվճար ստանալու իրավունքից՝ ըստ բժշկական ցուցումների:

Բռնի տեղահանված, ժամանակավոր պաշտպանության տակ գտնվող կանայք դարձել են վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծրագրի շահառու:[47] Այսինքն, անպտղության հաղթահարման՝ պետության օժանդակությամբ իրականացվող ծրագրի շրջանակում կանայք կարող են օգտվել արհեստական բեղմնավորման միջամտությունից:[48]

Զբաղվածության ապահովում

ՀՀ առողջապահության նախարարության ուղղորդմամբ մարզային բժշկական կազմակերպություններում աշխատանքի անցնելու պարագայում Արցախից տեղահանված բուժաշխատողներին տրամադրվում է ամսական գումար «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի[49] 1-ին հոդվածով սահմանված նվազագույն աշխատավարձի եռապատիկի չափով՝ մինչև 6 ամիս ժամկետով: 2024 թ. սեպտեմբերի 16-ի դրությամբ 41 բուժաշխատող նախարարության ուղղորդմամբ աշխատանքի է անցել մարզային բժշկական հաստատություններում և օգտվում է վերոնշյալ աջակցությունից: ՀՀ տարբեր բժշկական հաստատություններում աշխատանքի է անցել ԼՂ-ից տեղահանված 219 անձ:[50]

ՀՀ առողջապահության նախարարության նախաձեռնությամբ 2023 թվականի նոյեմբերին փոփոխություններ են կատարվել «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքում,[51] որով 2023 թվականի սեպտեմբերի 19-ին Լեռնային Ղարաբաղի նկատմամբ Ադրբեջանի ռազմական հարձակման հետևանքով բռնի տեղահանված ավագ և միջին բուժաշխատողներին հնարավորություն կտրվի մինչև 2025 թվականի հունվարի 1-ը զբաղվել մասնագիտական գործունեությամբ՝ առանց շարունակական մասնագիտական զարգացման՝ ՇՄԶ հավաստագրի, որը Հայաստանում պարտադիր է ավագ և միջին բուժաշխատողների համար՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու դեպքում, մինչդեռ ԼՂ օրենսդրությամբ նման պահանջ նախատեսված չէր: ԼՂ-ից տեղահանված ավագ և միջին բուժաշխատողները կարող են սահմանված ժամանակահատվածում մասնակցել կրեդիտավորված դասընթացների՝ կուտակելով ՇՄԶ կրեդիտներ և ստանալով ՇՄԶ հավաստագիր: Նշված ժամանակահատվածում առողջապահության բնագավառի վերահսկողությունն իրականացնող տեսչական մարմինը

[47] «Անվճար կամ արտոնյալ պայմաններով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման կարգն ու շահառուներին ներկայացվող պահանջները սահմանելու մասին» ՀՀ կառավարության N 568-Ն որոշում, 27.05.2015 թ., https://www.arlis.am/documentview.aspx?docid=98054, դիտված՝ 08.11.2024 թ:

[48] Փաստերի ստուգման հարթակ, *Բռնի տեղահանումից մեկ տարի անց. որ բնակավայրերում են հաստատվել արցախցիները, ինչ օժանդակություն են ստանում նրանք*, 19.09.2024 թ., https://fip.am/26000, դիտված՝ 08.11.2024 թ:

[49] «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենք, 17.12.2003 թ., https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172160, դիտված՝ 05.03.2024 թ.:

[50] Փաստերի ստուգման հարթակ, 19.09.2024 թ., https://fip.am/26000

[51] «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք, 16.11.2023 թ., https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=186224, դիտված՝ 08.11.2024 թ.:

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ավագ և միջին բուժաշխատողների նկատմամբ չի կիրառելու պատասխանատվություն՝ ՇՄՁ հավաստագիր չունենալու հիմքով:[52]

2023 թ. ընթացքում տեղահանված 209 ավագ և 516 միջին բուժաշխատողի տրամադրվել են պետական պատվերի շրջանակներում շարունակական մասնագիտական զարգացման կրեդիտավորման միջոցառումների մասնակցության միջնորդագրեր: Նախատեսվում է գործընթացը շարունակել նաև 2024 թ. ընթացքում:

Մարտահրավերներ

Հետազոտության արդյունքում վերհանվել են հետևյալ խնդիրները.

Փաստաթղթային խնդիրներ

Արխիվային տվյալների բացակայություն. Լեռնային Ղարաբաղից բժշկական տվյալների բացակայությունը դժվարացնում է բուժման շարունակականությունը:

Առողջապահության հասանելիության խնդիրներ

Հրատապ բժշկական ծառայությունների անմատչելիություն. Համակարգչային տոմոգրաֆիա (ՀՏ) հետազոտության և նմանատիպ ծառայությունների համար զգալի հերթեր են, հաճախ՝ մինչև երեք ամիս, ինչը վատթարացնում է տեղահանված անձանց առողջական վիճակը:

Անվճար բժշկական ծառայությունների ուշացում. Անվճար բուժման սպասելու երկար հերթերը հաճախ ստիպում են առողջական խնդիրներ ունեցող անձանց՝ ընտրել վճարովի բուժօգնությունը, սակայն դա ոչ բոլորի համար է մատչելի:

Թանկարժեք դեղորայքի անհասանելիություն. Առողջական խնդիրներ ունեցող տեղահանված անձանց համար անհրաժեշտ թանկարժեք դեղորայքը հաճախ հասանելի չէ պետական պատվերի շրջանակներում:

Հոգեբանական ծառայությունների անբավարար որակ. Պոլիկլինիկաներն, ի թիվս այլ բժշկական ծառայությունների, բռնի տեղահանված անձանց տրամադրում են նաև հոգեբանական աջակցություն: Սակայն, հաշվի առնելով, որ շատ արցախցիներ օգտվել են նաև հասարակական կազմակերպությունների կողմից տրամադրվող հոգեբանական աջակցության ծրագրերից և կարող են համեմատություն անել, նրանք ցածր են գնահատում պոլիկլինիկաների տվյալ ծառայությունը:

Անբավարար իրազեկում

Իրազեկման բաց. Արցախցիները լիարժեք տեղեկացված չեն իրենց հասանելի առողջապահական ծառայությունների մասին:

[52] ՀՀ առողջապահության նախարարություն, *Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ավագ և միջին բուժաշխատողներն իրավունք կունենան աշխատելու առանց շարունակական մասնագիտական կարգացման (ՇՄՁ) հավաստագրի*, https://shorturl.at/AVKOS , դիտված՝ 10.11.2024 թ.:

Խտրական վերաբերմունք

Խտրական վերաբերմունք. Տեղահանված անձանց նկատմամբ առողջապահության ոլորտի աշխատակիցների վերաբերմունքն, ընդհանուր առմամբ, դրական է, սակայն որոշ դեպքերում պատահում է արցախցի մասնագետների և բուժառուների նկատմամբ խտրական վերաբերմունք բուժանձնակազմի կողմից:

Վերապատրաստման հասանելիության խնդիրներ

Կենտրոնացված վերապատրաստում. Բուժաշխատողների վերապատրաստումները հաճախ տեղի են ունենում Երևանում, և հեռավոր համայնքներում աշխատող բռնի տեղահանված անձինք տրանսպորտային միջոցների հասանելիության բացակայության պարագայում հնարավորություն չեն ունենում մասնակցելու դրանց:

Առաջարկություններ

Նշված մարտահրավերների հիման վրա առաջարկվում են հետևյալ միջոցառումները.

Առողջապահության հասանելիության ապահովում

Հոգեբանական ծառայություն. Բարելավել պոլիկլինիկաներում հոգեբանական ծառայության որակը՝ կազմակերպելով պարբերական դասընթացներ համապատասխան մասնագետների համար:

Դեղերի և միջամտությունների հասանելիություն

Լրացուցիչ ծառայությունների սուբսիդավորում. Թանկարժեք դեղորայքի և հետազոտությունների ու միջամտությունների դեպքում պետպատվերի շրջանակներում լրացուցիչ աջակցել սոցիալապես անապահով խոցելի խմբերին:

Մասնագիտական վերապատրաստում

Բուժաշխատողների համար վերապատրաստման դասընթացների կազմակերպում մարզերում. Ապահովել վերապատրաստման դասընթացների կազմակերպումը մարզկենտրոններում և խոշորացված համայնքներում՝ այդ թվում ներառելով հեռավոր բնակավայրերում բնակվող տեղահանված բուժաշխատողներին, որոնց համար պարբերաբար մայրաքաղաք այցելելը հնարավոր չէ:

Պատշաճ իրազեկում

Բռնի տեղահանված անձանց համար ապահովել արդյունավետ հաղորդակցություն՝ աջակցության ծրագրերի, առողջապահական ծառայություններից անվճար հիմունքներով օգտվելու վերաբերյալ տեղեկատվությունը նրանց հասցնելով հասանելի խողովակներով, համապարփակ և հանրամատչելի ձևաչափով, ուղեցույցների, գրաֆիկական պատկերների տեսքով:

Ե. Բռնի տեղահանված անձանց համար կրթական համակարգի հասանելիությունը և մշակութային ժառանգության պահպանությունը

քաղաքականության համառոտագիր

Ամփոփում

2023 թվականի սեպտեմբերին ԼՂ-ից բռնի տեղահանված դպրոցականների և ուսանողների ուսումնառության շարունակականության և հետագա զարգացման հնարավորությունների ապահովումը առանցքային նշանակություն ունի արցախցիների ընտանիքների՝ Հայաստանում հաստատվելու և ինտեգրվելու համար: Բացի այդ, հաշվի առնելով երիտասարդ սերնդի ճկունությունը և եռանդը՝ ձեռքբերելու նոր գիտելիքներ և հմտություններ, ակամա նրանց վրա է դրվում իրենց ընտանիքների կարիքները հոգալու կամ դրան ակտիվորեն աջակցելու պատասխանատվությունը:

Առաջարկվում են միջոցառումներ՝ մանկապարտեզների հասանելիությունը ապահովելու, դպրոցներում երեխաների ուսումնառությունը խթանելու, միջին մասնագիտական կրթական հաստատությունների և բուհերի ուսանողներին աջակցելու, ինչպես նաև ուսուցիչների զբաղվածության ծրագիրը վերանայելու և դասախոսներին ներգրավվելու հնարավորությունը դիտարկելու ուղղությամբ: Անհրաժեշտ է նաև ջանքեր գործադրել՝ Արցախի մշակութային ժառանգությունը հնարավորինս պահպանելու և արտաքին աշխարհին ներկայացնելու համար:

Հիմնախնդիր

Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի Հանրապետության կրթական համակարգերը հիմնականում նույնական էին, սակայն տեղահանված անձինք, մասնավորապես՝ երեխաները, այս ոլորտներում ունեն ինտեգրման խնդիրներ:

Կրթական համակարգի հասանելիության առումով արցախցիների առջև ծառացած առավել կարևոր խնդիրներն են՝նախադպրոցական կրթական հաստատություններում երեխաներին տեղավորելու դժվարությունները, դպրոցներում երեխաների ինտեգրումը, դասագրքերի խնդիրը, ուսուցիչների զբաղվածության ապահովումը՝ արժանապատիվ պայմաններով, մշակութային ժառանգության, այդ թվում՝ Արցախի յուրահատուկ բարբառի ու ծեսերի պահպանումը:

Առկա ծրագրեր ու կարգավորումներ

Ուսանողների աջակցություն

ՀՀ կառավարության կողմից ընդունվել են հատուկ որոշումներ թե՛ մինչև 2023 թվականի սեպտեմբերի 19-ը ՀՀ ուսումնական հաստատություններում ընդգրկված՝ Լեռնային Ղարաբաղից սովորողների ուսման վարձի փոխհատուցման,[53] թե՛ 2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո ԼՂ-ից բռնի տեղահանված ուսանողների ուսման վարձի լրիվ կամ

[53] «Հայաստանի Հանրապետության նախնական (արհեստագործական), միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների վճարովի համակարգում մինչև 2023 թվականի սեպտեմբերի 19-ն ընդգրկված Լեռնային Ղարաբաղի սովորողների ուսման վարձի փոխհատուցման տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 2291-Լ որոշում, 21.12.2023 թ., https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=187714, դիտված՝ 03.11.2024 թ.:

մասնակի փոխհատուցման նպատակով կրթաթոշակի տրամադրման կարգը և տրամադրվելիք կրթաթոշակի առավելագույն չափերը հաստատելու մասին,[54] որոնցով նախատեսված աջակցությունը 2024 թվականին Կառավարության նոր որոշումների հիման վրա[55] երկարաձգվել է 4 տարի ժամկետով: Աջակցության ծրագրերից մեկը վերաբերում է նաև 2024 թվականին առաջին կուրս ընդունված տեղահանված ուսանողներին: Աջակցությունը տրամադրվում է.

- 2023-2024 ուսումնական տարվա, ինչպես նաև 2024-2025 ուսումնական տարում արհեստագործական, միջին մասնագիտական, բակալավրի կամ անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով սահմանված կարգով առաջին կուրս ընդունվածներին՝ 1-ին կիսամյակի համար տվյալ կիսամյակի ուսման վարձի 100 %-ի չափով՝ անկախ նախորդ ուսումնական տարվա արդյունքում ձևավորված միջին որակական գնահատականից կամ առաջադիմությունից, առաջին կուրսում սովորողների պարագայում՝ ընդունելության արդյունքներից,

- 2023-2024 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի և 2024-2025 ուսումնական տարվա համար՝ տվյալ կիսամյակի ուսման վարձի 100 %-ի չափով՝ նախորդ կիսամյակի արդյունքում միջին որակական գնահատականի՝ ՄՈԳ-ի 65.00 %-ը հաղթահարելու դեպքում, իսկ նախնական (արհեստագործական), միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողի պարագայում՝ նախորդ կիսամյակի արդյունքում 50 %-ից ոչ պակասը «գերազանց» և «լավ» գնահատականներ ունենալու դեպքում,

- 2025-2026 ուսումնական տարվանից սկսած և հետագա ուսումնառության ընթացքում, մինչև տվյալ կրթական մակարդակում ուսումնառության ավարտը՝ տվյալ կիսամյակի ուսման վարձի 100 %-ի չափով՝ նախորդ կիսամյակի արդյունքում ՄՈԳ-ի 75.00 %-ը հաղթահարելու դեպքում, իսկ նախնական (արհեստագործական), միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողի պարագայում՝ նախորդ կիսամյակի արդյունքում 50 %-ից ոչ պակասը «գերազանց» և «լավ» գնահատականներ ունենալու դեպքում:[56]

Ուսուցիչների զբաղվածության ապահովում

Դեռևս 2023 թվականի հոկտեմբերի առաջին կեսին Կառավարությունն ընդունել էր հատուկ ծրագիր՝ տեղահանված ուսուցիչների զբաղվածության ապահովման նպատակով,[57] որը հավելավճարների միջոցով խրախուսում էր բռնի տեղահանված անձանց կողմից մարզերում ուսուցչի թափուր տեղերի համալրումը: Այս ծրագրի շահառուն այն ուսուցիչներն են, որոնք 2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանման

[54] «2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսանողների ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման նպատակով կրթաթոշակի տրամադրման կարգը և տրամադրվելիք կրթաթոշակի առավելագույն չափերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 1762-L որոշում, 12.10.2023 թ., https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=184019, դիտված՝ 03.11.2024 թ.:

[55] «Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 21-ի N 2291-L որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության N 1513-L որոշում, 26.09.2024 թ., https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=197894, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի N 1762-L որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության N 1521-L որոշում, 26.09.2024 թ., https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=197884, դիտված՝ 03.11.2024 թ.:

[56] Պետական աջակցության ծրագրերի իրազեկման հարթակ, https://irazekum.am/event/view/184, դիտված՝ 08.11.2024 թ:

[57] «2023 թվականին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսուցիչների օժանդակության ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 1756-L որոշում, 12.10.2023 թ., https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=183992, դիտված՝ 03.11.2024 թ.:

հետևանքով բնակություն են հաստատել Հայաստանում, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով[58] սահմանված կարգով ունեն մանկավարժական աշխատողի պաշտոն զբաղեցնելու իրավունք և ցանկություն՝ աշխատելու Հայաստանի մարզերի բնակավայրերի պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում: Վերջերս՝ 2024 թ. նոյեմբերի 7-ից, ծրագիրը կրել է որոշակի փոփոխություն, և ներկայումս ծրագրից կարող են օգտվել նաև 2020 թվականի 44-օրյա պատերազմի հետևանքով տեղահանված ուսուցիչները:[59]

Ըստ այս ծրագրի, Հայաստանի մարզերում ուսուցչի թափուր հաստիքը համալրելու պարագայում անձին ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներից տվյալ հաստատության միջոցով հատկացվում է լրավճար՝ մանկավարժական աշխատավարձի 30 %-ի չափով, իսկ Սյունիքի և Վայոց Ձորի մարզերի, Գեղարքունիքի մարզի Ճամբարակ և Վարդենիս համայնքների և Տավուշի մարզի Նոյեմբերյան, Իջևան և Բերդ համայնքների հաստատությունների՝ նույն ծրագրից օգտվող ուսուցիչներին՝ ևս 50,000 ՀՀ դրամ ֆիքսված լրավճար: Նշված հատկացումները հաստատությանը տրամադրվում են համապատասխան մարզպետարանների կողմից՝ եռամսյակային կտրվածքով:

Մարտահրավերներ

Հետազոտության արդյունքում վերհանվել են հետևյալ խնդիրները.

Նախադպրոցական կրթության սահմանափակ հասանելիություն

Նախադպրոցական հաստատությունների հասանելիություն. Մանկապարտեզների սահմանափակ հնարավորությունների բերումով՝ ազատ տեղ գտնելը դժվար է, իսկ հերթագրումից հետո պարզ չէ, թե երբ կարող է տեղ ազատվել: Այս խնդիրն ընդհանուր է թե՛ տեղի բնակչության, թե՛ տեղահանված անձանց համար, սակայն, հաշվի առնելով տեղահանված նախադպրոցական տարիքի երեխաների, բազմազավակ ընտանիքների ու միայնակ մայրերի մեծ թիվը, ինչպես նաև ծնողների համար աշխատանք գտնելու անհրաժեշտությունը, խնդիրն առավել սուր է դրսևորվում արցախցիների պարագայում:

Հանրակրթության ոլորտի խնդիրներ

Դպրոցներում դասագրքերի պակաս. Դպրոցներում դասագրքերը երբեմն չեն բավականացնում աշակերտներին: Դրանք կամ հնարավոր չէ գտնել կամ, գտնելու դեպքում, դրանք վաճառվում են անհամաչափ բարձր գնով: Խնդիրն ընդհանուր է, բայց ոչ համատարած: Այնուամենայնիվ, սա խնդրահարույց է հատկապես արցախցի ընտանիքների երեխաների համար, որոնք ունեն լրացուցիչ սոցիալական դժվարություններ:

Տրանսպորտի սահմանափակ հասանելիություն մարզերում. Հեռավոր համայնքներում աշակերտներին դպրոց հասցնելու համար անհրաժեշտ տրանսպորտը կամ բացակայում է, կամ ամբողջությամբ չի բավարարում համայնքի կարիքները: Սա ընդհանուր խնդիր է, սակայն առավել սուր է արտահայտվում արցախցի բազմազավակ ընտանիքների դեպքում:

[58] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, 10.07.2009 թ., https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908, դիտված՝ 03.11.2024 թ.:

[59] «ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի N1756-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության N 1754-Լ որոշում, 07.11.2024 թ., https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=199321, դիտված՝ 18.11.2024 թ.:

Խտրականություն. Տեղահանված աշակերտների և ուսուցիչների նկատմամբ արձանագրվել են ղեկավար կազմի և ուսուցիչների կողմից խտրականության որոշ դեպքեր և ատելության խոսք դպրոցներում:

Ադապտացման և կրթության դժվարություններ. Լեռնային Ղարաբաղից տեղահանված աշակերտները դժվարանում են ադապտացվել նոր դպրոցներին՝ էական վարքագծային ու միջավայրային տարբերությունների պատճառով: Հայաստանյան դպրոցներում կրթության որակը, ԼՂ դպրոցների համեմատ, հաճախ ցածր է՝ հիմնականում ուսուցիչների ոչ խիստ լինելու, նրանց չհարգելու և չլսելու, աշակերտների ամբարտավան վարքագծի պատճառով, ինչը բացասաբար է ազդում ուսումնական գործընթացի վրա: Այս երևույթը բավականին տարածված է Հայաստանի դպրոցներում և հրատապ անդրադարձի կարիք ունի:

Դրամահավաքներ. Հայաստանի դպրոցական հաստատություններում, ի տարբերություն Արցախի դպրոցների, աշակերտների շրջանում տարբեր առիթներով կազմակերպվող դրամահավաքները տարածված երևույթ են: Սա հատկապես անդրադառնում է բռնի տեղահանված բազմազավակ ընտանիքների վրա՝ առաջացնելով լրացուցիչ ֆինանսական բեռ: Թեև արցախցի ընտանիքներին որոշ դեպքերում առաջարկվում է չմասնակցել դրամահավաքներին՝ դա խոցում է նրանց ինքնասիրությունը, և նրանք ամեն ինչ անում են, որ «ետ չմնան» մյուս ծնողներից:

Միջին մասնագիտական և բուհական կրթության խնդիրներ

Ուսման վարձերի հետ կապված խնդիրներ. Չնայած արցախցի ուսանողներին աջակցելու՝ Կառավարության ջանքերին՝ ծագել են մի շարք խնդիրներ: Կառավարությունն իր որոշումն ընդունել էր 2024 թ. սեպտեմբերի վերջին,[60] մինչդեռ որոշ ուսումնական հաստատություններ ուսումնական տարվա սկզբին՝ սեպտեմբերին, արդեն իսկ պահանջել էին ուսման վարձավճարը: Ըստ ուսանողների՝ որոշ քոլեջներում ասել էին, որ չեն պատրաստվում վերադարձնել կամ փոխհատուցել մուծված գումարը:

Դիպլոմների ճանաչման խոչընդոտներ. Եղել են դեպքեր, երբ գործատուները աշխատանքի ընդունելիս անձից պահանջել են Արցախի պետական համալսարանի դիպլոմի լրացուցիչ հավաստում, մասնավորապես՝ ապոստիլով նոտարական հաստատում:

Ուսուցիչների զբաղվածության ապահովում

Խնդրահարույց դրույթներ ծրագրում. Խնդիր է ուսուցիչների զբաղվածության ապահովման ծրագրում առկա այն դրույթը, ըստ որի՝ Հայաստանի մարզային բնակավայրերի պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում որևէ առարկայի ուսուցչի թափուր տեղ առաջանալու դեպքում սահմանված կարգով հայտարարված մրցույթին դիմող չլինելու կամ մրցույթը չկայանալու պարագայում բռնի տեղահանված ուսուցիչը կարող է հավակնել դառնալու ծրագրի մասնակից և ստանալու լրավճար: Հետևաբար, դրույթի բովանդակությունից բխում է, որ տեղահանված անձը կարող է օգտվել նման հնարավորությունից միայն այն պարագայում, երբ մրցույթին այլ անձ չի մասնակցել և/կամ մրցույթը չի կայացել: Ընդ որում, պայմանագրի ժամկետ է սահմանվում պայմանագրի կնքման պահից մինչև 2-րդ ուսումնական տարվա ավարտը, իսկ ծրագրի շրջանակներում կնքված պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում (բացառությամբ բնակության վայրի

[60] ՀՀ կառավարության N 1513-Լ որոշում, 26.09.2024 թ., ՀՀ կառավարության N 1521-Լ որոշում, 26.09.2024 թ.:

փոփոխությամբ պայմանավորված դեպքերի) տվյալ ուսուցիչը զրկվում է սույն ծրագրից կրկին օգտվելու իրավունքից: Այս պարագայում մրցույթին մասնակցած բռնի տեղահանված ուսուցիչը փաստացի գտնվում է ավելի անբարենպաստ վիճակում և նա, ըստ Կառավարության որոշման տրամաբանության, եթե ցանկանում է ստանալ հավելավճար, պետք է սպասի մինչև հաստիքը սահմանված կարգով չհամալրվի, ապա նոր անցնի աշխատանքի՝ որպես դպրոցների համար «այլընտրանքային ուսուցիչ»:

Բուհերի անձնակազմի լրաղվածության ապահովում. Քանի որ ՀՀ բուհերում դասախոսական անձնակազմի նկատմամբ ավելի խիստ չափորոշիչներ են գործում, կամ բուհերն արդեն իսկ համալրված են, այս խումբը ևս դուրս է մնում աշխատաշուկայից և ստիպված է կամ ընդգրկվել հանրակրթության համակարգում, կամ մտնել սպասարկման ոլորտ, կամ արտագաղթել, ինչը մտավոր կապիտալի կորուստ է:

Անբավարար իրազեկվածություն

Տեղեկատվության հասանելիության խնդիր. Կա տեղեկատվության պակաս՝ ուսանողների համար կրթական ծրագրերի ու աջակցության և ուսուցիչների համար նախատեսված արտոնությունների վերաբերյալ, ինչի հետևանքով շատերը չեն օգտվում հասանելի աջակցությունից:

Մշակութային ժառանգության կորստի ռիսկեր

Նյութական ժառանգության կորուստ Արցախում. Ադրբեջանի իշխանությունները Արցախում ակտիվորեն ոչնչացնում են պատմամշակութային հուշարձանները և հայկական հետքը, ինչը նաև հոգեբանական տրավմա է առաջացնում արցախցիների մոտ:

Ոչ նյութական ժառանգության կորստի ռիսկ. Արցախի մշակույթի առանցքում յուրահատուկ բարբառն է, որը վտանգված է, քանի որ Հայաստանի տարբեր բնակավայրերում ցաքուցրիվ տեղավորվելով և միմյանցից հեռանալով՝ արցախցիները հետզհետե ստիպված ավելի քիչ են օգտագործում իրենց բարբառը:

Առաջարկություններ

Նշված մարտահրավերների հիման վրա առաջարկվում են հետևյալ միջոցառումները.

Նախադպրոցական կրթության հասանելիության ապահովում

Նախադպրոցական հաստատությունների հասանելիություն. Նախադպրոցական հաստատություններում բացել լրացուցիչ խմբեր և/կամ հիմնել նախակրթարաններ ու մանկապարտեզներ հատկապես այն վայրերում, որտեղ առավել շատ են արցախցիները: Սա կարող է նաև ստեղծել նոր աշխատատեղեր՝ արցախցիների ներգրավմամբ:

Դասագրքերի ապահովում. Բոլոր տեղահանված աշակերտներին ապահովել անհրաժեշտ ուսումնական նյութերով:

Ուսանողների համար հնարավորությունների ընդլայնում

Քվոտաների բաշխում. Արցախցիներին լրացուցիչ անվճար ուսուցման քվոտաներ տրամադրել մասնագիտական և միջին մասնագիտական հաստատություններում, ինչպես

նաև մեծացնել ուսման վարձի փոխհատուցման չափը՝ հաշվի առնելով նրանց սոցիալական վիճակը և անվճարունակությունը:

Արտերկրում սովորող տեղահանված ուսանողների ուսման վարձի փոխհատուցում. Օժանդակել արտերկրում սովորող մի քանի տասնյակ տեղահանված ուսանողների կրթությանը՝ որպես Հայաստանի համար կարևոր մտավոր ներուժի ձևավորում: Սա կարող է իրականացվել վարձավճարի փոխհատուցման միջոցով՝ երաշխիքների ստեղծմամբ ու պայմանագրերի կնքմամբ՝ Հայաստան վերադառնալու և առնվազն 5 տարի տեղում աշխատելու, իսկ չվերադառնալու պարագայում ֆինանսական աջակցությունը փոխհատուցելու պարտավորությամբ: Դիտարկել այս մոդելի տարածման հնարավորությունը Հայաստանից պետական աջակցությամբ արտասահման մեկնող այլ ուսանողների համար:

Ուսուցիչների զբաղվածության ապահովում

Ուսուցիչների զբաղվածություն. Լավարկել ուսուցիչների զբաղվածության ապահովման ծրագիրը: Վերացնել ուսուցիչների զբաղվածության ծրագրում առկա այն պայմանը, որով տեղահանված ուսուցիչը լրավճար կարող է ստանալ միայն այն դեպքում, եթե թափուր հաստիքը մրցութային կարգով չի համալրվել այլ հավակնորդների կողմից կամ ուսուցչի պաշտոնի համար չկան այլ հավակնորդներ:

Դասախոսական անձնակազմի համար աշխատանքի հնարավորությունների ստեղծում. Նախատեսել միջոցառումներ՝ խրախուսելու բուհերում, մասնավորապես՝ մարզերի ուսումնական հաստատություններում, արցախցի դասավանդող անձնակազմին աշխատանքի տեղավորելու հնարավորությունը:

Պատշաճ իրականում

*Իրականման արշավներ***.** Կրթության ոլորտի ծրագրերի, այդ թվում՝ ուսման վարձի փոխհատուցման համար ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն (ԿԳՄՍՆ) դիմելու, ինչպես նաև մարզերում ուսուցիչների համար նախատեսված աջակցության ծրագրի ու արտոնությունների վերաբերյալ իրազեկվածության բարձրացման համար կարևոր է իրականացնել լրացուցիչ միջոցառումներ՝ օգտագործելով հաղորդակցության արդյունավետ ու հասանելի խողովակներ և հանրամատչելի ձևաչափեր, ինչպես, օրինակ՝ ուղեցույցներ, ինֆոգրաֆիկա և այլն:

Մշակութային ժառանգության կորստի ռիսկեր

Արցախում նյութական ժառանգության պահպանություն. Աջակցել արցախցիների կողմից Արցախի պատմամշակութային հուշարձանների վավերագրման, հուշարձանների ոչնչացման վերաբերյալ միջազգային կառույցներին ահազանգելու, արտասահմանյան միջոցառումներում դրանք ներկայացնելուն ուղղված քայլերին:

Արցախի պատմության դասավանդում. Մշակել և դպրոցական ու համալսարանական կրթական ծրագրերում ներդնել հատուկ ծրագրեր, որոնք կընդգրկեն Արցախի մշակույթն ու պատմությունը, այդ թվում՝ ներառելով արցախյան հակամարտության պատմությունը՝

խթանելով քննադատական մտածողության ու բանակցային հմտությունների զարգացումը, բանավեճերը, հետազոտությունները:

Բարբառի պահպանում. Արցախի բարբառի պահպանության նպատակով դասաժամեր ներառել ուսումնական ծրագրերում՝ որպես արտաժամյա պարապմունք, հատկապես այն մարզերում, որտեղ բնակվում են մեծ թվով արցախցիներ: Հաշվի առնելով հնարավոր հետաքրքրությունը՝ դիտարկել հայկական այլ բարբառների տարածման ու պահպանման միջոցառումների կազմակերպումը:

Մշակույթի պահպանում. Աջակցել Արցախի մշակույթը, այդ թվում բարբառը կենդանի պահող կենտրոններին՝ մասնավորապես տրամադրելով անհատույց օգտագործման համայնքային տարածքներ, տեխնիկական միջոցներ ու դրամաշնորհներ՝ համայնքների հետ աշխատանքի, արվեստի դասընթացների, ցուցահանդեսների, համերգների, բեմական ներկայացումների, ազգային տոների կազմակերպման, մշակութային կենտրոնների հիմնման համար: Նպաստել պետական ու մասնավոր հատվածների հետ համագործակցությամբ իրականացվող նախագծերին և Արցախի մշակութային ժառանգության հանրայնացմանը՝ մշակութային կենտրոնների նախագծերը ներառելով ՀՀ պաշտոնական տոների և այլ տոնակատարությունների միջոցառումներում: Այսպիսով, խթանել արցախյան մշակութային կյանքի վերականգնումն ու զարգացումը՝ միաժամանակ նպաստելով արցախցիների սահուն ինտեգրմանը ՀՀ հասարակության մեջ:

Մշակութային ժառանգության հանրայնացում արտերկրում. Աջակցել այնպիսի նախագծերին, որոնք ներկայացնում են Արցախի հայկական պատմամշակութային ժառանգությունը և դրա ոչնչացման վտանգները միջազգային մակարդակով, այդ թվում՝ ցուցահանդեսների, փառատոների, համերգների, զեկույցների, քննարկումների միջոցով:

Զ. Բռնի տեղահանված անձանց զբաղվածությունը

քաղաքականության համառոտագիր

Ամփոփում

ԼՂ-ի և Հայաստանի աշխատաշուկաների և պահանջվող որակավորումների միջև տարբերությունները դժվարացնում են արցախցիների մուտքը Հայաստանի աշխատաշուկա: Տեղահանված անձանց համար ՀՀ կառավարության նախատեսած պետական զբաղվածության ծրագրերը դրական քայլ են, սակայն դեռևս չեն բավարարում արցախցիների երկարաժամկետ աշխատանքային կարիքները՝ կայուն ինտեգրման և տնտեսական ինքնաբավության ավելի խոշոր խնդիրները լուծելու համար: Խնդրահարույց է նաև ծրագրերի սահմանափակ հասանելիությունը որոշ մասնագիտությունների ու խոցելի խմբերի համար, ինչպես նաև շահառուների համեմատաբար փոքր թիվը:

Ակնհայտ է զբաղվածության առավել համապարփակ լուծումների անհրաժեշտությունը: Առաջարկվում է վերանայել ու կատարելագործել տեղահանված անձանց զբաղվածության թիրախային ծրագրերը և ձեռնարկել միջոցներ՝ արցախցիներին զբաղվածության ընդհանուր ծրագրերում ներառելու համար: Անհրաժեշտ է որոշ աշխատատեղերի դեպքում ճկուն մոտեցում ցուցաբերել իրավական կարգավիճակին առնչվող հարցերին: Կարևոր է նաև արցախցիների զբաղվածության ծրագրերը փոխկապակցել բնակարանային աջակցության ծրագրերին և դրանք դիտարկել մարզային զարգացման ծրագրերի համատեքստում: Կարևոր է նաև մշակել երկարաժամկետ խրախուսական ծրագրեր գործարարների համար՝ արցախցիներին աշխատաշուկայում ներգրավելու նպատակով:

Հիմնախնդիր

2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո Արցախից բռնի տեղահանված անձանցից Հայաստանում աշխատանքային պայմանագիր է կնքել 26,329 անձ, և ներկայում զբաղվածություն ունի 19,277-ը:[61]

Արցախի աշխատող բնակչության մեծ մասը նախկինում ներգրավված էր պետական հատվածում և հանրային նշանակության կազմակերպություններում: Սակայն ներկայումս տեղահանված անձինք չեն կարողանում վերականգնել իրենց նախկին կամ դրան մոտ զբաղվածությունը՝ ՀՀ քաղաքացիություն չունենալու պատճառով: Ոմանք հանրային ծառայությունում թափուր տեղեր զբաղեցնելու հնարավորությունը, ի թիվս այլ գործոնների, կորցնում են նաև քաղաքացիություն ստանալու երկարատև գործընթացի պատճառով: Տեղահանված անձինք բախվում են դժվարությունների ինչպես աշխատանք գտնելու, այնպես էլ վերապատրաստումների առումով:[62,63] Արդյունքում, շատերը հիասթափվում են և ընդհանուր բնակարանային, ֆինանսական, սոցիալական խնդիրների հարուցած խոցելիության ֆոնին ստիպված են լինում աշխատանք որոնել արտերկրում:

Հիմնական խնդիրներն են՝ ծրագրերում առկա թերությունները, ներգրավվող անձանց և գործատուների փոքր թիվը, խոցելի խմբերի համար նպատակային աջակցության բացակայությունը, աշխատանքային իրավունքների պաշտպանության երաշխիքների

[61] Ալիք Մեդիա, *Բավմաթիվ արցախցիներ դեռևս գործազուրկ են,* 30.11.2024 թ., https://www.aliqmedia.am/2024/11/30/177460, դիտված՝ 30.11.2024 թ.:
[62] «Մարդը կարիքի մեջ» բարեգործական ՀԿ, մարտ 2024 թ.:
[63] ԷյՓիԱր Գրուփ, 2024 թ.:

բացակայությունը, աջակցման մասնավոր ծրագրերի, մարզերում աշխատատեղերի ապահովման համար լրացուցիչ խթանների բացակայությունը, զբաղվածության ծրագրերի և աշխատավայրում խնդիրները լուծելու վերաբերյալ անբավարար իրազեկվածությունը և այլն:

Այս խնդիրների բերումով կարևորվում է համապարփակ ռազմավարությունների մշակման անհրաժեշտությունը՝ ուղղված տեղահանված անձանց զբաղվածության ապահովմանը և ինտեգրմանը:

Առկա ծրագրեր և կարգավորումներ

Տեղահանված ուսուցիչների աջակցության ծրագիր

Տեղահանված ուսուցիչների զբաղվածության կարիքները բավարարելու համար 2023 թ. հոկտեմբերի 12-ին ՀՀ կառավարության որոշմամբ ներդրվեց կարգ, որի շնորհիվ ԼՂ-ից տեղահանված ուսուցիչները կարող են աշխատանքի նշանակվել մարզային կրթական հաստատություններում:[64] Ծրագրի շրջանակում դպրոցներում տեղավորված ուսուցիչներին տրամադրվում է աշխատավարձի 30%-ի չափով հավելավճար, իսկ Սյունիքի և Վայոց Ձորի մարզերում, ինչպես նաև Գեղարքունիքի մարզի Ճամբարակ ու Վարդենիս համայնքներում և Տավուշի մարզի Նոյեմբերյան, Իջևան ու Բերդ համայնքներում 30% հավելավճարին ավելացվում է լրացուցիչ 50,000 ՀՀ դրամ: Տեղահանված ուսուցիչները դպրոցներում թափուր աշխատատեղերի մասին տեղեկանում են ԿԳՄՍՆ կրթության կառավարման տեղեկատվական համակարգի (EMIS) միջոցով, որը մանրամասն տեղեկատվություն է պարունակում հաստատության, դրա գտնվելու վայրի, դասաժամերի և վարձատրության պայմանների վերաբերյալ:

Տեղահանված բուժաշխատողների ատեստավորում և վերապատրաստում

2024 թ. նոյեմբերի 16-ին փոփոխություն կատարվեց «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքում, որով որոշվեց բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու նպատակով օրենքով նախատեսված շարունակական մասնագիտական զարգացման հավաստագիր ունենալու պահանջը չտարածել ԼՂ-ից բռնի տեղահանված ավագ և միջին բուժաշխատողների վրա՝ մինչև 2025 թվականի հունվարի 1-ը:[65] Այս աջակցման ծրագրի շրջանակում արդեն իսկ 100 տեղահանված բուժաշխատողներ ստացել են հավաստագրեր, իսկ 700-ն ընդգրկվել են անվճար վերապատրաստման ծրագրերում՝ կրթական հաստատություններում: Մինչև 2024 թվականի տարեվերջ ընդհանուր առմամբ 1,200 տեղահանված բուժաշխատող հասանելիություն կունենա պետության կողմից ֆինանսավորվող վերապատրաստման հնարավորություններին:[66]

Այս հետազոտությունը ցույց է տալիս, որ զբաղվածության ապահովման վերաբերյալ ՀՀ կառավարության տարբեր ծրագրերից արցախցիներն առավել բարձր են գնահատում առողջապահական ոլորտի մասնագետների վերապատրաստման, աշխատանքի

[64] «Լեռնային Ղարաբաղից 2023 թ. բռնի տեղահանված ուսուցիչների աջակցության ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 1756-L որոշում, 12.10.2023 թ., https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=183992, դիտված՝ 18.10.2024 թ.:

[65] «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն, 16.11.2023 թ., https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=186224, դիտված՝ 18.10.2024 թ.:

[66] Հետք, *Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված բուժաշխատողների համար բժշկական տեղեկանքի պարտադիր պահանջը հետաձգվելու է մինչև 2025 թ. հունվարի 1,* 14.11.2023 թ., https://www.hetq.am/hy/article/162000, դիտված՝ 18.10.2024 թ.:

տեղավորման նախաձեռնությունը, որը կարող է որպես օրինակ ծառայել այլ ոլորտների մասնագետների, պետական ու հանրային ծառայողների աշխատանքի տեղավորման նույնանման ծրագրեր նախաձեռնելու համար:

Կարճաժամկետ ուսուցման և զբաղվածության աջակցության ծրագիր

2024 թ. հունվարի 11-ին ՀՀ կառավարությունը հաստատել է 2023 թվականին ԼՂ-ից տեղահանված անձանց աջակցության ծրագիր՝ մասնագիտական հմտություններ և աշխատանքային փորձ ձեռք բերելու վերաբերյալ:[67] Որպես ծրագրի շահառու նախատեսվել է ներառել անձանց, որոնք չեն զբաղվում «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով սահմանված որևէ գործունեությամբ (օրինակ՝ վարձատրվող աշխատանք, ծառայությունների մատուցում կամ քաղաքացիաիրավական պայմանագրային հիմունքներով կատարվող աշխատանք, անհատ ձեռնարկատիրություն և նոտարական գործունեություն, պարտադիր զինվորական ծառայություն կամ ուսումնական հաստատություններում ուսուցում, մասնագիտական դասընթացներ և վերապատրաստման այլ ձևեր) և եկամտային հարկի անձնական հաշվառման համակարգի համաձայն՝ նախորդ ամսվա ընթացքում չեն հանդիսացել հարկատու աշխատակիցներ:

Ծրագիրը նախատեսում է աջակցության երեք տարբերակ, որոնք իրականացվում են Միասնական սոցիալական ծառայության (ՄՍԾ) տարածքային ստորաբաժանումների, գործատուի և մասնակցի միջև կնքվող եռակողմ պայմանագրերի հիման վրա:

- *Մասնագիտական վերապատրաստում և աշխատանքի տեղավորում.* Շահառուները ներգրավվում են գործատուի կողմից կազմակերպվող մինչև 6-ամսյա վերապատրաստման ծրագրերում և այդ ժամանակահատվածում ստանում են մինչև 50,000 ՀՀ դրամ՝ ուսման վարձի փոխհատուցման համար, և 50,000 ՀՀ դրամ՝ որպես ամենամսյա նպաստ:
- *Աշխատանքային փորձի ձեռքբերում և աշխատանքի տեղավորում.* Գործատուն կազմակերպում է աշխատանքային փորձաշրջան՝ 3 ամիս տևողությամբ, որի դիմաց ամեն ամիս ստանում է 165,000 ՀՀ դրամ փոխհատուցում՝ մասնակցի համախառն աշխատավարձի համար (ներառում է եկամտային հարկի պահումները և դրոշմանիշային վճարները, ինչպես նաև սոցիալական վճարները): Պարտադիր ժամանակահատվածից հետո գործատուն 3 ամիս շարունակ կարող է ստանալ մինչև 50,000-ական ՀՀ դրամ փոխհատուցում՝ հարկային պարտավորությունները մարելու համար:
- *Վերապատրաստում, աշխատանքային փորձի ձեռքբերում և աշխատանքի տեղավորում.* Մասնակիցները ներգրավվում են մինչև 6-ամսյա վերապատրաստման ծրագրերում՝ ստանալով մինչև 50,000 ՀՀ դրամ ուսման վարձի փոխհատուցում և 50,000 ՀՀ դրամ լրացուցիչ նպաստ: Վերապատրաստումից հետո գործատուի և մասնակցի միջև կնքվում է առնվազն վեցամսյա աշխատանքային պայմանագիր: Առաջին 3 ամիսներին գործատուն ստանում է ամսական կտրվածքով 165,000 ՀՀ դրամ փոխհատուցում՝ մասնակցի աշխատավարձի համար, իսկ երեք ամիս հետո ամսական մինչև 50,000 ՀՀ դրամ գումար՝ ամսական աշխատավարձից գանձվող հարկերը և վճարները մարելու համար:

[67] «Լեռնային Ղարաբաղից 2023 թ. տեղահանված անձանց համար կարճաժամկետ ուսուցման դասընթացի կազմակերպման և աշխատանքային փորձ ձեռք բերելու համար աջակցության տրամադրման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 57-Լ որոշում, 11.01.2024 թ., https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=194223, դիտված՝ 18.10.2024 թ.:

Ի սկզբանե, այս ծրագրով 2024 թվականի համար նախատեսվել էր 1,000 մասնակցի հնարավորություն, բայց քանի որ ԱՍՀՆ կողմից 2024 թ. հունիս ամսվա դրությամբ արձանագրվել է 1,410 անձի հայտ, ՀՀ կառավարությունն ընդունել է որոշում `տվյալ տարում ֆինանսավորելու ևս 500 անձի մասնակցությունն այս ծրագրին:[68]

2016, 2020 և 2022 թթ. ռազմական գործողություններին մասնակցած գործազուրկ անձանց աջակցության ծրագիր

ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց համապատասխան ներկայացուցիչները կարող են ներգրավվել նաև ՀՀ կառավարության 2022 թ. հուլիսի 21-ին հաստատված «Ադրբեջանի կողմից 2016 և 2020 թթ. սանձազերծված ռազմական գործողություններին մասնակցած գործազուրկ անձանց մասնագիտական վերապատրաստման կազմակերպման և զբաղվածության ապահովման ծրագրում»:[69] Այն ներառում է նաև պարտադիր ծառայությունից 2020 թ. հետո զորացրված անձանց: Մասնակիցները կարող են ձեռք բերել գործատուների կողմից պահանջվող հմտություններ, իսկ գործատուներն ստանում են ֆինանսական աջակցություն՝ վերապատրաստման, աշխատանքային փորձի կամ երկարաժամկետ աշխատանքային պայմանագրերի համար: Հիմնական ֆինանսական պայմանները ներառում են՝

- ուսման վարձի համար ամսական փոխհատուցում՝ մինչև 50,000-ական ՀՀ դրամ (մինչև 5 ամիս),
- ուսման ընթացքում նվազագույն աշխատավարձի 50%-ի չափով կրթաթոշակ,
- գործատուներն ամսական ստանում են 50,000 ՀՀ դրամ՝ մեկ տարվա ընթացքում հարկերի և սոցիալական վճարների փոխհատուցման համար՝ առնվազն մեկ տարվա պայմանագիր կնքելուց հետո,
- առաջին անգամ աշխատանք որոնողների համար գործատուներին երեք ամսվա ընթացքում տրամադրվում է նվազագույն աշխատավարձի փոխհատուցում. մինչև 25,000 ՀՀ դրամ հարկերի գծով, և մինչև 50,000-ական ՀՀ դրամ՝ 9 ամսվա ընթացքում,
- միանվագ 300,000 ՀՀ դրամ փոխհատուցում՝ թափուր տեղերը ծրագրի շահառուներով լրացնելու համար:

Գյուղատնտեսական ձեռնարկությունների աջակցման ծրագիր

Որոշակի չափանիշների համապատասխանող տեղահանված անձինք կարող են նաև դառնալ գյուղացիական տնտեսությանաջակցման գործող ծրագրի[70] շահառու: Ծրագիրն առաջնահերթ նախատեսված է Հայաստանի լեռնային կամ սահմանամերձ գյուղական բնակավայրերի համար, և դրա նպատակն է՝ սեզոնային զբաղվածության խթանման միջոցով նպաստել խոցելի և աղքատ գյուղական համայնքներում սոցիալական լարվածության նվազեցմանը, արտադրողականության բարձրացմանը և կայուն

[68] Հետք, *500 արցախցի աջակցություն կստանա աշխատանքային փորձ ձեռք բերելու համար,* 20.06.2024 թ. https://hetq.am/hy/article /167544, դիտված՝ 05.07.2024 թ.:

[69] «Ադրբեջանի կողմից 2016 և 2020 թթ. սանձազերծված ռազմական գործողություններին մասնակցած գործազուրկ անձանց մասնագիտական վերապատրաստման կազմակերպման և զբաղվածության ապահովման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 1179-Լ որոշում, 21.07.2022 թ., https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=166654, դիտված՝ 15.10.2024 թ.:

[70]« Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրման զբաղվածության պետական ծրագրի համատեղ կազմակերպման և իրականացման համար անհրաժեշտ գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման աշխատանքների չափաքանակները՝ ըստ գյուղատնտեսական մշակաբույսերի հաստատելու մասին» » ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի և ՀՀ գյուղատնտեսության նախարարի N 74-Ն համատեղ հրաման, 18.06.2014 թ., https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=109702, դիտված՝ 08.11.2024 թ.:

զբաղվածության պայմանների ստեղծմանը: Շահառուներն են՝ մինչև 3 հա գյուղատնտեսական հող ունեցող կամ վարձակալած կամ անհատույց օգտագործող անձինք, որոնք պետք է որպես աշխատանք որոնող գրանցված լինեն ՄՍԾ-ում և ներկայացնեն իրենց կարգավիճակը հաստատող փաստաթղթեր: Բացի այդ, նրանք և նրանց ընտանիքի անդամները չպետք է ներգրավված լինեն գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման պետական ծրագրերում:

Շահառուների ցանկում առաջնահերթությունը տրվում է խոցելիության գնահատման համակարգում դրական ցուցանիշ ունեցող, երկու կամ ավելի անչափահաս ունեցող, հաշմանդամություն ունեցող անդամ ունեցող, ծառայության ընթացքում զոհված զինծառայողների ընտանիքներին, սոցիալական պաշտպանության հաստատությունների (մանկատներ) շրջանավարտներին և սոցիալական դեպքերի վարման գործընթացում ընդգրկված անձանց:

Ծրագրում ընդգրկված հողօգտագործողին յուրանքաչյուր մարդ/օր աշխատանքային ծավալի դիմաց վճարվում է 4,000 դրամ: Ծրագրի շրջանակում գյուղատնտեսական տեխնիկայով 1 ժամ աշխատանքի համար հողօգտագործողին տրվում է 5,000 դրամ: Սեզոնային զբաղվածության ապահովման ծրագրի տևողությունը մինչև 6 ամիս է: Մեկ ծրագրի արժեքը չի կարող ցածր լինել 50,000 դրամից և գերազանցել 350,000 դրամը:

Մարտահրավերներ

Հետազոտության արդյունքում վերհանվել են հետևյալ խնդիրները.

Զբաղվածության ծրագրերի թերություններ ու սահմանափակումներ

Ուսուցիչների աջակցման ծրագրի սահմանափակումներ. Տեղահանված ուսուցիչները կարող են օգտվել հատուկ ծրագրով առաջարկվող հնարավորություններից միայն այն դեպքում, եթե տեղացի դիմորդներ չկան կամ մրցույթ չի իրականացվում և թափուր տեղը մրցութային գործընթացի միջոցով չի համալրվում այլ դիմորդների կողմից: Այսինքն, եթե տեղահանված ուսուցիչը մասնակցում է մարզում ուսուցչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին, ապա կորցնում է լրացուցիչ 30% հավելավճար ստանալու հնարավորությունը, որը կտրամադրվեր որպես աջակցություն: Սա, փաստորեն, տեղահանված ուսուցիչներին զրկում է կենսական ֆինանսական աջակցությունից և խոչընդոտում նրանց տնտեսական կայունությանը՝ սահմանափակելով կրթական ոլորտում վերաինտեգրվելու հնարավորությունները: Ուսուցչի հետ կնքվող պայմանագիրն ուժի մեջ է ստորագրման օրվանից մինչև երկրորդ ուսումնական տարվա ավարտը, սակայն եթե այն վաղաժամկետ լուծվում է, ուսուցիչը այլևս չի կարող մասնակցել ծրագրին (բացառությամբ՝ բնակության վայրի փոփոխության դեպքերի):

Շահառուների սահմանափակ շրջանակ և տևողություն. Ընդամենը 6-9 ամիս տևողությամբ ուսուցման և զբաղվածության աջակցման ծրագրում 1,500 անձի ընդգրկելը[71] բավարար չէ բռնի տեղահանված անձանց համընդհանուր զբաղվածության խնդիրը լուծելու համար: Պետական աջակցության կարճատև ծրագրից հետո գործատուն այլևս շահագրգռվածություն չի ունենում պահելու արցախցի աշխատողներին: Առանց շարունակական ֆինանսական խթանների կամ սպասարկման ոլորտում կայուն

[71] Հետք, *500 արցախցի աջակցություն կստանա աշխատանքային փորձ ձեռք բերելու համար*, 20.06.2024 թ.:

հաճախորդների ձեռքբերման, տեղահանված անձինք չեն կարողանում մշտական եկամուտ ունենալ, և դրա հետևանքով կրկին մնում են գործազուրկ: Ծրագրի քվոտաները կախված են բնակության վայրից, որի հետևանքով որոշ բնակավայրերում առկա տեղերը կարող են պարզապես թափուր մնալ՝ պահանջարկ չլինելու պատճառով, իսկ այլ տեղերում կարող են սահմանափակվել շահագրգիռ անձանց վերապատրաստման հնարավորությունները և աշխատատեղերի քանակը:

Տարիքային սահմանափակումներ. Կարճաժամկետ ուսուցման և զբաղվածության աջակցության ծրագիրը հիմնականում ուղղված է երիտասարդների զբաղվածության խթանմանը: Քանի որ գործատուներն են ընտրում ծրագրի մասնակիցներին, մեծ չէ հավանականությունը, որ գործատուն կընտրի 50-ն անց տարիքի անձի:

Թոշակառուների հետ կապված սահմանափակումներ. Կարճաժամկետ ուսուցման և զբաղվածության աջակցության ծրագրում չեն կարող ընդգրկվել նաև կենսաթոշակային տարիքի տեղահանվածները, քանի որ նրանք չունեն գործազուրկի կարգավիճակ, համարվում են պետության սոցիալական պաշտպանության համակարգից օգտվող անձինք և ստանում են կենսաթոշակ, մինչդեռ նրանք ևս ունեն կարիքներ, որոնք երբեմն անհնար է ապահովել առանց աշխատանքի, ինչպես, օրինակ՝ բնակարանի ծախսերը, որոնք հաճախ գերազանցում են նրանց կենսաթոշակի գումարը:

Հաշմանդամություն ունեցող անձանց հետ կապված խոչընդոտներ. Նույն ծրագրում առկա չեն լրացուցիչ խթաններ հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավման համար, ինչը որևէ գործատուի չի մոտիվացնում՝ ներգրավելու հատուկ կարիքներ ունեցող անձանց: Խնդիրը հատկապես սուր է 2023 թ. սեպտեմբերի 25-ին ԼՂ-ում տեղի ունեցած պայթյունի հետևանքով տուժած տղամարդկանց դեպքում: Նրանց զգալի մասն ունի կարողությունների մշտական կամ ժամանակավոր սահմանափակումներ, սակայն նրանք չեն դասակարգվում որպես պատերազմի մասնակից կամ հաշմանդամություն ունեցող անձինք: Նման անձանց համար որևէ հատուկ ծրագիր նախատեսված չէ, իսկ տվյալ ծրագրից ընդհանուր հիմունքներով օգտվելու դեպքում փոքր է գործատուների կողմից այդ անձանց հատուկ հարմարությունների ապահովմամբ աշխատանքի ընդունելու հավանականությունը, մինչդեռ նրանք կրում են իրենց ընտանիքների մասին հոգ տանելու ֆինանսական բեռը:

Ծրագրում ներգրավվելու անհարմարություններ ու ռիսկեր. Կարճաժամկետ ուսուցման և զբաղվածության աջակցության ծրագրում ներգրավվելու համար հաճախ ակնկալվում է, որ տեղահանված անձինք անձամբ գտնեն հնարավոր գործատուին և բանակցեն իրենց աշխատանքի հարցով, ինչն անհամաչափ բեռ է տեղահանված անձանց համար: ՄՍԾ տարածքային կենտրոնները դիմորդների ցուցակն ուղարկում են գործատուներին, որոնք որոշում են, թե ում հետ են ցանկանում համագործակցել ծրագրի շրջանակներում:

Գենդերային խտրականություն. Ֆոկուս-խմբային քննարկումների մասնակից տղամարդկանց խոսքերով և տպավորությամբ՝ զբաղվածության շատ նախաձեռնություններ անհամաչափ կենտրոնանում են այն ոլորտների վրա, որտեղ հիմնականում աշխատում են կանայք (օրինակ՝ դիմահարդարում, վարսահարդարում, մատնահարդարում, կարուձև):

Հանրային ծառայությունում ներգրավվելու հնարավորությունների սահմանափակում

Հանրային հատվածում աշխատելու խրախուսման բացակայություն. Պետական մակարդակով որևէ ծրագիր կամ խրախուսում առկա չէ նախկինում ԼՂ հանրային

հատվածում ծառայողներին, այսինքն զբաղված անձանց ամենամեծ խմբին (այդ թվում՝ փրկարար ծառայության աշխատակիցներին) ՀՀ կառավարման համակարգում ընդգրկելու համար, ինչի հետևանքով այդ խմբի ներկայացուցիչների զգալի մասը գործազուրկ է կամ ներգրավված է այնպիսի աշխատանքներում, որոնք հատուկ որակավորում չեն պահանջում:

Զինվորական ծառայության վերադառնալու խնդիրներ. Զինվորական ծառայության վերաբերյալ բազմաթիվ փաստաթղթեր ոչնչացվել են, ինչի հետևանքով անհնար է հաստատել նախկին զինվորական ծառայության փաստը և անձանց վերականգնվել պաշտպանության համակարգում՝ առանց արխիվային գրառումների հասանելիության: Անկախ այն հանգամանքից, որ անձը ծառայել է ԼՂ պաշտպանության բանակում, որևէ փաստաթուղթ չի տրամադրվում, որը կհաստատի, որ նա ամբողջությամբ կամ մասնակի կատարել է պետության հանդեպ իր պարտավորությունները: Մյուս կողմից, կան դեպքեր, երբ ԼՂ պաշտպանության բանակի բարձրաստիճան սպաները ներգրավվում են որպես շարքային՝ ծառայելու առաջնագծում: Սա խնդրահարույց է, քանի որ վերջիններս հաճախ ռազմական ոլորտին վերաբերող գաղտնի տեղեկատվության կրողներ են:

Դասախոսների համար աշխատանքի հնարավորությունների բացակայություն. Քանի որ ՀՀ բուհերում դասախոսական անձնակազմի նկատմամբ ավելի խիստ չափորոշիչներ են գործում, և արցախցի դասախոսների զբաղվածության ապահովման որևէ աջակցող կամ խրախուսող մեխանիզմ առկա չէ, այս խումբը դուրս է մնում աշխատաշուկայից և ստիպված է կամ ընդգրկվել հանրակրթության համակարգում, կամ մտնել սպասարկման ոլորտ կամ արտագաղթել, ինչը մտավոր կապիտալի կորուստ է:

Մարզերում հնարավորությունների բացակայություն

Մարզերում վերապատրաստման և աշխատանքի հնարավորությունների սահմանափակումներ. Մարզերում առկա չեն շատ կազմակերպություններ, որոնք կառաջարկեն տարբեր ոլորտների աշխատանքային վերապատրաստումներ և աշխատանք: Բացի այդ, վարձատրությունը մարզերում հաճախ ցածր է, ինչն ստիպում է աշխատանք փնտրել քաղաքներում, հատկապես Երևանում:

Աշխատանքային իրավունքների և այլ խախտումներ

Աշխատանքային իրավունքների խախտումներ. Տեղահանված անձինք հաճախ բախվում են աշխատանքային իրավունքների խախտումների՝ աշխատանքի երկարաձգված տևողության, չվճարված հավելավճարների, աշխատավարձերի ուշացումների տեսքով: Գործատուները երբեմն խտրական մոտեցում են ցուցաբերում և ավելի ցածր աշխատավարձ են առաջարկում, քան նույն աշխատանքը կատարող տեղացի աշխատակիցներին: Թեև խնդիրն ընդհանուր է, այդուհանդերձ, արցախցիներն առավել խոցելի են: Իրենց իրավունքների մասին նրանց իրազեկության պակասը, օտար լինելու զգացողությունը, ինչպես նաև հայաստանյան աշխատաշուկայում տեղավորվելու խնդիրները խոչընդոտում են տեղահանված անձանց՝ իրականացնելու իրենց իրավունքների պաշտպանությանը միտված քայլեր:

Բողոքարկման մեխանիզմների առկայություն. Պետական ծրագրերի շրջանակում աշխատանքային իրավունքների խախտումների հետ կապված բողոքարկումը հնարավոր է Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (ԱԱՏՄ), ՄՍԾ տարածքային

կենտրոններ դիմելու կամ ԱՍՀՆ «114» թեժ գծի միջոցով, մինչդեռ նշված հեռախոսահամարը հաճախ անհասանելի է:

Հնարավոր չարաշահումներ. Աշխատող-գործատու պայմանավորվածության մոդելում առկա են կոռուպցիոն ռիսկեր, քանի որ անհատն ու գործատուն կարող են պայմանավորվել, ձևական աշխատանքի ընդունվել, ստացվող գումարը կիսել, իսկ ծրագրի ավարտից հետո դադարեցնել պայմանագիրը: Որոշ մասնավոր գործակալություններ շահագործում են դիմորդներին՝ պահանջելով վճարներ՝ առանց աշխատանքի իրական հնարավորությունների տրամադրման, ինչը որևէ կերպ չի վերահսկվում:

ՄՄԾ զբաղվածության ստորաբաժանումների և գործատուների ոչ բավարար աջակցություն. ՄՄԾ զբաղվածության աջակցության ծառայությունները և գործատուները հաճախ ստեղծում են անհարկի խոչընդոտներ՝ ցուցաբերելով բացասական վերաբերմունք և կասկածի տակ առնելով տեղահանվածների որակավորումները կամ լեզվական հմտությունները, ինչը բարդացնում է կայուն աշխատանք գտնելը:

Մոնիտորինգի և աշխատուժի կառավարման համակարգերի բացակայություն

Մոնիտորինգի համակարգի բացակայություն. Չկա համապարփակ համակարգ՝ պետական ծրագրերով իրականացվող վերապատրաստումներն ու աշխատանքի տեղավորման ծրագրերի արդյունավետությունը, ինչպես նաև արցախցիների աշխատանքային իրավունքների պատշաճ ապահովումը դիտարկելու և գնահատելու համար: Կարճաժամկետ ուսուցման և զբաղվածության ծրագրի ընթացիկ մոնիտորինգը կախված է ՄՄԾ տարածքային կենտրոնների զբաղվածության բաժիններից, որոնք պարբերաբար այցելում են գործատուներին: Սահմանափակ մարդկային ռեսուրսների պարագայում, սակայն, ՄՄԾ տարածքային կենտրոնները չեն կարող ամբողջ ծավալով իրականացնել մոնիտորինգի ֆունկցիան: Գործատուի կողմից ամսվա կտրվածքով աշխատողի օրական հաճախումների մասին ՄՄԾ համապատասխան տարածքային կենտրոն տեղեկանքի ներկայացումից զատ, մոնիտորինգի այլ համակարգ այս պահին գոյություն չունի: Հետևաբար, ստացվում է, որ ԱՍՀՆ-ն ընթացիկ մոնիտորինգի և ծրագրի արդյունավետության ստուգման հստակ մշակված գործիք չունի և, ըստ էության, նախատեսում է ծրագրի արդյունավետության գնահատումն իրականացնել միայն տարեվերջին՝ որպես ընթացիկ տարվա բյուջեով նախատեսված ծրագրի գնահատում, ինչը հնարավորություն չի տալիս պատշաճ ժամկետներում շտկելու խնդիրները:

Առկա ներուժի թերի կառավարում. Հայաստանում արցախցիներից շատերը, այդ թվում մասնագիտություն ունեցող անձինք, կարողանում են զբաղվել միայն այն աշխատանքներով, որոնք որակավորում չեն պահանջում, հաճախ զբաղվում են ձեռնարկատիրությամբ՝ հիմնականում ծառայությունների և սպասարկման ոլորտներում: Չի իրականացվում աշխատանքային ներուժի գնահատում և ուղղորդում, ինչի հետևանքով մտավոր աշխատանք կատարող և հանրային ծառայությունում ներգրավված մարդիկ չեն գտնում իրենց տեղը աշխատաշուկայում:

Անբավարար իրազեկվածություն

Անարդյունավետ իրազեկում. Հաղորդակցության և իրազեկման ծրագրերի բացակայության պատճառով տեղահանվածները հաճախ տեղյակ չեն պետական վերապատրաստման

ծրագրերի կամ հմտությունների զարգացման դասընթացների մասին, ինչի պատճառով դիմելիությունը ցածր է:

Վերահսկող մարմինների վերաբերյալ իրազեկվածություն. ԼՂ-ից տեղահանված անձինք հիմնականում տեղյակ չեն իրենց աշխատանքային իրավունքների, դրանց խախտումների վերաբերյալ բողոքարկման հնարավորության, ինչպես նաև դրա նկատմամբ պետական վերահսկողության համակարգի, այդ թվում՝ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի մասին, ինչը սահմանափակում է նրանց իրավունքների պաշտպանությունը կամ բողոքների ներկայացման հնարավորությունը:

Առաջարկություններ

Նշված մարտահրավերների հիման վրա առաջարկվում են հետևյալ միջոցառումները.

Զբաղվածության ծրագրերի կատարելագործում և ընդլայնում

Պետական աջակցության ծրագրերի համախմբում. Ստեղծել համադրված մոտեցում զբաղվածության և բնակարանային ծրագրերի միջև՝ համապարփակ աջակցություն ապահովելու համար: Սա կարող է ներառել միավորված մոտեցում տեղահանված անձանց կարիքները գնահատելու և բավարարելու խնդրին:

Ուսուցիչների զբաղվածության ծրագրի խտրական մոտեցման վերացում. Վերանայել գործող քաղաքականությունը, որը սահմանափակում է բռնի տեղահանված ուսուցիչների զբաղվածության հնարավորությունները, և թափուր տեղերի առկայության բերումով հավասար մրցակցային հիմունքներով աշխատանքի անցնելու դեպքում պահպանել նրանց տրամադրվող հավելավճարները, ինչպես նաև պահպանել տրամադրվող աջակցությունը պայմանագրի լուծման դեպքում:

Աջակցության ծրագրերի ծավալների և տևողության ընդլայնում. Ավելացնել տեղահանված անձանց զբաղվածության ապահովման ծրագրի մասնակիցների թիվը, ինչպես նաև գործատուների համար եկամուտների վերադարձի հնարավորությունը երկարաձգել առնվազն մինչև 18 ամիս (հիմք ընդունելով միջազգային փորձը),[72] ինչը կխրախուսի ավելի շատ գործատուների՝ աշխատանքի վերցնել տեղահանված անձանց:

Խոցելի խմբերի թիրախային ներառում. Բռնի տեղահանված անձանց համար պետության կողմից նախատեսված ուսուցման և զբաղվածության ծրագրերի շրջանակներում հատուկ խթաններ նախատեսել կամ այլ հատուկ ծրագրեր մշակել հաշմանդամություն կամ հատուկ կարիքներ ունեցող, ինչպես նաև 50+ տարիքի անձանց և թոշակառուներին աշխատաշուկայում տեղավորելու և նրանց ներուժը ճիշտ օգտագործելու նպատակով:

Մասնագիտական վերապատրաստման նախաձեռնություններ. Կազմակերպել վերապատրաստման դասընթացներ նեղ մասնագիտությունների (օրինակ՝ հաշվապահների) գծով՝ մասնագիտական ասոցիացիաների և արհմիությունների հետ համագործակցությամբ և նրանց ֆինանսական աջակցություն տրամադրելու միջոցով:

[72] ԹԻՀԿ, *Բռնի տեղահանված արցախցիների զբաղվածությունն ու աշխատանքային իրավունքների իրացումը Հայաստանում,* նոյեմբեր 2024, https://transparency.am/hy/publication/pdf/379/11509

Եռակողմ աշխատանքային պայմանագրեր. Վերապատրաստման դասընթացների ավարտին ներդնել եռակողմ աշխատանքային պայմանագիր՝ մասնակցի, գործատուի և պետության (ՄՍԾ տարածքային կենտրոնի) միջև՝ երաշխավորելով 1-2 տարվա աշխատանքային պայմանագիր՝ աշխատանքային կայունություն ապահովելու համար:

Վերապատրաստված մասնագետների զբաղվածություն. Նպաստել արդեն իսկ վերապատրաստված մասնագետների երկարաժամկետ զբաղվածությանը՝ առկա կազմակերպություններում: Արտոնյալ հնարավորություններ ու խթաններ ապահովել նաև տեղահանված անձանց կողմից բացված ձեռնարկություններում աշխատանքի տեղավորելու համար:

Սուբսիդավորվող զբաղվածության պայմաններ. Պետության կողմից սուբսիդավորվող կազմակերպությունները կարող են ներառել դրույթներ՝ ապահովելու որոշակի թվով անձանց զբաղվածությունն իրենց ծրագրերի շրջանակում:

Մասնագիտական վերապատրաստման միջոցառումներ. Իրականացնել կարիքների գնահատում և կազմակերպել վերապատրաստման դասընթացներ բիզնեսի կառավարման, ՏՏ հմտությունների, ժամանակակից գյուղատնտեսական տեխնոլոգիաների և այլ թեմաներով՝ արդյունավետ դասընթացներ մշակելու գործում համագործակցելով ոլորտների մասնագետների հետ:

Հմտությունների զարգացման միջոցառումներ. Կազմակերպել փափուկ հմտությունների զարգացման և այլ գործնական դասընթացներ, որոնք կօգնեն տեղահանված անձանց՝ ավելի հեշտությամբ կողմնորոշվելու աշխատաշուկայում և գտնելու կայուն զբաղվածություն:

Զբաղվածության լուծումների համակարգված մոտեցում. Նպաստել հասարակական և միջազգային կազմակերպությունների համագործակցությանը՝ տեղահանված անձանց զբաղվածության մարտահրավերների լուծման նպատակով: Ուժեղացնել վերահսկողության մեխանիզմները՝ տրամադրված աջակցության արդյունավետությունը ապահովելու համար:

Նախագծում և արդյունավետ իրականացում. Ապահովել շարունակական ֆինանսական աջակցություն, հաղորդակցության ընդլայնում, հաջողված պատմությունների արձանագրում ու տարածում, հուսալի հետադարձ կապի մեխանիզմների ներդրում, որոնք կարևոր նշանակություն կունենան զբաղվածության ծրագրերի հաջողության համար:

Հանրային ծառայությունում ներգրավվելու հնարավորությունների ընդլայնում

Զբաղվածության խթանում հանրային ծառայությունում ներգրավվող անձանց համար. Նախատեսել փոփոխություն օրենսդրության մեջ՝ ժամանակավոր պաշտպանության կարգավիճակ ունեցող բռնի տեղահանված անձանց հնարավորություն տալով դիմելու թափուր հանրային ծառայության պաշտոնների՝ քննությունները հաղթահարելու դեպքում առաջիկա 2-3 ամսում ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու պայմանով:

Զինվորական ծառայության մեջ ներգրավված անձանց վերականգնում ծառայությունում. Ներդնել ԼՂ պաշտպանության բանակում ծառայած անձանց ծառայությունը հավաստող փաստաթղթեր տրամադրելու գործընթաց՝ ապահովելով, որ նրանց ծառայության փաստը ճանաչվի և նրանք կարողանան անցնել ծառայության: Լուծում կարող է դառնալ ՀՀ պաշտպանության նախարարությունում հատուկ հանձնաժողովի ձևավորումը ԼՂ

զինվորական անձնակազմի զինվորական ծառայության և աշխատանքային տվյալների ուսումնասիրության և հաստատման համար, որը կարող է ներառել ԼՂ պահեստազորային ստորաբաժանումների հրամանատարների հետ համագործակցություն՝ ճշգրիտ հաշվառում երաշխավորելու համար: Դիտարկել ԼՂ-ում պաշտպանության ոլորտում և պատերազմական գործողությունների ժամանակ ղեկավար դիրք զբաղեցրած նախկին պաշտոնյաների կարգավիճակի վերականգնումը ՀՀ զինված ուժերում:

Մարզերում հնարավորությունների խթանում

Մարզային/համայնքային սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրեր. Զբաղվածության 2024-2030 թթ. ռազմավարության ներքո դիտարկել մարզային/համայնքային սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի հնարավորությունը՝ ուղղված մարզերում հաստատված բռնի տեղահանված անձանց զբաղվածության ապահովմանը: Որպես տարբերակ կարող է նախատեսվել հողամասը վարձակալությամբ բռնի տեղահանված անձանց տրամադրելու դեպքում հողամասի սեփականատիրոջը վարձակալության հարկի վերադարձի արտոնություն տրամադրելը:

Ուսուցում և վերապատրաստումներ. Պետական դրամաշնորհային ծրագրերի միջոցով խթանել ուսուցանող և վերապատրաստող կազմակերպությունների կողմից վերապատրաստումների իրականացումը մարզերում:

Ուսուցման և զբաղվածության ապահովում. Մարզերում խրախուսել ուսուցման/վերապատրաստման և զբաղվածության ծրագրերում արցախցիների և գործատուների ներգրավումը: Լրացուցիչ ֆինանսական խթաններ նախատեսել գործող վերապատրաստման և զբաղվածության աջակցման ծրագրերում մարզային գործատուներին ներգրավելու համար:

Գյուղատնտեսական գործունեություն. Գյուղատնտեսական ձեռնարկություններին աջակցելու ծրագրով նախատեսել գյուղատնտեսական գործունեության խթանման բաղադրիչ՝ նախատեսելով տեխնիկայի ձեռքբերման լիզինգի հնարավորություն:

Արդյունավետ մոնիտորինգի և կառավարման ապահովում

Հմտությունների քարտեզագրում և աշխատանքի տեղավորում. Կատարել տեղահանված անձանց մասնագիտությունների, փորձառության ու նախկին զբաղվածության համապարփակ քարտեզագրում, ձևավորել համապատասխան տվյալների բազա և կազմակերպել ու դյուրացնել որակավորված անձանց աշխատանքի տեղավորելու գործընթացը, մասնավորապես մարզերում: Ըստ նպատակահարմարության՝ արդյունավետ օգտագործել e-work.am հարթակը:

Մոնիտորինգի մեխանիզմների բարելավում. Ստեղծել զբաղվածության ծրագրերի շարունակական մոնիտորինգի կուռ համակարգ՝ ներառելով իրական ժամանակում տվյալների հավաքագրում և պատշաճ ժամկետներում վերլուծություն՝ կարիքներն ու թերությունները արագ բացահայտելու և առկա խնդիրներին լուծումներ տալու նպատակով: Կիրառել բողոքների կառավարման համակարգ՝ մասնակիցների դժգոհությունները արդյունավետ լուծելու համար:

Պատշաճ իրազեկում

Հանրային իրազեկման և հաղորդակցման արշավներ. Կազմակերպել տեղեկատվական արշավներ՝ տեղահանված անձանց հասանելի, առավել կիրառելի և արդյունավետ խողովակներով ու միջոցներով, ներառյալ սոցիալական մեդիայով, ավանդական լրատվամիջոցներով տեղեկատվական նյութերի տարածումը և համայնքային միջոցառումները՝ իրազեկելով իրենց համար նախատեսված և հնարավոր վերապատրաստման ու զբաղվածության ծրագրերի ու ծառայությունների, ինչպես նաև աշխատանքային օրենսդրության, իրենց իրավունքների ու պարտականությունների, ԱԱՏՄ-ի, բողոքարկման մեխանիզմների մասին:

Գործատուների իրազեկում՝ արցախցի աշխատողներ ներգրավելու առավելությունների մասին. Մշակել տեղեկատվական նյութեր և կազմակերպել միջոցառումներ՝ գործատուների և, հատկապես, խոցելի վիճակում գտնվող աշխատողների շրջանում իրազեկվածությունը բարձրացնելու համար:

Է. Բռնի տեղահանված անձանց համար հասանելի տնտեսական զարգացման ծրագրերը

քաղաքականության համառոտագիր

Ամփոփում

Բռնի տեղահանված անձանց տնտեսական կայունության ապահովումը և զարգացման հնարավորությունների ստեղծումը առանցքային նշանակություն ունեն Հայաստանում նրանց ամրապնդելու և զանգվածային արտագաղթը կանխելու համար:

Անհրաժեշտ է մշակել հատուկ քաղաքականություն՝ ուղղված Հայաստանում ԼՂ-ից տեղահանված բնակչության տնտեսական պայմանների և կյանքի որակի բարելավմանը: Անհրաժեշտ է իրականացնել տնտեսական հզորացմանն ուղղված թիրախային ծրագրեր, բռնի տեղահանված անձանց համար կազմակերպել ֆինանսական գրագիտության և բիզնես-նախաձեռնությունների զարգացման դասընթացներ, նախատեսել հարկային և վարկային արտոնություններ, Լեռնային Ղարաբաղի գյուղատնտեսության ոլորտում մեծ փորձ ունեցող տեղահանված անձանց ներուժն օգտագործել ՀՀ-ում:

Այս տեսանկյունից կարևոր է բարելավել բռնի տեղահանված անձանց շրջանում առկա և հնարավոր տնտեսական զարգացման ծրագրերի վերաբերյալ իրազեկվածությունը, դյուրացնել դիմելու կարգը, բանկային և վարկային կազմակերպությունների հետ բանակցությունները, որպեսզի վերջիններս ճանաչեն ԼՂ-ում ֆիզիկական և իրավաբանական անձանց տնտեսական փորձը և անտեսեն բացասական վարկային պատմությունը, որի պատճառ է հանդիսացել ֆորսմաժորային իրավիճակը՝ բռնի տեղահանումը և վարկի առարկաների կորուստը ԼՂ-ում:

Հիմնախնդիր

Պետության կողմից իրականացվող ծրագրերը, սոցիալական աջակցությունը հիմնականում ուղղված են բռնի տեղահանված անձանց խնդիրների կարճաժամկետ լուծմանը: Երկարաժամկետ հեռանկարի, տնտեսական անկախության և կայունության համար իրականացվող միջոցառումները բավարար չեն: Բացի այդ, ֆինանսական աջակցության ուշացումները, բնակարանային խնդիրը և գործազրկությունը շարունակում են բացասական ազդեցություն ունենալ տեղահանված ընտանիքների վրա և կենսունակության ապահովման հիմնական խոչընդոտներն են:

Մյուս կողմից, տնտեսական զարգացման ծրագրերից շատերն, ըստ էության, հասանելի չեն տեղահանված բնակչությանը, ինչը հնարավորություն չի տալիս վերջիններիս՝ տնտեսական գործունեություն սկսել Հայաստանի Հանրապետությունում:

Առկա ծրագրեր ու կարգավորումներ

Բիզնեսի և գյուղատնտեսության աջակցության ծրագրեր

Պետության կողմից իրականացվում են տնտեսական զարգացմանն ուղղված մի շարք միջոցառումներ, որոնց վերաբերյալ հակիրճ ու հստակ տեղեկատվություն կարելի է ձեռք բերել irazekum.am[73] տեղեկատվական հարթակի միջոցով: Այս հարթակում առանձին

[73] Պետական աջակցության ծրագրերի իրազեկման հարթակ, https://irazekum.am, դիտված՝ 08.11.2024 թ.:

սյունակով ներկայացված են ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց համար նախատեսված, ներառյալ՝ ֆինանսական աջակցության, կրթության, առողջապահության և զբաղվածության ապահովման ծրագրերը: Մինչդեռ պարզ չէ, թե ընդհանուր ներկայացված տնտեսական զարգացման, այդ թվում՝ բիզնեսի կամ գյուղատնտեսության աջակցության ծրագրերը որքանով են հասանելի տեղահանված անձանց համար: Պետության կողմից արցախցիներին իրենց իրավունքների և հնարավորությունների վերաբերյալ առանց այդ էլ անբավարար իրազեկման պայմաններում, նրանք տվյալ կայքի օգնությամբ էլ չեն կարող պատկերացում կազմել առկա հնարավորությունների մասին:

Աջակցություն ոսկու գրավադրմամբ սպառողական վարկեր ունեցող անձանց

ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց համար նախատեսված միջոցառումներում առկա է նաև ոսկու գրավադրմամբ սպառողական վարկեր ունեցող՝ ԼՂ-ից տեղահանված ֆիզիկական անձանց պարտավորությունների ներման հատուկ ծրագիրը: Ծրագրի շրջանակներում ՀՀ կառավարությունը ներում է ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց պարտավորությունները, որոնք ՀՀ ֆինանսական կազմակերպություններում մինչև 2023 թվականի սեպտեմբերի 19-ը ունեցել են ոսկու գրավադրմամբ տրամադրված սպառողական վարկ: Աջակցության շահառու են հանդիսանում ԼՂ-ից բռնի տեղահանված ֆիզիկական այն անձինք, որոնց պարտավորությունների չափը բոլոր ֆինանսական կազմակերպություններում 2023 թվականի դեկտեմբերի 29-ի դրությամբ չի գերազանցում 2,500,000 ՀՀ դրամը: Նախատեսված պարտավորությունների գծով մինչև որոշման ուժի մեջ մտնելը[74] կատարված վճարումները, ներառյալ՝ ամբողջական մարումները, կարող են վերադարձվել համապատասխան պարտապաններին՝ պայմանով, որ վերջիններս սույն որոշման ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում այդ պահանջով դիմեն ՀՀ ֆինանսների նախարարություն: Այնուամենայնիվ, սույն որոշման վերաբերյալ ակտիվ հանրային իրազեկում չի իրականացվել, ինչի մասին են վկայում նաև 2024 թ. սեպտեմբերին իրականացված աշխատանքային քննարկումները:

Դեռևս 2023 թ. հոկտեմբերին Էկոնոմիկայի նախարարությունը հայտնել էր, որ նախարարությունը մի շարք նոր ծրագրեր է մշակել՝ հատկապես փոքր և միջին բիզնեսի ներկայացուցիչների համար: Նման ծրագրերի իրականացման դեպքում բռնի տեղահանված անձանց համար կգործեն արտոնյալ պայմաններ: 2023 թ. հոկտեմբերի 9–ին և 12-ին ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում տեղի են ունեցել փակ հանդիպումներ ԼՂ-ից բռնի տեղահանված գործարարների հետ՝ առաջիկա անելիքները հստակեցնելու համար: Դեռևս այդ ժամանակահատվածում Էկոնոմիկայի նախարարությունը հայտնել էր, որ բռնի տեղահանվածներից շատերը հետաքրքրված են կոնկրետ ծրագրերով: Քննարկված նախագծերը ներկայացվել էին ՀՀ կառավարություն: Ձեռներեցների բարձրացրած հարցերի մի մասը տեխնիկական բնույթի էին և հիմնականում վերաբերում էին հարկային, դրամական փոխանցումներին:[75] Այնուամենայնիվ, Էկոնոմիկայի նախարարության հայտարարություններից բացի, որևէ հանրային իրազեկում չի իրականացվել բռնի տեղահանված անձանց համար հասանելի ծրագրերի ու տնտեսական զարգացման արտոնությունների վերաբերյալ:

[74] «Ֆիզիկական անձանց պարտավորությունները ներելու և որպես պետական ֆինանսական աջակցություն ձևակերպելու մասին» ՀՀ կառավարության N 481-Ա որոշում, 04.04.2024 թ., https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=191542, դիտված՝ 08.11.2024 թ:

[75] News.am, *Արցախցի գործարարների համար նոր առաջարկներ են արվել. «գործելու են արտոնյալ պայմաններ»,* 11.10.2023 թ., https://news.am/arm/news/786198.html, դիտված՝ 08.11.2024 թ.:

Բռնի տեղահանված գյուղաբնակների զգալի մասը Լեռնային Ղարաբաղում զբաղվում էր գյուղատնտեսությամբ, և նրանք ունեն գյուղատնտեսության ոլորտում իրենց մեծ ներուժը նաև ՀՀ-ում իրացնելու կարիք, սակայն այդ ոլորտում կայունություն ձեռք բերելու համար անհրաժեշտ է ֆինանսական աջակցություն: Կառավարությունն իրականացնում է գյուղատնտեսության աջակցությանն ուղղված մի շարք ծրագրեր, որոնք, սովորաբար, բռնի տեղահանված անձանց համար հասանելի չեն՝ կապված հողը սեփականության իրավունքով չտիրապետելու և օգտագործելու խնդիրների, սեփական ֆինանսական միջոցների ներգրավման և Լեռնային Ղարաբաղում թողած գույքի մասով բացասական վարկային պատմության հետ: Գյուղատնտեսության ոլորտում պետության աջակցության ծրագրերը վերաբերում են անասնապահությանը, այգեգործությանն ու հողագործությանը, ինչպես նաև վարկերի սուբսիդավորմանն ու լիզինգին:[76] Սակայն, ՀՀ քաղաքացիների համեմատ, բռնի տեղահանված անձինք նվազ մրցունակ են, չունեն հողամաս, առաջանում են վարկային պատմության և վարկունակության խնդիրներ: Բացի այդ, տեղահանված անձինք չեն բավարարում բանկերի ու վարկային կազմակերպությունների կողմից դիմումատուների համար սահմանված պահանջներին:

Մարտահրավերներ

Հետազոտության արդյունքում վերհանվել են հետևյալ խնդիրները.

Ֆինանսավորման դժվարություններ

Բիզնես վարկերի սահմանափակություն. Թեև բազային ֆինանսական ծառայությունները, ինչպես, օրինակ՝ քարտերի և բանկային հաշիվների բացումը, մատչելի են արցախցիների համար, սակայն այլ ծառայությունների՝ հիփոթեքային և բիզնես վարկերի հասանելիության մասով առկա են խնդիրներ: Բիզնեսի զարգացման վարկեր ստանալու հնարավորությունները սահմանափակ են:

Գրավադրման խնդիր. Բանկերը վարկեր չեն տրամադրում այն անձանց, որոնք գրավի առարկա չունեն, ինչը խոչընդոտ է ունեզրկված տեղահանված անձանց համար, որոնք հաճախ ոչինչ չունեն: Սրա հետևանքով տեղահանված անձանց ոսկյա իրերն ու ավանդները գրավ են դրվում: Գրավադրման պայմաններում, եթե անձը չի կարողանում կատարել իր ֆինանսական պարտավորությունները, ապա առկա է ռիսկ՝ կորցնելու ունեցվածքը:

Բացասական վարկային պատմության խնդիր. Գույքը Արցախում թողնելու և վարկը մարել չկարողանալու պատճառով ձևավորված բացասական վարկային պատմությանը դեռևս անդրադարձ չի արվել, մինչդեռ համապատասխան անշարժ գույքը կամ տեխնիկան, որի համար պարտավորությունները չեն մարվել, մնացել են ԼՂ-ում: Վարկային պարտավորությունների կատարման անհնարինության մասին նշել է նաև «Մարդը կարիքի մեջ» կազմակերպությունը, ըստ որի՝ տեղահանված անձինք բախվում են վարկային պարտավորությունների կատարման դժվարությունների, ինչը հանգեցնում է ժամկետանց վարկերի: Վարկերի ուշացումները բացասաբար են անդրադառնում վարկունակության վրա և սահմանափակում են ապագայում ֆինանսական ծառայություններից օգտվելու հնարավորությունները: Որոշ մասնավոր բանկեր 3,500 տեղահանված անձանց վարկերը մարել են սեփական միջոցների հաշվին:[77]

[76] Պետական աջակցության ծրագրերի իրազեկման հարթակ, https://irazekum.am/event_category/5, դիտված՝ 08.11.2024 թ.
[77] «Մարդը կարիքի մեջ» բարեգործական ՀԿ, մարտ 2024:

Ծրագրերի համար նախատեսված պահանջների բարդություններ

ՀՀ քաղաքացիության պահանջ. ՀՀ-ում գործող սուբսիդավորման ծրագրերը հասանելի են միայն ՀՀ քաղաքացիների համար, ինչը սահմանափակում է բռնի տեղահանված անձանց հնարավորությունները:

Ծրագրերի անհամապատասխանություն առկա կարիքներին. ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ուղարկված հարցմանն ի պատասխան մատնանշվել է բռնի տեղահանված անձանց հասանելի ընդամենը մեկ ծրագիր՝ մշակող արդյունաբերության ոլորտում աշխատողների ներգրավման վերաբերյալ, որով տնտեսվարողներին կարող է փոխհատուցվել 12 ամսվա ընթացքում աշխատողների համար վճարվող եկամտահարկի գումարը: Մինչդեռ մշակող արդյունաբերությունը, բռնի տեղահանված անձանց նախկին փորձի և մասնագիտացման տեսանկյունից, ոչ վերաբերելի ճյուղ է: Բռնի տեղահանված անձինք առավել հաճախ գործունեություն են ծավալում գյուղատնտեսության, այդ թվում՝ անասնաբուծության, մեղվաբուծության և հարակից այլ ոլորտներում, և մշակող արդյունաբերության ոլորտում հատուկ արտոնությունների տրամադրումը հատուկ արժեք չի ներկայացնում բռնի տեղահանված անձանց աջակցության հարցը լուծելու տեսանկյունից:

Գործունեության պատմություն ունենալու պահանջ. Բիզնեսի վարկավորման համար բանկերի կողմից սովորաբար սահմանվում է վեցամսյա գործունեության պատմության պահանջ, ինչը խոչընդոտ է այն տեղահանված անձանց համար, որոնք Հայաստանում գրանցել են իրենց բիզնեսը, սակայն դեռևս չեն կարողանում բավարարել այս կոնկրետ պահանջը:

Պայմանագրերի ապահովման խնդիր. Գյուղատնտեսական աջակցության ծրագրերին դիմելու համար պահանջվում է հողի վարձակալության պայմանագիր, ինչը հաճախ հնարավոր չէ ապահովել, քանի որ հողի սեփականատերերը հարկային պարտավորություններ չունենալու նպատակով հրաժարվում են նոտարական կարգով վարձակալության պայմանագիր կնքելուց:

Հողի և անասնագոմի սեփականության անհասանելիություն. Տեղահանվածների մեծ մասը Հայաստանում չի կարող հող կամ անասնագոմ ձեռք բերել, քանի որ ՀՀ-ում սեփականության իրավունքով գյուղատնտեսական նշանակության հողամաս կարող են ձեռք բերել միայն ՀՀ քաղաքացիները:

Լիզինգի սահմանափակ հնարավորություններ. Գյուղատնտեսության ոլորտում բիզնես հիմնելու համար լիզինգային ծրագրերում տեղահանված անձանցից սովորաբար պահանջում են 40%-ից ոչ պակաս կանխավճար, մինչդեռ նույն պայմաններում ՀՀ քաղաքացիների համար որպես կանխավճար սահմանված է գումարի 20%-ը:[78]

Տնտեսական գործունեություն իրականացնելու այլ խոչընդոտներ

Կարողությունների խնդիրներ. Որոշ տեղահանված անձինք միջազգային կազմակերպությունների դրամաշնորհային ծրագրեր են շահել բիզնես-գործունություն ծավալելու համար, սակայն հիմնականում չեն հաջողել, հատկապես գյուղատնտեսական

[78] Պետական աջակցության ծրագրերի իրազեկման հարթակ, «Գյուղտեխնիկայի լիզինգի աջակցության ծրագիր», https://irazekum.am/event/view/35, դիտված՝ 08.11.2024 թ.:

ոլորտում: Այդ ծախողումները հաճախ կապված են անբավարար իրազեկության ու կարողությունների հետ, որոնց աճին միտված հարակից ծրագրերի բացակայությունը նվազեցնում է հաջողության հնարավորությունը:

Տեղափոխված գյուղատնտեսական տեխնիկայի նկատմամբ սեփականության իրավունքը. Արցախից տեղահանված անձանց մի մասը կարողացել է իրեն պատկանող գյուղատնտեսական տեխնիկան տեղափոխել Հայաստան, բայց բախվում է փաստաթղթային խնդիրների, քանի որ չի կարողանում ապացուցել տեխնիկայի նկատմամբ սեփականություն իրավունքը:

Շինարարարական ընկերությունների մասնակցություն գնումների մրցույթներին. ԼՂ-ում գործունեություն ծավալած շինարարական կազմակերպությունները ՀՀ-ում շինարարական տենդերների մասնակցելու ընթացքում հանդիպում են դժվարությունների՝ կապված պետական գնումներում հայտի ապահովման նպատակով բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի վճարման պահանջի կատարման հետ:

Սկսնակ ձեռնարկությունների աջակցության բացակայություն. Ներկայումս չկան աջակցության պետական ծրագրեր, որոնք նախատեսված կլինեն տեղահանված անձանց կողմից առաջարկված նոր նախաձեռնությունների համար:

Միջամտություն գործունեությանը՝ քաղաքական դիրքորոշումների պատճառով. Պնդումներ կան այն մասին, որ որոշ արցախցիների՝ ընդդիմադիր գործունեության և գործող իշխանության դեմ հանրահավաքներին ակտիվ մասնակցության պատճառով որոշ պետական մարմիններ խոչընդոտում են նրանց տնտեսական գործունեությանը:

Անբավարար իրազեկվածություն

Իրազեկման բացեր. Հատկապես գյուղական համայնքներում ապրող և նախկինում գյուղատնտեսությամբ զբաղված մարդիկ հաճախ տեղյակ չեն գոյություն ունեցող տնտեսական աջակցության ծրագրերի մասին:

Առաջարկություններ

Նշված մարտահրավերների հիման վրա առաջարկվում են հետևյալ միջոցառումները.

Պետության միջնորդություն՝ ֆինանսական կառույցների հետ հարաբերություններում

Վարկերի հասանելիություն. Բռնի տեղահանված անձանց, ֆինանսական հաստատությունների հետ բանակցությունների միջոցով ապահովել վարկերի հասանելիությամբ և վերանայել ԼՂ-ում անշարժ գույքը թողնելու հետևանքով ձևավորված բացասական վարկային պատմությունը: Ապահովել նաև արցախցիների՝ ավանդներով ապահովագրված վարկերի գումարի ներումը առևտրային բանկերի կողմից, ըստ անհրաժեշտության՝ պետության կողմից փոխհատուցման միջոցով: Նախատեսել ցածր տոկոսադրույքով վարկերի տրամադրում նորաստեղծ փոքր ձեռնարկություններին:

Տնտեսական փորձի հաշվառում. Տեղահանված անձանց՝ ԼՂ-ում ունեցած տնտեսական փորձը և գյուղատնտեսական գործունեությունը դիտարկել որպես հնարավորություն՝ վարկերի տրամադրման համար:

Պետական երաշխիքով փոքր բիզնեսների վարկավորում. Պետական երաշխիքի միջոցով աջակցել փոքր բիզնես-ծրագրերի վարկավորմանը:

Արտոնությունների սահմանում

Աջակցություն փորձ ունեցող ձեռներեցներին. Մշակել հատուկ ծրագրեր՝ Երևանում և մարզերում տեղահանված անձանց բիզնեսների վերաբացման համար, որոնք կներառեին թե՛ ՀՀ հարկային դաշտի և բիզնես սկսելու ընթացակարգերին ուսուցողական նպատակով ծանոթացում, թե՛ որպես նախնական կապիտալ դրամաշնորհների և սուբսիդիաների տրամադրում՝ գործիքների և սարքավորումների ձեռք բերման կամ տարածքի վարձակալության նպատակով:

Հարկային արտոնություններ նոր բիզնեսների համար. Բռնի տեղահանված անձանց հիմնած նոր բիզնեսներին տրամադրել ժամանակավոր հարկային արտոնություններ՝ տնտեսական զարգացումը խթանելու համար:

Ֆինանսական աջակցություն գյուղատնտեսական գործունեության համար. Տեղահանվածներին որոշակի ժամանակահատվածով տրամադրել սուբսիդիաներ՝ պետության համար առաջնահերթ գյուղատնտեսական ոլորտներում, փոքր դրամաշնորհներ կամ բնաիրային աջակցություն՝ սարքավորումների, գյուղատնտեսական գործիքների, անասնագլխաքանակի տեսքով:

Արտոնությունների տրամադրում սահմանամերձ բնակավայրերում բնակեցված անձանց. Տեղահանվածներին պետական աջակցության ծրագրերով տրամադրել սահմանամերձ բնակավայրերի բնակիչների համար նախատեսված արտոնություններին հավասարեցված արտոնություններ:[79]

Երիտասարդներին աջակցություն. Տեղեկատվական տեխնոլոգիաների և այլ ոլորտներում ձեռնարկատիրական գործունեություն սկսելու նպատակով երիտասարդների համար նախատեսել ստարտափ ծրագրերի դրամաշնորհներ:

Տնտեսական գործունեությունը խթանելուն ուղղված այլ քայլեր

Տնտեսական ներուժի մոնիտորինգ և ոլորտային զարգացման ծրագրերի մշակում. Իրականացնել բռնի տեղահանված անձանց տնտեսական պոտենցիալի և կարիքների գնահատում և մշակել թիրախային ծրագրեր՝ հաշվի առնելով նրանց ելակետային վիճակը, ոլորտային փորձը և նախատեսելով որոշ արտոնյալ պայմաններ:

Բնակարանային ապահովման և տնտեսական գործունեության աջակցության ծրագրերի փոխկապակցում. Կապ ստեղծել բնակարանային ապահովման և գյուղատնտեսական ծրագրերի միջև՝ խթանելով վարձակալության հնարավորությունները և պետության աջակցությունը, ինչը թույլ կտար տեղահանված անձանց՝ ներգրավվել գյուղատնտեսական գործունեության մեջ:

79 «Սահմանամերձ համայնքներում սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենք, 01.12.2014 թ., https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=186172 դիտված՝ 22.10.2024 թ.:

Հողի վարձակալության նախապատվություն. ՀՀ համայնքների պահուստային հողատարածքների վարձակալության գործընթացում նախապատվությունը տալ սեփականություն չունեցող տեղահանված անձանց:

Գյուղական կոոպերատիվների ստեղծում. Դիտարկել գյուղական կամ համայնքային կոոպերատիվների ստեղծման հնարավորությունը բռնի տեղահանված անձանց համար և տրամադրել մասնագիտական ու ֆինանսական աջակցություն:

Հատուկ դասընթացների կազմակերպում. Ֆինանսական գրագիտությանն ուղղված դասընթացների միջոցով խթանել տեղահանված անձանց իրազեկվածությունը և հասանելի ռեսուրսների վերաբերյալ տեղեկացվածությունը, ինչպես նաև դրանց համար դիմելու ընթացակարգերի վերաբերյալ գիտելիքների ձեռքբերումը:

Պատշաճ իրավեկում

Իրավեկման միջոցառումներ. Իրականացնել տեղեկատվական արշավներ՝ հատկապես գյուղական համայնքներում բնակվող և նախկինում գյուղատնտեսությամբ զբաղված մարդկանց աջակցություն ստանալու հնարավորությունների մասին իրազեկելու նպատակով:

Ը. Բռնի տեղահանված անձանց աջակցության ընդհանուր կառավարումը

քաղաքականության համառոտագիր

Ամփոփում

2023 թվականի սեպտեմբերին ԼՂ-ից զանգվածային բռնի տեղահանման արտակարգ իրավիճակում ՀՀ կառավարության օպերատիվ արձագանքմանը հաջորդեցին խնդիրների երկարաժամկետ լուծումներին միտված ծրագրեր, որոնց նպատակն էր՝ նպաստել բռնի տեղահանված անձանց Հայաստանի Հանրապետությունում ինտեգրելուն, նրանց պատշաճ կենսամակարդակի ապահովմանը և դիմակայունության խթանմանը: Չնայած ՀՀ կառավարության ձեռնարկած ջանքերին ու ծրագրերին՝ տեղահանումից մեկ տարի անց արցախցիների մեծ մասը շարունակում է բախվել այնպիսի խնդիրների, ինչպիսիք են՝ ֆինանսների անբավարարությունը, կացարանի բացակայությունը, գործազրկությունը, անորոշ իրավական կարգավիճակը, հետագա կյանքը երկարաժամկետ պլանավորելու անհնարինությունը:

Հայաստանում արցախցիների ինտեգրման քաղաքականության հիմքում պետք է դրվի ոչ թե աջակցության ծրագրերում ներառվելու համար նախապայմանների և ՀՀ քաղաքացիության պահանջի առաջադրումը կամ հարկադրանքի տարրեր պարունակող նման այլ միջոցները, Արցախի խնդիրը բավարար չկարևորելը, այլ կառավարման բոլոր մակարդակներում խնդիրների ու առանձնահատկությունների ճանաչումը, վստահության հիմքերի ձևավորումը, հարաբերությունների հաստատումը, հոգատար ու նրբանկատ վերաբերմունքի դրսևորումը և իրավունքների պաշտպանության երաշխավորի դերի ստանձնումը:

Հետազոտությամբ բացահայտված խնդիրների զգալի մասը պայմանավորված է ընդհանուր կառավարման բացերով ու թերացումներով կամ վերաբերելի է առանձին ոլորտներում ծառայությունների մատուցմանը: Առաջարկվում է ՀՀ կառավարության համար առաջնահերթ և հրատապ դարձնել բռնի տեղահանված անձանց համար արժանապատիվ կենսապայմանների ստեղծման և իրավունքների երկարաժամկետ պաշտպանությանն ուղղված քաղաքականությունը և սեղմ ժամկետներում լուծումներ տալ վերհանված խնդիրներին՝ Հայաստանից արցախցիների հարկադրված արտագաղթը կանխելու նպատակով: Միաժամանակ, անհրաժեշտ են լրջագույն, համապարփակ և համակարգային միջոցառումներ՝ ընդհանուր կառավարման իրավիճակո ու ոլորտային քաղաքականությունները բարելավելու և Հայաստանի բնակչության համար բարենպաստ կենսամիջավայր ապահովելու նպատակով:

Հիմնախնդիր

Տուն, ունեցվածք, հայրենիք ու հարազատներ կորցրած, ծանր հոգեբանական վիճակում և անորոշության մեջ գտնվող բռնի տեղահանված արցախցիների համար մեկ տարուց ավելի տևող անհստակությունը և աղքատությունը, ինչպես նաև ավելի լավ ապագայի տեսլական չունենալը հանգեցնում են հիասթափության ու անվստահության, խորացնում են օտարության զգացողությունը և խոցելիությունը, ստիպում մտածել Հայաստանը լքելու մասին:

ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց առջև ծառացած տևական խնդիրների ակունքում հանրային կառավարման ընդհանուր համակարգային բացթողումներն են, մասնավորապես՝

աջակցության ծրագրերի մշակման ոչ մասնակցային ու ոչ ներառական գործընթացները, վերհանված ընթացիկ խնդիրների ոչ լիարժեք ու ոչ համակարգային լուծումը, բյուրոկրատական քաշքշուկը, շահառու համայնքի հետ թերի հաղորդակցությունը, անբավարար իրազեկումը, խնդիրներին անդրադառնալու խողովակների բացակայությունը, վերհանված խնդիրներին դանդաղ արձագանքը, պատշաճ մոնիտորինգի բացակայությունը և այլն:

Հարկ է նշել, որ 2024 թ. սեպտեմբեր-հոկտեմբերին արցախցիների բարձրացրած խնդիրների էական մասը քաղհասարակության կողմից վերհանվել ու դեռևս 2024 թ. մարտ ամսին բանավոր ու գրավոր ներկայացվել է ՀՀ կառավարությանը, սակայն դրանց պատշաճ ընթացք չի տրվել, և բարձրաձայնված խնդիրները լուծելու ուղղությամբ առաջընթացը տեսանելի չէ: Ուստիև, խնդիրները արմատավորվել ու ծավալվել են, իսկ բռնի տեղահանված անձանց հիասթափությունը՝ ավելացել:

Մարտահրավերներ

Հետազոտության արդյունքում վերհանվել են հետևյալ խնդիրները.

Ռազմավարության բացակայության խնդիրներ

Տեսլականի բացակայություն. Փորձելով արձագանքել տեղահանված անձանց տարբեր խնդիրներին՝ ՀՀ կառավարությունը առանձին ոլորտային ծրագրերի ու միջոցառումների միջոցով դրանց տվել է կարճաժամկետ և իրավիճակային լուծումներ՝ ընդհանուր և կուռ տեսլականի բացակայության պայմաններում: Դրա հետևանքով ծրագրերը երբեմն թերի համակարգված են և փոփոխական: Որոշ կարևորագույն ծրագրեր (օրինակ՝ 40,000+10,000 ՀՀ դրամ ֆինանսական աջակցությունը կամ բնակարանային ծրագիրը) թերի են լուսաբանվել և հընթացս փոփոխվել են, ինչը տեղահանվածներին անհանգստություն և հուսահատություն է պատճառել: Ինչպես հարկն է՝ հաշվի չեն առնվել խոցելի և առանձնահատուկ խմբերի կարիքները:

Համապարփակ մոտեցման բացակայություն. Կառավարության կողմից տրամադրվող աջակցության (մասնավորապես՝ բնակարանային և զբաղվածության կամ տնտեսական զարգացման) ծրագրերը համադրված և փոխկապակցված չեն, ինչի հետևանքով շատ արցախցիներ չեն կարողանում կայուն հաստատվել և նոր կյանք կառուցել, և շարունակական փնտրտուքի մեջ տեղափոխվում են մարզից մարզ՝ որպես կանոն ձգտելով դեպի Երևան կամ մարզկենտրոններ, որտեղ ուսուցման ու աշխատանքի համար կան ավելի մեծ հնարավորություններ:

Դոնորների աջակցության կազմակերպման խնդիրներ. Առկա են մտահոգություններ դոնորների կողմից տրամադրվող կամ նախատեսվող աջակցության հասցեականության և նպատակայնության, միևնույն շահառուներին օգնելու և, միաժամանակ, ոմանց անտեսելու, մեծ գումարներ ոչ նպատակային վատնելու առումով, ինչը լրացուցիչ խորացնում է կառավարության ջանքերի նկատմամբ անվստահությունը:

Փաստաթղթերի հետ կապված խնդիրներ

Փաստաթղթերի ձևակերպման դժվարություններ. Տեղահանված անձանցից շատերը չունեն աջակցության ծրագրերում ներգրավվելու համար պահանջվող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, ուստի, ստիպված են լինում փաստաթղթերի վերականգնման, մասնագիտական փորձի ու իրավաբանական նշանակություն ունեցող այլ փաստերի ճանաչման և այլ հարցեր լուծելու նպատակով գնալ մի կառույցից մյուսը և հայտնվել բյուրակրատական քաշքշուկի մեջ:

Մարզերում առանձին ծառայությունների պակաս. Տեղահանված անձինք մարզերից հաճախ ուղղորդվում են Երևան՝ անհրաժեշտ փաստաթղթերը վերականգնելու համար, ինչպիսիք են՝ ծննդյան կամ ամուսնության վկայականները, քանի որ շատ հաճախ տեղում դա հնարավոր չէ անել: Միաժամանակ, ԱՍՀՆ-ն և իրավասու ստորաբաժանումները ԼՂ-ում հաշվառման կամ աշխատանքային ստաժի ապացուցման նպատակով հաճախ կապ են հաստատում ԼՂ տվյալ համայնքի նախկին ղեկավարների հետ՝ նրանց կողմից ստորագրված տեղեկանքներն ընդունելով որպես ապացույց (օրինակ՝ աշխատանքային ստաժի հաստատման համար):

Դատարան դիմելու անհրաժեշտություն. Անբավարար վարչարարության և դրա նկատմամբ թերի վերահսկողության պատճառով անձինք հաճախ ստիպված են լինում դիմել դատարան՝ իրենց իրավունքները պաշտպանելու, իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի ճանաչման համար, ինչը լրացուցիչ անհամաչափ բեռ է ինչպես տեղահանվածների, այնպես էլ դատական համակարգի համար:

Ծառայությունների որակի խնդիրներ

Մարդկային ռեսուրսների պակաս. ՄՍԾ տարածքային կենտրոններում և անձնագրային բաժանմունքներում մարդկային ռեսուրսի քանակը և/կամ որակը բավարար չեն բռնի տեղահանվածներին պատշաճ սպասարկելու համար, ինչն ուղղակի ազդում է ծառայությունների որակի վրա՝ բազմաթիվ դիմումներ թողնելով անպատասխան, տրամադրելով անորոշ կամ ուշացած պատասխաններ, ստիպելով մարդկանց՝ ամիսներով սպասել: Հաճախ երկկողմ հաղորդակցությունն արդյունավետ չէ լեզվական կամ բարբառային խոչընդոտների պատճառով:

Իրավական գիտելիքների պակաս. ՄՍԾ աշխատողների մեծ մասը համակարգչային ծրագրի սպասարկողներ են և հաճախ չունեն բավարար իրավական գիտելիք, ինչը խանգարում է նրանց՝ ճիշտ ընկալել խնդիրները, ուղղորդել դիմումատուներին և պատշաճ պատասխանել բարդ հարցերին: Մասնավորապես, ոչ ստանդարտ խնդիրներով արցախցիները հաճախ չեն ստանում պատշաճ ծառայություն, իսկ նրանց դիմումները մերժվում են: Վիճակը հատկապես անբարենպաստ է մարզերի տարածքային կենտրոններում:

Վարչական մարմինների կողմից անհատական մոտեցման պակաս. Վարչական մարմինները (անձնագրային բաժանմունքներ, ՄՍԾ տարածքային կենտրոններ, կադաստրի սպասարկման գրասենյակներ) հաճախ դիմումներն ուսումնասիրում են ձևականորեն՝ առանց անհատական մոտեցման, ինչը խոցելի մարդկանց մոտ առաջացնում է դժգոհություն և հուսահատություն:

Նոտարական և կադաստրի ծառայությունների վատ աշխատանք. Այս ծառայությունները հաճախ թերի են աշխատում, սխալ տեղեկություններ են հաղորդում, ինչը խնդիրներ է

ստեղծում տեղահանված անձանց համար, որոնք գույքի հետ կապված հարցերով ունեն նոտարական կամ կադաստրային ծառայությունների կարիք:

Խտրականության դրսևորումներ. Թեև հանրային կառույցները տեղահանված անձանց հիմնականում ցուցաբերում են հոգատար և աջակցող վերաբերմունք, սակայն պատահում են նաև խտրականության դրսևորումներ: Նույնիսկ փոքրաթիվ դրսևորումների պարագայում դեպքերի մասին լուրերն արագ տարածվում և արձագանք են գտնում խոցելի անձանց այս հանրույթում:

Սպասարկող հեռախոսահամարների ոչ արդյունավետ աշխատանք. ՄՍԾ տարածքային կենտրոնների հեռախոսահամարները, ինչպես նաև ԱՍՀՆ թեժ գիծը՝ 114-ը, հաճախ չեն արձագանքում, ինչի հետևանքով տեղահանված անձինք ստիպված են լինում այցելել ՄՍԾ տարածքային կենտրոններ և/կամ ներկայացնել գրավոր դիմումներ տեղեկատվություն ստանալու համար՝ արդյունքում լրացուցիչ ծանրաբեռնելով այս կառույցների աշխատանքը:

Հանրային հաղորդակցության խնդիրներ

Որոշումների ընդունման գործընթացում շահագրգիռ կողմերի անտեսում. Կառավարության կողմից առաջարկվող ծրագրերի թերացումները հաճախ պայմանավորված են որոշումների ընդունման ոչ ներառականությամբ: Բռնի տեղահանված անձինք, նրանց խմբերը, ներկայացուցիչները, ինչպես, օրինակ՝ տարբեր հանրային գործիչները, Արցախի համայնքների ղեկավարները և/կամ տեղական այլ գործիչները, որոնք ակտիվ պահպանում են կապն իրենց համայնքների հետ և առավել ամբողջական տիրապետում են նրանց խնդիրներին, որևէ կերպ չեն ներգրավվում արցախցիներին վերաբերող որոշումների ընդունման գործընթացներում, պետական ծրագրերին առնչվող քննարկումներում ու խորհրդակցություններում, հաղորդակցության մեջ: Մինչդեռ ներառական մոտեցումը մեծապես կբարելավեր ծրագրերի, միջոցառումների ու ծառայությունների որակը և կբարձրացներ դրանց արդյունավետությունը՝ միաժամանակ կանխելով բազմաթիվ խնդիրներ ու բողոքներ:

Իրազեկման միջոցների և խողովակների անբավարար օգտագործում. ՀՀ կառավարության ծրագրերը պատշաճ չեն լուսաբանվում և բացատրվում արցախցիներին: Օրենքների և կառավարության որոշումների բարդ իրավաբանական տեքստերը հանրամատչելի և պարզ ներկայացնելու համար ջանքեր չեն գործադրվում: Լուսաբանման առավել հաճախ օգտագործվող մեթոդը հարցազրույցներն են, որոնք տարբեր լրահոսներում ուշադրությունից դուրս են մնում: Տեղահանված անձինք պետական աջակցության կամ դրանց մանրամասների մասին ստիպված տեղեկանում են բանավոր՝ միմյանցից, իրենց նախկին համայնքների ղեկավարներից/աշխատակազմերից կամ իրազեկ այլ հայրենակիցներից, որոնք տեղեկատվության առավել վստահելի, հասկանալի և հոգատար աղբյուր են և քիչ թե շատ հասկանում են օրենքների և կառավարության որոշումների խրթին լեզուն: Շատերն իրազեկ չլինելով՝ շարունակում են կապ հաստատել արդեն դադարեցված «ԼՂ օպերատիվ շտաբի» հետ և ծանոթանալ դրա կայքէջի հնացած տեղեկատվությանը:

Արդյունավետ մոնիտորինգի ու գնահատման համակարգի բացակայություն

Կարիքների ոչ բավարար գնահատում. Տեղահանված բնակչության կարիքները պատշաճ չեն գնահատվել, ինչը հանգեցրել է նրան, որ տեղական ինքնակառավարման մարմինների և տարբեր կազմակերպությունների աջակցությունը հաճախ տրամադրվում է այն անձանց,

որոնք դրա կարիքն ավելի քիչ ունեն, մինչդեռ իրական դժվարությունների առջև կանգնած ընտանիքները կամ չեն ստանում, կամ ստանում են փոքր աջակցություն:

Աջակցության ծրագրերի համապարփակ մոնիտորինգի ու գնահատման թերացում. Չկան համապարփակ մոնիտորինգի և գնահատման, այդ թվում՝ հետադարձ կապի և վիճակագրական համակարգեր՝ պետական ծրագրերի ընթացքը և արդյունավետության աստիճանը հսկելու, ինչպես նաև շահառուների վիճակի փոփոխություններին հետևելու համար, որը հնարավորություն կտար ժամանակին վերհանել խնդիրները և ծրագրերում կատարել փոփոխություններ, ժամանակին արձագանքել արցախցիների կարիքներին:

Ընդհանուր բնույթի ոլորտային խնդիրներ

Հետազոտության մասնակիցները վերհանել են առանձին ոլորտային խնդիրներ, որոնք վերաբերում են ոչ միայն բռնի տեղահանված անձանց, այլև ընդհանուր են, սակայն արցախցիների պարագայում դրանք առաջացնում են լրացուցիչ խոցելիություն: Մատնանշված հիմնական խնդիրներից են՝ սոցիալապես անապահով ընտանիքների կամ անձանց կացարանների խնդիրը, առողջապահական որոշ ծառայությունների անհասանելիությունը, անբարենպաստ կրթական միջավայրը, դրամահավաքները դպրոցներում, մարզային բնակավայրերի գրավչության բացակայությունը, հեռավոր բնակավայրերի հետ տրանսպորտային վատ հաղորդակցությունը և այլն:

Առաջարկություններ

Նշված մարտահրավերների հիման վրա առաջարկվում են հետևյալ միջոցառումները.

Երկարաժամկետ և համապարփակ աջակցության ռազմավարություն

Ռազմավարության մշակում և իրականացում. Մշակել ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց Հայաստանում ինտեգրելու երկարաժամկետ ու համապարփակ ռազմավարություն և դրա իրականացման միջոցառումների ծրագիր՝ ապահովելով ինչպես անմիջական պաշտպանություն, այնպես էլ երկարաժամկետ ինտեգրման հնարավորություններ: Ռազմավարությունը պետք է ներառի կայուն և փոխկապակցված (սինխրոնացված) համակարգային լուծումներ բնակարանային, զբաղվածության, տնտեսական զարգացման և սոցիալական ինտեգրման համար՝ հաշվի առնելով և՛ այսօրեական, և՛ ապագա կարիքները: Ռազմավարության իրականացման միջոցառումների ծրագիրը պետք է առնվազն տարին մեկ անգամ վերանայվի՝ հիմք ընդունելով մոնիտորինգի և գնահատման արդյունքները: Բոլոր փուլերում ռազմավարությանն առնչվող որոշումները պետք է ընդունվեն շահագրգիռ կողմերի հնարավորինս լայն ներգրավմամբ:

Դոնորական աջակցության համակարգում. Մշակել միջազգային և տեղական դոնորների աջակցությունը տեղահանված անձանց վերաբերյալ տեղեկատվության փոխանակման միջոցով համակարգելու մեխանիզմ՝ հնարավորինս բացառելով անհարկի համընկնումները, անհամաչափ աջակցությունը և կարիքավորների անտեսումը: Դիտարկել դոնորների համաժողովի կազմակերպման հնարավորությունը, որտեղ կներկայացվեն բռնի տեղահանվածների խնդիրները, առաջնահերթությունները, հնարավոր աջակցության ծրագրերը, կներկայացվեն հաշվետվություններ՝ արդեն իսկ արված աշխատանքի վերաբերյալ, կհամակարգվի հնարավոր հետագա աջակցությունը:

Թափանցիկության և հաշվետվականության ապահովում. Որոշակի պարբերականությամբ, այդ թվում առցանց եղանակով, համակարգված տեղեկանքներով, զեկույցներով, վիզուալ միջոցներով ներկայացնել տեղահանված անձանց աջակցությանն ուղղված ծախսերն ըստ աղբյուրների և արդյունքների՝ այդպիսով ապահովելով նաև ստացվող արտաքին օգնության կառավարման թափանցիկությունն ու հաշվետվականությունը:

Փաստաթղթային խնդիրների լուծում

Վարչարարության դյուրացում. Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման համար կիրառել հեշտացված ընթացակարգեր՝ նախատեսելով փաստաթղթերի ճանաչման արտադատական՝ վարչական կարգ ու սեղմ ժամկետներ:

Մարզերում ծառայությունների հասանելիության ապահովում. Մարզերում ընդլայնել գրանցումների և փաստաթղթերի վերականգման ծառայությունների հասանելիությունը, օրինակ՝ ներդնելով շարժական կամ էլեկտրոնային ծառայությունների տարբերակներ և թույլ տալով, որ տեղահանված անձինք առանց Երևան այցելելու օգտվեն ծննդյան, ամուսնության և այլ վկայականների ստացման կամ վերականգնման հնարավորություններից:

Անհատական մոտեցում. Խրախուսել բռնի տեղահանված անձանց դիմումների ուսումնասիրության ընթացքում յուրաքանչյուր դեպքը գնահատելիս վարչական մարմինների անհատական մոտեցումը և հնարավորինս դյուրացնել իրավաբանական նշանակություն ունեցող փաստերն արտադատական կարգով ճանաչելու հնարավորությունը, այդ թվում դիտարկելով հատուկ հանձնաժողովների ստեղծումը և ԼՂ նախկին համայնքների ղեկավարների կողմից տրամադրված փաստաթղթերի ընդունումը:

Ծառայությունների որակի բարելավում

Աշխատակազմի թիվ. Ավելացնել ՄՍԾ տարածքային կենտրոնների և անձնագրային բաժանմունքների՝ արցախցիներին ծառայություն մատուցող աշխատողների թիվը՝ հերթերը վերացնելու և կարիքներին արձագանքը բարելավելու նպատակով: Դիտարկել տեղահանված անձանց ՄՍԾ տարածքային կենտրոններում և անձնագրային բաժանմունքներում աշխատանքի (թեկուզ ժամանակավոր, քաղաքացիաիրավական պայմանագրով) ընդունելու հնարավորությունը՝ բարբառային կամ լեզվական դժվարությունները հաղթահարելու, արցախցիների հետ հաղորդակցումը դյուրացնելու և ընթացակարգերն ու ծառայությունները մատչելի դարձնելու նպատակով՝ առավել ևս հաշվի առնելով Արցախում վերապատրաստված սոցիալական աշխատողների զգալի ռեսուրսի առկայությունը:

Աշխատակազմի կարողություններ. Բարելավել ՄՍԾ և անձնագրային բաժանմունքների աշխատակիցների կարողությունները՝ տեղահանված անձանց ճիշտ ուղղորդելու, նրանց խնդիրներին հնարավորինս արդյունավետ արձագանքելու և որակյալ ծառայություն մատուցելու նպատակով՝ կազմակերպելով իրավական թեմաներով դասընթացներ իրավական ակտերով սահմանված պահանջների և ընթացակարգերի վերաբերյալ:

Խտրականության դրսևորումների կանխում և արձագանքում. Պետական կառավարում իրականացնող ոլորտային իրավասու մարմինների կողմից հանձնարարականներ ուղարկել ենթակա բոլոր կառույցներին՝ ընդգծելով խտրականության ու ատելության խոսքի բացառման պարտավորությունը:

Հաղորդակցության բարելավում

Արդյունավետ հաղորդակցություն. Մշակել բռնի տեղահանվածների հետ արդյունավետ հաղորդակցման ռազմավարություն և պլան՝ նրանց կողմից ՀՀ կառավարության ծրագրերի և նրանց առջև ծառացող խնդիրների լուծման մեխանիզմների ճիշտ ընկալումը երաշխավորելու համար: Տեղեկատվությունը տրամադրել ոչ միայն ընդհանուր լրահոսների մեջ կորող հարցազրույցների ձևով, այլև հասցեական ու թիրախային, առավել ընկալելի ինֆոգրաֆիկայով, մուլտիմեդիա նյութերով, այդ թվում՝ Արցախի բարբառով: Տեղեկատվական նյութերում ՀՀ օրենսդրության՝ իրավաբանական խրթին լեզվով գրված տեքստերը ներկայացնել հանրամատչելի լեզվով՝ շարքային քաղաքացիների համար հասկանալի բառապաշարով:

Միասնական տեղեկատվական հարթակի ստեղծում. Արցախցիներին վերաբերող տեղեկատվությունն առավել մատչելի դարձնելու համար նախատեսել կենտրոնացված տեղեկատվական դյուրին (user-friendly) ինտերնետային հարթակի և հնարավորինս՝ բջջային հավելվածի մշակում և գործարկում:

Արդյունավետ կապի միջոց. Բռնի տեղահանված անձանց տրամադրվող աջակցության ծրագրերի և հումանիտար աջակցության համակարգման համար պատասխանատու փոխվարչապետի հսկողության ներքո հիմնել առանձնացված, միասնական, մշտապես հասանելի և անխափան աշխատող զանգերի կենտրոն՝ ներգրավելով ԼՂ բարբառին տիրապետող, իրավական առումով գրագետ և աջակցության ծրագրերի մասին մշտապես թարմացվող տեղեկությունների տիրապետող օպերատորներ, որոնք պատշաճ կպատասխանեն արցախցիների հարցերին՝ այդպիսով նաև կանխելով նրանց ավելորդ այցելությունները տարբեր վարչական մարմիններ:

Որոշումների ընդունման ներառականության ու մասնակցության ապահովում

Ներգրավում պետական կառավարման գործընթացներում. Տեղահանված անձանց ներկայացուցիչներին, այդ թվում՝ ԼՂ համայնքների ղեկավարներին և կազմակերպված խմբերին (հիմնադրամներ, հասարակական կազմակերպություններ), ինչպես նաև նրանց հետ աշխատող և աջակցություն տրամադրող հայաստանյան և միջազգային կազմակերպություններին ներգրավել արցախցիների հարցերին առնչվող պետական ռազմավարությունների, ծրագրերի, միջոցառումների մշակման, իրականացման և գնահատման գործընթացներում՝ ապահովելով արցախցիների կարիքների ու դիտարկումների հնարավորինս համապարփակ արտացոլումը քաղաքական որոշումներում:

Ներգրավում համայնքային կառավարման գործընթացներում. Մեծաթիվ բռնի տեղահանվածներ ունեցող համայնքներում համայնքների ղեկավարներին և/կամ ավագանիներին կից նախատեսել արցախցիների խորհրդակցական մարմինների ստեղծում, այդ թվում՝ կանանց, երիտասարդների ու հաշմանդամների ներգրավմամբ՝ խթանելով նրանց մասնակցությունը համայնքների կառավարման գործընթացներում և ինտեգրումը համայնքային կյանքում:

Ինտեգրման խթանում

Հակախտրական կրթություն. Իրականացնել խտրականության և ատելության խոսքի կանխման տեղեկատվական արշավ՝ այդ թվում արցախցիներին առնչվող այս կամ այն

խնդրի ներառմամբ: Խրախուսել խտրականության դրսևորումների կանխարգելումը կրթական-նախազգուշական միջոցներով, ազդարարումը և յուրաքանչյուր դեպքով պատշաճ քննությունը, կարգապահական պատասխանատվությունը, այդ թվում բարձրաստիճան հանրային պաշտոն զբաղեցնող անձանց, հանրային ծառայողների և հանրային ծառայություններ մատուցող հաստատություններում ներգրավված անձանց նկատմամբ՝ այդպիսով կանխելով նման երևույթի կրկնությունը և տարածումը:

Սոցիալական համերաշխության կառուցում. Մշակել, իրականացնել և հովանավորել ծրագրեր, որոնցով կստեղծվեն տեղացի ու տեղահանված երեխաների ու երիտասարդների շփման, համատեղ նախաձեռնությունների հարթակներ, և որոնք կօգնեն հաղթահարել շփման խոչընդոտները և կամրապնդեն արցախցիների ինքնավստահությունը հայաստանյան միջավայրում: Սոցիալական միջոցառումների (այդ թվում՝ սոցիալական բնակարանների, մանկապարտեզների ավելացման, զբաղվածության ծրագրերի) մշակման ժամանակ հաշվի առնել նաև տեղերում բնակվող սոցիալապես անապահով անձանց ու ընտանիքների խնդիրները՝ հնարավորինս բացառելով սոցիալական լարվածությունը տեղական բնակչության և տեղահանվածների միջև:

Արդյունավետ մոնիտորինգ և գնահատում

Ծրագրերի համապարփակ մոնիտորինգի համակարգ. Մշակել և ներդնել պետական աջակցության ծրագրերի մոնիտորինգի, ինչպես նաև՝ վիճակագրության վարման արդյունավետ մեթոդաբանություն և մեխանիզմներ: Դիտարկել բողոքների ներկայացման ու հաշվառման առցանց համակարգի, այդ թվում՝ շահառուների գոհունակության գնահատման միջոցով իրական ժամանակում մոնիտորինգ իրականացնելու հնարավորության ստեղծումը: Ծրագրերում ներգրավված մասնակիցների թվին, ներգրավվածությանը, գոհունակությանը, բողոքների քանակին ու բնույթին իրական ժամանակով հետևելու համակարգը հնարավորություն կտա հնարավորինս արագ գնահատելու աջակցության ծրագրերի ու միջոցառումների արդյունավետությունը, վեր հանելու խնդիրներն ու բացերը և շտկելու թերությունները:

Կարիքների համապարփակ մոնիտորինգի համակարգ. Անհրաժեշտ է կիրառել համապարփակ մոնիթորինգի մեխանիզմ՝ տեղահանված անձանց իրական սոցիալական կարիքները որոշակի պարբերականությամբ գնահատելու և դրանք պատշաճ բավարարելու համար, այդ թվում՝ խոցելի խմբերի համար նպատակային աջակցություն ներդնելու, տարբեր ծրագրերի համադրման արդյունավետությունը բարձրացնելու, դրանց նկատմամբ վերահսկողությունն ուժեղացնելու միջոցով:

Իրավունքների պաշտպանություն միջազգային հարթակներում

Իրավունքների պաշտպանություն միջազգային ատյաններում. Շարունակել և ակտիվացնել բռնի տեղահանված անձանց իրավունքների պաշտպանությունը միջազգային կառույցներում, դատական ատյաններում և դիվանագիտական հարթակներում: Հնարավորինս աջակցել արցախցիների կազմակերպված խմբերի և համայնքում հարգված ներկայացուցիչների օտարերկրյա այցելություններին, ելույթներին և միջոցառումներին, որոնք միտված են հանրայնացնելու Արցախի էթնիկ զտմանն առնչվող խնդիրները:

Ունեցվածքի գույքագրում. Կազմակերպել և իրականացնել բռնի տեղահանված անձանց՝ Արցախում թողնված ունեցվածքի գույքագրում, որն անհրաժեշտ է նրանց իրավունքները

դատական կարգով պաշտպանելու համար, այդ թվում՝ նպաստելով նրանց վերադարձի իրավունքի հիմնավորմանը:

Ընդհանուր բնույթի ոլորտային առաջարկություններ

Սոցիալապես անապահով ընտանիքների բնակարանային խնդիրների լուծում. Մշակել և իրականացնել սոցիալական բնակֆոնդի զարգացման ծրագիր՝ անապահով և անտուն անձանց համար կացարանների առկայությունը երաշխավորելու համար:

Սոցիալապես անապահով անձանց համար առողջապահական ծառայությունների ապահովում. Կենսական անհրաժեշտության թանկարժեք դեղորայքի, հետազոտությունների ու միջամտությունների դեպքում պետպատվերի շրջանակներում լրացուցիչ աջակցել սոցիալապես անապահով խոցելի խմբերին:

Նախադպրոցական հաստատությունների հասանելիություն. Ավելացնել մանկապարտեզների թիվը՝ երեխաների կրթությունը և վաղ տարիքից սոցիալական միջավայրում ինտեգրվելու հնարավորությունը, ինչպես նաև ծնողների աշխատանքի տեղավորվելու հնարավորությունն ապահովելու նպատակով:

Հանրակրթության որակ. Իրականացնել հանրակրթական հաստատություններում պատշաճ կրթական միջավայր, վարք ու փոխհարաբերություններ ապահովելուն միտված քաղաքականություն: Ձեռնարկել միջոցառումներ՝ դրամահավաքների պրակտիկային վերջ դնելու ուղղությամբ: Դպրոցներում երաշխավորել անվճար դասագրքերի առկայությունը: Ձեռնարկել քայլեր՝ երեխաներին պատշաճ պայմաններում դպրոց փոխադրելու համար տրանսպորտային հաղորդակցություն ապահովելու ուղղությամբ:

Արտերկրում սովորող ուսանողների աջակցություն. Արտերկրի բարձրակարգ ուսումնական հաստատություններում բարձրագույն կրթություն ստացող ուսանողներին պետական աջակցություն տրամադրելու հետ մեկտեղ ստեղծել նրանց Հայաստան վերադառնալու և որոշ ժամանակահատված, օրինակ՝ 5 տարի, տեղում աշխատելու, իսկ չվերադառնալու պարագայում մուծված ֆինանսական աջակցությունը փոխհատուցելու երաշխիքներ:

Աշխատանքային իրավունքների խախտումներ. Ձեռնարկել միջոցառումներ՝ աշխատանքային իրավունքների պաշտպանությունն ապահովելու համար:

Մարզային զարգացում. Իրականացնել մարզային բնակավայրերի գրավչության խթանմանը միտված հատուկ ծրագրեր՝ այդ թվում նախատեսելով հարկային արտոնություններ և առանձնահատուկ այլ պայմաններ: